



ԵՐՈՊԱԿԱՆ ԱՊՈՎՅՈՒՄԻ ԸՆԴՈՒՍՈՒՄ
EUROPEAN UNION FOR ARMENIA



Ճանապարհների պահպանություն

Շիրակի , Լոռու և Տավուշի 6 խոշորացված համայնքներում
մատուցվող ծառայությունների մոնիթորինգի զեկուլյց



Գյուլնրի 2019

Ուսումնասիրությունն իրականացվել է «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակում

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկեր կառույցների հետ, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

««Կոմպասս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ
Շիրակի մարզ, Ք. Գյումրի, Անկախության հրապ. 9^ա շ., 3-րդ հարկ, 301 սենյակ
Հեռ.՝ (+374) 312 6 01 00, (+374) 95 16 01 00, Էլ. փոստ՝ compassgyumri@gmail.com
Կայքէջ՝ <http://compass-center.org>

Բովանդակություն	
Կիրառված եզրույթներ	5
Համառոտագիր.....	6
Ներածություն	7
Գլուխ 1. Մոնիթորինգային աշխատանքների իրականացման մեթոդաբանություն	9
1.1 Հանրային ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատման տեսամեթոդական հիմքերը	9
1.2 Ներհամայնքային ճանապարհների սպասարկման իրավական պահանջները	12
1.3 Մոնիթորինգային աշխատանքների նպատակ եվ խնդիրներ	13
1.4 Մոնիթորինգային աշխատանքների մեթոդ եվ գործիքներ	14
1.5 Հետազոտության ընտրանք	15
1.6 Բնակավայրերի ներսում փողոցների ընտրությունը.....	18
1.7 Հարցման ենթարկված բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը.....	20
1.8 Դաշտային աշխատանքների կազմակերպում եվ որակի ստուգում.....	24
1.9 Հետազոտության սահմանափակումներ.....	24
Գլուխ 2. Մոնիթորինգային աշխատանքների արդյունքների վերլուծություն ըստ առանձին խոշորացված համայնքների	25
2.1 Ներհամայնքային ճանապարհների սպասարկումն ախուրյան խոշորացված համայնքում.....	25
2.1.1 Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում ախուրյան համայնքի տեխնիկական հնարավորությունները.....	25
2.1.2 Ախուրյան համայնքի բնակչության բավարարվածությունը ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայություններից.....	25
2.1.3 Ախուրյան խոշորացված համայնքում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	32
2.2 Ներհամայնքային ճանապարհների սպասարկումն աշոցք խոշորացված համայնքում	40
2.2.1 Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում աշոցք համայնքի տեխնիկական հնարավորությունները.....	40
2.2.2 Աշոցք համայնքի համայնքի բնակչության բավարարվածությունը ներհամայնքային ճանապարհների սպասարկումից.....	40
2.2.3 Աշոցք խոշորացված համայնքում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	48
2.3 Ներհամայնքային ճանապարհների սպասարկումը թումանյան խոշորացված համայնքում	54

2.3.1 Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում թումանյան համայնքի տեխնիկական հնարավորությունները.....	54
2.3.2 Թումանյան համայնքի բնակչության բավարարվածությունը ներհամայնքային ճանապարհների սպասարկումից.....	54
2.3.3 Թումանյան խոշորացված համայնքում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	61
2.4 Ներհամայնքային ճանապարհների սպասարկումը ստեփանավան խոշորացված համայնքում	66
2.4.1 Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում ստեփանավան համայնքի տեխնիկական հնարավորությունները.....	66
2.4.2 Ստեփանավան համայնքի բնակչության բավարարվածությունը ներհամայնքային ճանապարհների սպասարկումից.....	66
2.3.3 Ստեփանավան խոշորացված համայնքում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	72
2.5 Ներհամայնքային ճանապարհների սպասարկումը դիլիջան խոշորացված համայնքում	77
2.5.1 Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում դիլիջան համայնքի տեխնիկական հնարավորությունները.....	77
2.5.2 Դիլիջան համայնքի բնակչության բավարարվածությունը ներհամայնքային ճանապարհների սպասարկումից.....	77
2.5.3 Դիլիջան խոշորացված համայնքում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	84
2.6 Ներհամայնքային ճանապարհների սպասարկումը նոյեմբերյան խոշորացված համայնքում	88
2.6.1 Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում նոյեմբերյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը	88
2.6.2 Նոյեմբերյան համայնքի բնակչության բավարարվածությունը ներհամայնքային ճանապարհների սպասարկումից.....	88
2.6.3 Նոյեմբերյան խոշորացված համայնքում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	95
Գլուխ 3. Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում հանրային ծառայությունների մատուցման համեմատական վերլուծություն	101
3.1 Խոշորացված համայնքների միջեվ համեմատություն ըստ աղբահանության ոլորտում համայնքների տեխնիկական ապահովվածության	101
3.2 Խոշորացված համայնքների համեմատություն ըստ սուբյեկտիվ ցուցանիշների համադրության	102
առաջարկություններ եվ եզրակացություններ	Error! Bookmark not defined.
Գլուխ 4. Երեք խոշորացված համայնքներում ասֆալտբետոնե ծածկից վերցված խառնուրդների լաբորատոր փորձաքննության արդյունքներ	103

Գլուխ 5. Ֆինանսական հետազոտության արդյունքներն ըստ առանձին խոշորացված համայնքների.....	107
5.1 Շիրակի մարզի Ախուրյան եվ Աշոցք խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում	107
5.2 Տավուշի մարզի Դիլիջան եվ Նոյեմբերյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում	117
5.3 Լոռու մարզի Ստեփանավան եվ Թումանյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում	129
Գլուխ 6 Կլոր-սեղան (առանց հղումների իրավունքի) քննարկման արդյունքներ.....	138
Եզրահանգումներ և առաջարկություններ.....	140
Հավելված 1. Տնային տնտեսությունների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների հարցաթերթ	143
Հավելված 2. Ներհամայնքային ճանապարհների սպասարկման մոնիթորինգային ստուգաթերթ.....	147
Հավելված 3. Ախուրյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ	150
Հավելված 4. Դիլիջան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ.....	153
Հավելված 5. Նոյեմբերյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ	159
Հավելված 6. Թումանյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ	161
Հավելված 7. ստեփանավան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ.....	163

Կիրառված եզրույթներ

ՀամաԶարԿ	Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման կոալիցիա
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՏՏ	Տնային տնտեսություն

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«Մասնակցային մոնիտորինգ՝ հանուն իւելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագիրն իրականացվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ենթադրամաշնորհի շրջանակում՝ ««Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Ծրագրի շրջանակում 2018թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի 3 մարզերի 6 խոշորացված համայնքներում իրականացվել է հետազոտություն, որն ուղղված է եղել համայնքի կողմից մատուցվող մի շարք ծառայությունների որակի գնահատմանը, իրականացվող ծախսերի արդյունավետության գնահատմանը: Ծրագրում ներառված 3 մարզերն են Շիրակը, Լոռին, Տավուշը, որոնցից յուրաքանչյուրում համապատասխանաբար ընտրվել են երկու խոշորացված համայնքներ: Շիրակի մարզում՝ Ախուրյանը և Աշոցքը, Լոռվա մարզում՝ Ստեփանավանը և Թումանյանը, Տավուշի մարզում՝ Դիլիջանը և Նոյեմբերյանը:

Հետազոտության մոնիտորինգային մասն ուղղված է եղել ընտրված համայնքներում համայնքապետարանների կողմից մատուցվող **ներհամայնքային ճանապարհների սպասարկման** որակի գնահատմանը: Մոնիթորինգային մասը բաղկացած է երկու բաղադրիչներից: Առաջին բաղադրիչի շրջանակներում իրականացվել է մատուցվող ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատում, որի համար կիրառվել է քանակական դեմ առ դեմ հարցումների մեթոդը՝ քվոտային ընտրանքի հիման վրա: Ընդհանուր առմամբ իրականացվել է 902 հարցում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում խոշորացված համայնքներում իրականացվել է ներհամայնքային ճանապարհների որակի մոնիթորինգ: Խոշորացված համայնքների մաս կազմող բոլոր բնակավայրերում դիտարկման են ենթարկվել փողոցների երթևեկելի մասի ծածկույթը, մայթերը, եզրաքարերը, ջրահեռացման վաքերը, ճանապարհային նշանները և գծանշումները, փողոցի երկայնքով անվտանգության միջոցառումների իրականացումը, փողոցի մաքրությունը և բարեկարգվածությունը: Ընդհանուր առմամբ, դիտարկման ցանկում ներառված են եղել շուրջ 249 փողոցներ:

Ընտրված 6 խոշորացված համայնքներում պատահականության սկզբունքով ընտրվել են մեկական փողոցներ, որոնք հիմնանորոգվել կամ վերանորոգվել էին վերջին 1 ամսվա ընթացքում և ենթարկվել են լաբորատոր փորձաքննության՝ անկախ փորձագիտական ընկերությունում:

Հետազոտության ֆինանսական վերլուծության մասը ներառում է նշված 6 խոշորացված համայնքներում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում իրականացվող ծախսերի վերլուծությունը, համայնքներում ստեղծվող կապիտալ ֆոնդերի ձևավորումը և գնահատումը:

Հետազոտության շրջանակներում «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ իրականացվել է նաև Կլոր սեղան քննարկում («Chatham-house» ձևաչափով)՝ ոլորտային հիմնախնդիրների վերհանման և լուծումների նախանշման վերաբերյալ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16.12.2016 ընդունված օրենքի Հոդված 12-ի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիրների մեջ է մտնում համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը եւ շահագործումը: Այս ոլորտում հանրային ծառայությունների մատուցումը տեղական ինքնակառավարման մարմինների կարևոր գործառնություններից մեկն է և սովորաբար ներառված է համայնքային զարգացման ծրագրերում, սակայն համայնքապետարանները, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, չեն կարողանում լիարժեք իրականացնել այս ոլորտներում իրենց գործառնությունները: Ուստի, այս ոլորտում առանցքային խնդիրների վերհանումը, դրանց վերաբերյալ հանրային քաղաքականությունների մշակման, բարելավման աջակցությունը և մոնիթորինգի իրականացումը համայնքների զարգացման համար ունեն ռազմավարական նշանակություն, ինչին և ուղղված է սույն հետազոտությունը:

Հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքներում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտը և գնահատել համայնքների բնակիչների բավարարվածությունը համայնքապետարանների կողմից մատուցվող ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայությունների որակից, ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքների կողմից ոլորտում իրականացվող ծախսերի արդյունավետությունը:

1. Հետազոտության առջև դրված խնդիրները ներառում են հետևյալը՝

- 1) Բնակչության բավարարվածությունը ներհամայնքային ճանապարհների սպասարկումից,
- 2) Պարզել, թե որքանով են թիրախային համայնքների բնակիչները բավարարված ներբնակավայրային ճանապարհների ծածկույթի որակից,
- 3) Պարզել, թե որքանով են թիրախային համայնքների բնակիչները բավարարված ներբնակավայրային ճանապարհների սպասարկման աշխատանքներից,
- 4) Պարզել, թե որքանով են թիրախային համայնքների բնակիչները բավարարված ներբնակավայրային ճանապարհների երկայնքով ջրահեռացման համակարգի աշխատանքներից:

2. Մոնիթորինգի առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

- 1) Պարզել խոշորացված համայնքներում ընտրված փողոցների և մայրերի ծածկույթի կարգը և որակը,
- 2) Բացահայտել ընտրված խոշորացված համայնքների՝ ճանապարհների սպասարկման ապահովվածության աստիճանը,
- 3) Պարզել բազմաբնակավայր համայնքների ընտրված փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգի առկայությունը և վիճակը,
- 4) Ուսումնասիրել խոշորացված համայնքներում ընտրված փողոցների երկայնքով անվտանգության միջոցառումների ապահովվածության աստիճանը:

3. Ֆինանսական վերլուծության առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

- 1) Ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքներում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում կատարված ծախսերի կառուցվածքի դինամիկան 2014-2018թթ համար,
- 2) Վերլուծել ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում հատկացված միջոցների տեսակարար կշիռը բյուջետային ծախսերում,

- 3) Ուսումնասիրել ընտրված համայնքներում 1 բնակչին բաժին ընկնող ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում ծախսերի դինամիկան մինչև համայնքների խոշորացումը և դրանից հետո, կապիտալ բնույթի ծախսերը՝ մինչև խոշորանալը և խոշորանալուց հետո,
- 4) Ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքների միավորումից հետո ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների քանակի և որակի փոփոխությունը,
- 5) Բացահայտել ուսումնասիրվող 6 խոշորացված համայնքներում ճանապարհների որակն ու կառուցվածքը:

Մույն հետազոտության շրջանակում վերապատրաստվել են **34** քաղաքացի-մոնիթորներ: Մոնիթորինգի են ենթարկվել թվով **249** փողոցներ: Իրականացվել են **902** դեմ առ դեմ հարցումներ: Ուսումնասիրվել են **6** խոշորացված համայնքների կողմից ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում վերջին **4** տարիներին կատարված ծախսերի կառուցվածքն ու դինամիկան:

Հետազոտությունը բաղկացած է համառոտագրից, ներածությունից, 6 գլուխներից, եզրակացությունից, առաջարկներից և հավելվածներից:

ԳԼՈՒԽ 1. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳԵԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Համայնքային մակարդակում մատուցվող ծառայությունների վերաբերյալ բնակչության կողմից տրված գնահատականները հնարավորինս մոտ են առկա իրավիճակին, քանի որ այս ոլորտներին բնակիչները պարբերաբար են առնչվում իրենց առօրյա կյանքում: Ուստի, կարող ենք ենթադրել, որ այս ոլորտների վերաբերյալ բնակիչների տված գնահատականները հնարավորինս «օտարված» չեն առկա իրավիճակից և արտացոլում են համայնքներում առկա իրական իրավիճակը: Մակայն, կարող է այնպես ստացվել, որ մինևույն համայնքում բնակվող երկու հարևանները կարող են տեխնիկապես նույն բնութագրիչներն ունեցող համայնքային ծառայությունների վերաբերյալ տալ տարբեր գնահատականներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես վերջիններիս բնորոշ ենթամշակութային տարբերություններով, այնպես էլ տվյալ համայնքային ծառայությունը կարևորելու հանգամանքով: Ուստի, ուսումնասիրության ենթակա հանրային ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատման համար կիրառվել են բավարարվածության սուբյեկտիվ և օբյեկտիվ ցուցանիշներ:

Օբյեկտիվ ցուցանիշները վերաբերում են այս կամ այն համայնքային ծառայության մատուցման օբյեկտիվ պարամետրերին, օրինակ, ինչ պարբերականությամբ է մատուցվում տվյալ ծառայությունը, ինչ որակով, առկա են արդյոք խնդիրներ և այլն:

Սուբյեկտիվ ցուցանիշները վերաբերում են տվյալ ծառայություններից կամ վերջնական արդյունքում առկա իրավիճակից բնակչության գոհունակությանը: Ներհամայնքային ճանապարհների սպասարկման դեպքում, օրինակ, գյուղական բնակավայրերում կարող է պարզվել, որ համայնքապետարանը չի իրականացնում աղբահանություն, և համայնքի բնակիչներն իրենց աղբը կուտակում են յուրաքանչյուր տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրում: Տվյալ դեպքում կարող է ստացվել, որ համայնքի բնակիչները դժգոհ չլինեն ներհամայնքային ճանապարհների սպասարկման իրականացման այսպիսի տարբերակից, սակայն համայնքային ծառայությունների մատուցման տեսանկյունից Ներհամայնքային ճանապարհների սպասարկման այսպիսի կազմակերպումը կարող ենք համարել անբավարար:

Հաշվի առնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներին տրված գնահատականները՝ կարող ենք առանձնացնել չորս իրավիճակներ, որտեղ օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները կարող են համընկնել կամ չհամընկնել՝

1. **Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները դրական են:** Այս դեպքում հանրային ծառայությունները մատուցվում են բավարար որակով և բնակչությանը բավարարում են մատուցվող ծառայությունների որակը:
2. **Օբյեկտիվ ցուցանիշները դրական են, սուբյեկտիվ ցուցանիշները՝ բացասական:** Այս իրավիճակը նշանակում է, որ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակը կարող ենք համարել բավարար, սակայն բնակչությունը բավարարված չէ առկա իրավիճակով, ինչը նշանակում է, որ համայնքի բնակիչների շրջանում համայնքապետարանից ակնկալիքները ավելի բարձր են:

3. **Օբյեկտիվ ցուցանիշները բացասական են, սուբյեկտիվ ցուցանիշները՝ դրական:** Այս իրավիճակը նշանակում է, որ համայնքապետարանների կողմից չեն մատուցվում պատշաճ որակի հանրային ծառայություններ, սակայն բնակչությունը բավարարված է առկա իրավիճակով, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ բնակիչները չեն կարևորում պատշաճ հանրային ծառայությունների ստացումը և առկա ցածր որակի ծառայությունները կամ նույնիսկ նրանց բացակայությունը համարում են «բավարար»՝ չունենալով առավել լավ ծառայություններ ստանալու ակնկալիքներ:
4. **Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները բացասական են:** Այս իրավիճակը նշանակում է, որ հանրային ծառայությունների մատուցումը բավարար որակով չի իրականացվում և բնակչության շրջանում առկա է հիմնավորված դժգոհություն:

Նշված չորս իրավիճակները կարող ենք ներկայացնել մատրիցային տեսքով՝

Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների փոխհարաբերությունները		Սուբյեկտիվ ցուցանիշներ	
		Դրական	Բացասական
Օբյեկտիվ ցուցանիշներ	Դրական	(1) Ծառայությունների բարձր որակ	(2) Բարձր ակնկալիքներ
	Բացասական	(3) Բավարարվածության պարադոքս	(4) Ծառայությունների ցածր որակ

Աղյուսակ 1 Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների փոխհարաբերությունները

Կախված նրանից, թե հետազոտության արդյունքում նշված մատրիցայի որ իրավիճակը կբացահայտվի՝ հանրային ծառայությունների որակի բարելավմանն ուղղված առաջարկությունները կարող են տարբեր լինել: Օրինակ, 2-րդ իրավիճակի համար կարող ենք ենթադրել, որ հնարավոր է որ համայնքապետարանի կողմից չի իրականացվում պատշաճ հաղորդակցություն համայնքի բնակիչների հետ և վերջիններս իրազեկված չեն համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ: 3-րդ իրավիճակի համար կարող ենք առաջարկել բարձրացնել բնակչության իրազեկվածությունը համայնքապետարանի գործառնությունների շրջանակի վերաբերյալ և այլն:

Համայնքի բնակիչների բավարարվածության գնահատման համար յուրաքանչյուր սպասարկման ոլորտի դեպքում առանձնացվել են ոլորտի բաղադրիչներ, որոնց շուրջ էլ իրականացվել է գնահատումը (Աղյուսակ 2): Գնահատումը տարաբաժանվել է գլխավոր և երկրորդական փոդոցների համար:

Գնահատման բաղադրիչ	Գնահատման բաղադրիչի ցուցանիշ
Ներբնակավայրային ճանապարհների որակ և սպասարկում	<ul style="list-style-type: none"> ✓ Ներբնակավայրային ճանապարհի ծածկույթի վիճակ, առկայություն, ծածկույթի տիպ, որակ ✓ Ներբնակավայրային ճանապարհի երկայնքով մայթերի վիճակ: Առկայություն, բավարար լայնություն, որակ ✓ Ներբնակավայրային ճանապարհի երկայնքով ջրային հոսքի հեռացում: Ջրատարների առկայություն, որակ ✓ Ներբնակավայրային ճանապարհի մաքրման աշխատանքներ: Ձևամաքրում, մաքրում փոշուց և աղբից ✓ Ներբնակավայրային ճանապարհի երկայնքով անվտանգության ապահովում (քարաթափում/եթե կիրառելի է)

Աղյուսակ 2: Համայնքային ծառայությունների գնահատման բաղադրիչները

Համայնքային ծառայություններից բավարարվածության մակարդակների ներկայացման համար կիրառվել է հետևյալ որակական (կարգային) սանդղակը՝

- «Շատ բարձր», եթե տվյալ բաղադրիչի որակից «Լիովին բավարարված» կամ «Ավելի շուտ բավարարված» հարցվածների քանակը մեծ է կամ հավասար 80%-ի,
- «Բարձր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [60%; 80%) միջակայքում,
- «Միջին», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [40%; 60%) միջակայքում,
- «Ցածր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [20%; 40%) միջակայքում,
- «Շատ ցածր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [0%; 20%) միջակայքում:

1.2 ՆԵՐՇԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱԴԱՐՇՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇԱՆՋՆԵՐԸ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16.12.2016 ընդունված օրենքի Հոդված 12-ի համաձայն համայնքի պարտադիր խնդիրների մեջ է մտնում համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը եւ շահագործումը: Նույն օրենքի Հոդված 35-ի համաձայն համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթեւեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների մասով) եւ կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթեւեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթեւեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթեւեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ:

Հոդված 44-ի համաձայն համայնքի ղեկավարը տրանսպորտի բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

- 1) կազմակերպում է համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների, ճանապարհային երթեւեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը եւ շահագործումը.
- 2) իր իրավասության սահմաններում կազմակերպում է ճանապարհային անվտանգ երթեւեկությունը համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների վրա.

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը.

- 1) իրավասու մարմինների ներկայացմամբ հաստատում եւ թույլատրում է համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների երթեւեկության նշանների տեղակայումն ու հանումը: Երթեւեկության այն նշանները, որոնց տեղադրումը համաձայնեցված չէ համայնքի ղեկավարի հետ, իրավական ուժ չունեն:

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ապահովումը կատարվում է քաղաքաշինության նախարարի «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. հիմնական դրույթներ ՀՀՇՆ 10-01-2014» 2014թ. ապրիլի 25-ի N65-Ն հրամանով, որի ՀՀՇՆ IV-11.05.02-99 նորմերը տարածվում են ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների նախագծման և կառուցման վրա: Այս նորմատիվային փաստաթղթով կանոնակարգվում է ավտոմոբիլային ճանապարհների ամառային և ձմեռային սպասարկումը:

Ամառային սպասարկումը պետք է կատարել 4 ամիսը մեկ (օրինակ՝ մարտ-հուլիս-նոյեմբեր)

1. Երթեւեկելի մասի փոսային նորոգում: Եթե ճանապարհի քայքայվածությունը գերազանցում է հատվածի 60%-ը, ապա անհրաժեշտ է ընդհանուր պատվածքի վերանորոգում: Բացված ճաքերի ճաքալցում բիտումային էմուլսիայով (ավազի հետ):
2. Ճանապարհի կահավորում: Պակաս ճանապարհային նշանների համալրում, ազդանշանային սյուների և մետաղական արգելապատնեշների վերանորոգում:
3. Երթեւեկելի մասից, կողնակերից և մայրերից աղբի և փոշու մաքրում:

Ձևեռային սպասարկումը կատարվում անմիջապես ձևագոյացման դեպքում՝ վաղ առավոտյան ժ. 6⁰⁰ - ժ. 8⁰⁰ կամ ժ. 23⁰⁰ – ժ. 1⁰⁰՝ քիչ երթևեկելի ժամերին:

1.3 ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿՆԵՐԻ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքներում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտը և գնահատել համայնքների բնակիչների բավարարվածությունը համայնքապետարանների կողմից մատուցվող ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայությունների որակից:

Հետազոտության առջև դրված խնդիրները ներառում են հետևյալը՝

1. Բնակչության բավարարվածությունը ներհամայնքային ճանապարհների սպասարկումից

- 1.1 Պարզել, թե որքանով են թիրախային համայնքների բնակիչները բավարարված ներբնակավայրային ճանապարհների ծածկույթի որակից,
- 1.2 Պարզել, թե որքանով են թիրախային համայնքների բնակիչները բավարարված ներբնակավայրային ճանապարհների սպասարկման աշխատանքներից,
- 1.3 Պարզել, թե որքանով են թիրախային համայնքների բնակիչները բավարարված ներբնակավայրային ճանապարհների երկայնքով ջրահեռացման համակարգի աշխատանքներից:

2. Մոնիթորինգի առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

- 2.1 Պարզել խոշորացված համայնքներում ընտրված փողոցների և մայրերի ծածկույթի կարգը և որակը,
- 2.2 Բացահայտել ընտրված խոշորացված համայնքների՝ ճանապարհների սպասարկման ապահովվածության աստիճանը,
- 2.3 Պարզել բազմաբնակավայր համայնքների ընտրված փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգի առկայությունը և վիճակը,
- 2.4 Ուսումնասիրել խոշորացված համայնքներում ընտրված փողոցների երկայնքով անվտանգության միջոցառումների ապահովվածության աստիճանը:

1.4 ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հետազոտության իրականացման համար կիրառվել են երկու մեթոդներ՝ բնակչության շրջանում քանակական դեմ առ դեմ հարցման մեթոդը և ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի տարբեր բաղադրիչների դիտարկումը:

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտից բնակչության բավարարվածության գնահատման համար ընտրվել է բնակչության շրջանում **քանակական դեմ առ դեմ հարցման մեթոդը**: Մեթոդը նպատակահարմար է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտությունն ուղղված է խոշորացված համայնքների բնակչության լայն շերտերի կարծիքի ուսումնասիրությանը: Քանակական դեմ առ դեմ հարցումների իրականացման համար մշակվել և կիրառվել է կիսաձևայնացված հարցաթերթ (Հավելված 1): Հարցումներն անցկացվել են ծրագրի իրականացման շրջանակներում վերապատրաստված շուրջ 34 քաղաքացի-մոնիթորների կողմից:

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի այս կամ այն բաղադրիչի որակից բնակչության բավարարվածությունը չափվել է հարցաթերթային հարցերի հնարավորինս միասնական ձևակերպումներով և կիրառվել է միասնական սանդղակ, ինչը հնարավորություն է տալիս դուրս բերել բավարարվածության մեկ միասնական ինդեքս: Հարցվողների բավարարվածության չափման համար հետազոտությունում կիրառվել է Լայկերտի սանդղակի տիպի քառաստիճան, առանց միջին կետի սանդղակներ: Մասնավորապես, ներհամայնքային ճանապարհների սպասարկման այս կամ այն բաղադրիչից բնակչության բավարարվածության աստիճանի գնահատման համար կիրառվել է. «Որքանո՞վ եք բավարարված/որքանով եք գոհ ծառայություն/իրավիճակ/» հարցը, իսկ սանդղակը ստացել է հետևյալ բառային ձևակերպումը. 1. «Ընդհանրապես բավարարված չեմ», 2. «Ավելի շուտ բավարարված չեմ», 3. «Ավելի շուտ բավարարված եմ», 4. «Լիովին բավարարված եմ»: Համայնքնապետարանի աշխատանքի գնահատման համար կիրառվել է «ինչպես կգնահատեիք համայնքապետարանի աշխատանքը ոլորտ/իրավիճակ», իսկ որպես գնահատման սանդղակ կիրառվել է 1-ից 10 բալանոց սանդղակը: Սանդղակի միջին արժեք չի կիրառվել, որպեսզի տրված պատասխանները չկենտրոնանան միջին արժեքի շուրջ և առավելագույնս հնարավոր լինի դուրս բերել այս կամ այն ոլորտի կամ ծառայության դրական կամ բացասական գնահատված արժեքը:

Հետազոտության համար մշակված նախնական հարցաթերթը ենթակվել է պիլոտավորման: Ընդհանուր առմամբ, իրականացվել է հետազոտության ընտրանքի 2%-ի չափով պիլոտավորում, որը կազմել է 18 հարցաթերթ: Ըստ պիլոտավորման արդյունքների՝ մշակված հարցաթերթը փոփոխվել և վերջնականացվել է:

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի մաս կազմող բաղադրիչների ուսումնասիրության համար համայնքներում իրականացվել է դիտարկում: Դիտարկման են ենթակա փողոցում առկա ծածկույթի, մայթերի, ջրահեռացման վաքերի պիտանելիության աստիճանը, ճանապարհային նշանները, եզրաքարերը: Դիտարկումն իրականացվել է կիսաձևայնացված սուուզաթերթերի միջոցով (Հավելված 2):

1.5 ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔ

Հետազոտությունն ընդգրկում է Շիրակի մարզի Ախուրյան և Աշոցք, Լոռվա մարզի Ստեփանավան և Թումանյան, Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքները: Այն ընդգրկում է խոշորացված համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը: Գլխավոր համախմբությունը ներառում է հետազոտության շրջանակներում ընդգրկված խոշորացված համայնքներում մշտական բնակվող (նվազագույնը մեկ տարի) 18 և ավելի տարիքի բնակչությունը: Կիրառվել է քվոտային ընտրանքի տիպը: Այն **համամասնական** է բնակչության թվին **ըստ սեռի, տարիքի, մարզերի, խոշորացված համայնքի**:

Սահմանելով գլխավոր համախմբությունը որպես ընտրված համայնքներում մշտական բնակչություն հաստատած 18 և ավելի տարիքի բնակչությանը, գլխավոր համախմբության ծավալը կկազմի 137.698 բնակիչ¹: Երբ $N=137.698$, $\gamma=95\%$ և $\Delta=\pm 3.255$, իսկ 50% ՝ պատասխանների բաշխման համար, ապա ընտրանքի ծավալը կկազմի՝ $n=900$: Ընտրանքի հաշվարկը կատարվել է այն ենթադրությամբ, որ խոշորացված համայնքներում բնակչության սեռատարիքային բաշխվածությունը նույնն է բոլոր համայնքներում: Որպեսզի հնարավոր լինեք ապահովել բոլոր խոշորացված համայնքներում հարցումների հնարավորինս համաչափ բաշխվածություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիլիջան, Նոյեմբերյան և Ստեփանավան քաղաքներում բնակչության թիվը առավել մեծ է և հարցումների առյուծի բաժինը անհրաժեշտ կլինեք իրականացնել հենց այս համայնքներում, ընտրանքի թվերը ըստ առանձին խոշորացված համայնքների հաշվվել է խոշորացված համայնքների բնակչության թվերի բնական հիմքով լոգարիթմի ցուցանիշին համամասնական: Խոշորացված համայնքների ներսում հարցումների քանակը չի բաշխվել առանձին բնակավայրերում բնակչության թվին համամասնորեն, քանի որ այդ դեպքում առավել փոքր բնակչություն ունեցող բնակավայրերին բաժին կհասներ 3-4 հարցում, ինչը հնարավորություն չէր տա օբյեկտիվորեն վերհանել տվյալ համայնքներում առկա պատկերը: Հետազոտության շրջանակներում խոշորացված համայնքը դիտարկվել է որպես մեկ միասնական համայնք, որի ներսում հարցումների քանակը բաշխվել է այնպես, որ առավելագույնս ներգրավված լինեն բոլոր բնակավայրերը, իսկ առանձին բնակավայրերի ներսում՝ բոլոր թաղամասերը: Համապատասխանաբար ընտրանքի բաշխումն ըստ առանձին խոշորացված համայնքների ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Բնակավայր	Համայնքում բնակչության թիվը (1)	բնակչության թվի բնական հիմքով լոգարիթմը (2)=ln(1)	բնակչության թվի բնական հիմքով լոգարիթմի %-ային բաշխվածությունը	Ընտրանքի նախնական բաշխումն ըստ համայնքների	Փաստացի ընտրանքի ծավալը
Ախուրյան	14321	9.57	17.32%	156	162
Աշոցք	5778	8.66	15.68%	141	137
Թումանյան	3676	8.21	14.86%	134	156
Ստեփանավան	14685	9.59	17.37%	156	134
Դիլիջան	18789	9.84	17.82%	160	160
Նոյեմբերյան	11600	9.36	16.94%	153	153
Ընդամենը	68849	-	100%	900	902

Աղյուսակ 3: Ընտրանքի բաշխումն ըստ խոշորացված համայնքների

¹ Բնակչության թիվը դուրս է բերվել ընտրված մարզերի մարզպետարանների պաշտոնական կայք էջերում ներկայացված տվյալների հիման վրա

Կիրառվել է քվոտային ընտրանքի մեթոդը՝ ըստ երկու չափորոշիչների. **տարիք և սեռ**: Ըստ տարիքի և սեռի քվոտաների տարաբաժանումն իրականացվել է բնակավայրի մակարդակում: Ըստ տարիքի բաժանումն իրականացվել է հետևյալ տարիքային խմբերի միջոցով, որի հիմքում ընկած է մարդու կյանքի փուլերը՝

- 18-22 տարեկան (երիտասարդության կամ ուսանողական տարիք)
- 23-45 տարեկան (ընտանիքի կազմման և կայացման փուլ)
- 46-62 տարեկան (արդյունքները վայելելու և/կամ կայունության փուլ)
- 63+ տարեկան (հանգստի/թոշակի փուլ)

Ըստ սեռային և տարիքային խմբերի ընտրանքի բաշխումն ունի Աղյուսակ 2-ում բերված տեսքը, որի սահմանման համար հիմք է ծառայել բնակչության առ 2017թ. հունվար ամիսը եղած պատկերը, որը ստացվել է համայնքապետարանների կողմից:

Տարիքային խումբ	18-22 տարեկան խումբ		23-45 տարեկան խումբ		46-62 տարեկան խումբ		63 և ավելի տարեկան խումբ		Ընդամենը հարցումներ
	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական	
Ախուրյան	10	7	37	36	26	25	8	13	162
Աշոցք	5	6	31	44	16	20	6	9	137
Թումանյան	2	7	21	33	22	22	10	17	134
Ստեփանավան	4	12	31	36	24	24	11	14	156
Դիլիջան	4	8	21	63	15	26	7	16	160
Նոյեմբերյան	5	7	31	38	15	25	11	21	153

Աղյուսակ 4. Փաստացի ընտրանքի բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի

Ընտրանքային քայլ: Քանի որ հետազոտությունն անդրադառնում էր բնակավայրերում մատուցվող ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայությունների ոլորտի գնահատմանը, ապա առավել կարևորություն է տրվել համայնքներում իրականացվող հարցումների այնպիսի բաշխման ապահովմանը, որ ներառված լինեն համայնքի բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերի ներսում՝ տարբեր փողոցներում և բնակավայրի տարբեր հատվածներում բնակվող բնակիչները՝ ներառելով և՛ գլխավոր փողոցները, և՛ երկրորդական, և՛ ծայրամասային հատվածները: Հարցազրուցավարներին նախօրոք տրվել են այն փողոցները (սկզբնակետերը), որտեղից վերջիններս սկսել են հարցումների իրականացումը: Որպես ընտրանքային քայլ սահմանվել է երեք քայլը սեփական տների փողոցների համար, ինչը նշանակում է, որ որևէ փողոցի ընտրության դեպքում հաջորդ տնային տնտեսությունը ընկած է եղել հարցման փորձ/հաջողված հարցում արված տնային տնտեսությունից երեք տուն հեռավորության վրա: Քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի դեպքում ընտրանքային քայլը սահմանվել է երկուսը (յուրաքանչյուր երկրորդ շենքը), շենքի ներսում բնականների ընտրության համար քայլը եղել է կրկին երեքը, իսկ յուրաքանչյուր շենքերում առավելագույնը թույլատրված է եղել իրականացնել 2 հարցում: Տնային

տնտեսության ներսում ռեսպոնդենտի ընտրությունը իրականացվել է ըստ քվոտային համապատասխանելիության սկզբունքի: Յուրաքանչյուր տնային տնտեսությունում իրականացվել է միայն մեկ հարցում:

1.6 ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոնիթորինգն իրականացվելու է Շիրակի մարզի Ախուրյան և Աշոցք, Լոռվա մարզի Ստեփանավան և Թումանյան, Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում: Այն ընդգրկելու է խոշորացված համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը: Բնակավայրերի ներսում մշտադիտարկման ենթակա փողոցներն ընտրվելու են հետևյալ տրամաբանությամբ՝

1. Բնակավայրի ներսում **պատահական ընտրված երկրորդական փողոցներ և բնակավայրի գլխավոր փողոցը/փողոցները**, որոնց դեպքում մշտադիտարկման է ենթակա փողոցի ծածկույթը, ծածկույթի տիպը և որակը, մայթերի առկայությունը, վաքերի առկայությունը և այլն: Այս դեպքում յուրաքանչյուր բնակավայրում մշտադիտարկման ենթակա փողոցների քանակը կորոշվի կախված բնակավայրի մեծությունից: Ըստ այս չափորոշիչի մշտադիտարկման ենթակա փողոցների քանակը սահմանվել է համաձայն Աղյուսակ 3-ում բերված ցուցանիշների: Յուրաքանչյուր բնակավայրում պարտադիր մշտադիտարկման է ենթակա բնակավայրի գլխավոր փողոցը/փողոցները, որը համարվում է ամենաբանուկը և որի երկայնքով կազմակերպված է կանոնավոր տրանսպորտային երթևեկություն: Երկրորդական փողոցները և բակային տարածքները ընտրվելու են բնակավայրերի տարբեր հատվածներում, այնպես որ հնարավոր լինի ապահովել բնակավայրի տարբեր թաղամասերի ներգրավվածությունը ուսումնասիրությունում: Ընտրված փողոցներն ուսումնասիրվելու են ամբողջ երկարությամբ:
2. Ներբնակավայրային և միջբնակավայրային փողոցներ, որոնք **վերանորոգվել են վերջին երկու տարիների ընթացքում**: Այս դեպքում դիտարկման են ենթակա փողոցների ծածկույթի որակը, քայքայվածությունը և այլն:

Բնակավայրերի մեծությունն ըստ բնակչության թվի	Մշտադիտարկման ենթակա փողոցներ		
	գլխավոր փողոց	երկրորդական փողոց	բակային տարածք
Մինչև 300 բնակչություն ունեցող	1	3	0
301-ից 700	2	4	0
700-1500	2	5	0
1500-5000	3	6	0
5000-10000 բնակչություն	4	8	6
10.000 բնակչություն և ավելի	6	10	8

Աղյուսակ 5: Մշտադիտարկման ենթակա փողոցների քանակն ըստ բնակավայրի մեծության


Ընդհանուր առմամբ, դիտարկման են ենթարկվել 249 փողոցներ, որոնցից 85-ը եղել են գլխավոր փողոցներ, 164-ը՝ երկրորդական: Դիտարկման ենթարկված փողոցների թիվն ունի Աղյուսակ 4-ում ներկայացված պատկերը:

Բնակավայր	Դիտարկված փողոցների թիվը	որից գլխավոր	որից երկրորդական
Ախուրյան	59	18	41
Աշոցք	57	18	39
Թումանյան	35	12	23
Ստեփանավան	30	10	20
Դիլիջան	26	9	17
Նոյեմբերյան	42	18	24
Ընդամենը	249	85	164

Աղյուսակ 6. Խոշորացված համայնքներում դիտարկված փողոցների թիվը


1.7 ՀԱՐՑՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Քանակական դեմ առ դեմ հարցմանը մասնակցել են ընդհանուր առմամբ 902 բնակիչներ խոշորացված համայնքներից, ընդ որում հարցման ենթարկված բնակիչների 41%-ը եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 59%-ը՝ իգական: Ըստ առանձին համայնքների հարցման ենթարկված բնակչության սեռային կազմը ներկայացված է Գրաֆիկ 1-ում:



Գրաֆիկ 1. Հարցման ենթարկված բնակչության սեռային կազմն ըստ խոշորացված համայնքների²


Ինչ վերաբերում է հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմին, ապա քանակական դեմ առ դեմ հարցումներում ներգրավված բնակչության 9%-ը եղել է 18-ից 22 տարեկանների տարիքային խմբից, 47%-ը՝ 23-45 տարեկանների խմբից, 29%-ը՝ 46-62, իսկ 16%-ը 63 տարեկան և ավելի տարիքային խմբից: Հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմն ըստ խոշորացված համայնքների ներկայացված է Գրաֆիկ 2-ում:



² Այսուհետ գրաֆիկներում և աղյուսակներում տոկոսային տվյալները ներկայացված են առանց ստորակետից հետո թվերի, ուստի հնարավոր է գումարը 1%-ով կամ 2%-ով ավել կամ նվազ լինի 100%-ից:


Գրաֆիկ 2. Հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմն ըստ խոշորացված համայնքների

Ըստ կրթական խմբերի հարցման ենթարկված բնակչության կազմն առանձին համայնքների համար ներկայացված է Գրաֆիկ 3-ում: Համաձայն արդյունքների հարցման ենթարկված բնակիչների 1%-ն ունեցել է տարրական կրթություն, 5%-ը՝ հիմնական, իսկ 39%-ը՝ միջնակարգ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն է ստացել հարցման ենթարկված բնակիչների 3%-ը, իսկ 24%-ը ստացել է միջին մասնագիտական կրթություն: Բարձրագույն (բակալավր, մագիստրոս) և հետբուհական կրթություն ունեցել է հարցման ենթարկված բնակիչների 27%-ը:



Գրաֆիկ 3. Բնակչության կազմն ըստ կրթական մակարդակի


Ինչ վերաբերում է բնակչության կազմին ըստ զբաղվածության ոլորտների, ապա հարցման ենթարկված բնակչության 24%-ը կազմել են տնային տնտեսություն վարողները: Հաջորդ առավել մեծ խմբերը եղել են գործազուրկների խումբը և պետական ոլորտում ծառայող մասնագետների խումբը (յուրաքանչյուրը 15%): Հարցման ենթարկված բնակչության 13%-ը եղել է գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղված, իսկ 12%-ը՝ թոշակառու: Մնացած 21%-ը եղել են զբաղվածության այլ ոլորտների ներկայացուցիչներ, ինչպես օրինակ մասնավոր ոլորտում սպասարկող անձնակազմ, ուսանողներ, մասնավոր ոլորտում ծառայող մասնագետներ և այլն: Հարցման ենթարկված բնակչության կազմն ըստ զբաղվածության ոլորտների ներկայացված է Գրաֆիկ 4-ում:




Գրաֆիկ 4. Բնակչության կազմն ըստ զբաղվածության ոլորտների

Հարցման ենթարկված ընտանիքների միջին ամսական եկամուտը 34% դեպքերում կազմել է 50.000 ՀՀԴ-ից պակաս, իսկ 35% դեպքերում կազմել է 50,000-ից 100,000 ՀՀԴ: Ընդհանուր առմամբ հարցման ենթարկված ընտանիքների միայն 30%-ի միջին ամսական եկամուտն է կազմել 100,000-ից ավել, ընդ որում, այստեղ մեծ կշիռ են կազմում 100,000-ից 200,000 ՀՀԴ սահմաններում եկամուտ ունեցող ընտանիքները, որոնք կազմում են ընդհանուր առմամբ հարցման ենթարկված տնային տնտեսությունների 14%-ը: Տնային տնտեսությունների միայն 6%-ն է ամսական կտրվածքով ստանում 200,000 ՀՀԴ-ից ավել եկամուտ: Բնակչության կազմն ըստ եկամուտների մակարդակի ըստ առանձին խոշորացված համայնքների ներկայացված է Գրաֆիկ 5-ում:

Հարցման ենթարկված բնակչության 20%-ը նշել է, որ իրենց «ընտանիքի եկամուտը չի բավականացնում սնունդ գնելու համար», 39%-ը, որ «ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար»: Բնակչության 37%-ը նշել է, որ իրենց ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ և հագուստ, բայց ոչ թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար, մինչդեռ 4%-ը համարում է, որ ընտանիքի եկամուտը բավականացնում է թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար: Հարցման ենթարկված բնակչության միայն 0,2%-ն է նշել, որ ընտանիքի եկամուտը բավականացնում է մեքենա կամ բնակարան գնելու համար: Բնակչության կազմն ըստ եկամուտների մակարդակի և ըստ առանձին բնակավայրերի ներկայացված է Գրաֆիկ 6-ում:



Գրաֆիկ 5. Հարցման ենթարկված տնային տնտեսությունների կազմն ըստ եկամուտների մակարդակի



Գրաֆիկ 6. Հարցման ենթարկված տնային տնտեսությունների կազմն ըստ եկամուտների մակարդակի

1.8 ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Դաշտային աշխատանքներում ներգրավված են եղել երեք մարզային համակարգողներ և շուրջ 34 վերապատրաստված քաղաքացի-մոնիթորներ: Համակարգողները պատասխանատու են եղել բնակավայրի ներսում հարցումների այնպիսի բաշխման համար, որ հնարավոր լինեք ապահովել բնակավայրերի բոլոր թաղամասերի, կենտրոնական և երկրորդական փողոցների ներգրավվածությունը:

Հավաքագրված տվյալների որակի բարձրացման և տվյալների նկատմամբ վստահելիության ապահովման համար իրականացված հարցաթերթերի 10%-ը պատահականության սկզբունքով ենթարկվել են ստուգման հեռախոսային ստուգիչ զանգերի միջոցով (շուրջ 90 հարցաթերթ):

1.9 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՄԱՆԵՐ

Հետազոտությունն ունի հետևյալ սահմանափակումները՝

- 1) Քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքները մեկնաբանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տվյալները ներկայացուցչական չեն առանձին բնակավայրերի և խոշորացված համայնքների համար, թեև յուրաքանչյուր խոշորացված համայնքի համար հարցումների քանակը բաշխված է եղել այնպես, որ հնարավորություն է տվել վերհանել համայնքներում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտի հետ կապված առկա պատկերը:
- 2) Քանի որ Նոյեմբերյան համայնքի մի շարք բնակավայրեր սահմանամերձ են, մոնիթորինգ հնարավոր է եղել իրականացնել առավել քիչ թվով փողոցներում՝ հաշվի առնելով քաղաքացի-մոնիթորների անվտանգության պահպանման պահանջը:

ԳԼՈՒԽ 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

2.1 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԱԽՈՒՐՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

2.1.1 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում խոշորացված համայնքների տեխնիկական հնարավորությունների բացահայտման համար համայնքապետարաններին ուղարկվել է տեղեկատվության հարցում, որի համաձայն համայնքները տրամադրել են տեղեկատվություն համայնքում առկա տեխնիկական միջոցների վերաբերյալ: Համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների՝ համայնքն ունի 1989 թվականի արտադրության ավլոդ-ջրոդ մեկ մեքենա և 2011թ. արտադրության JCB 3-CX մեկ էքսկավատոր: Ներհամայնքային ճանապարհների սպասարկման համար նախատեսված այլ տեխնիկական միջոցներ համայնքը չունի:

2.1.2 ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ներհամայնքային ճանապարհների սպասարկումից բնակչության բավարարվածության ուսումնասիրության համար Ախուրյան համայնքում իրականացվել է 162 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.1.1-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Ախուրյան	9,246	57	35%
Այգաբաց	743	12	7%
Արևիկ	1,801	17	10%
Բասեն	1,725	17	10%
Կամո	1,475	16	10%
Կառնուտ	999	19	12%
Հովիտ	534	9	6%
Ջրառատ	1,071	15	9%
Ընդամենը	17,594	162	100%

Աղյուսակ 2.1.1. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակն Ախուրյան համայնքում

Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ, որքանով է Ձեզ համար կարևոր ներբնակավայրային

բարեկարգ ճանապարհներ ունենալը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 77%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 22%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Բնակչության միայն 1%-ի համար է այս հիմնախնդիրը իրենց ընտանիքի և համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ գնահատվել նվազ կարևոր: Այս ոլորտն առավել կարևորել են Այգաբաց, Արևիկ, Բասեն և Կամո բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.1.2):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Ախուրյան	63%	37%	0%	0%
Այգաբաց	100%	0%	0%	0%
Արևիկ	100%	0%	0%	0%
Բասեն	94%	6%	0%	0%
Կամո	94%	6%	0%	0%
Կառնուտ	68%	26%	0%	5%
Հովիտ	56%	44%	0%	0%
Ջրառատ	73%	27%	0%	0%
Ընդամենը	77%	22%	0%	1%

Աղյուսակ 2.1.2 Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգ լինելու հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար

Հարցման ենթարկված բնակիչներին հարց է ուղղվել, թե հիմնականում ինչպիսի ծածկույթ ունեն իրենց բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհները, որոնց արդյունքները ամփոփված են Աղյուսակ 2.1.3-ում, որտեղ ներկայացված են այն տարբերակները, որոնք հարցման ենթարկված բնակիչների կողմից նշվել են ամենաշատը: Համաձայն արդյունքների՝ գլխավոր փողոցները «հիմնականում ասֆալտապատ բարձր որակի» գնահատվել են միայն Բասեն և Ջրառատ բնակավայրերում: Ախուրյան, Այգաբաց, Հովիտ բնակավայրերում ներբնակավայրային գլխավոր փողոցները գնահատվել են «հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով»: Կամո բնակավայրի բնակիչները իրենց բնակավայրի ներբնակավայրային գլխավոր փողոցները բնորոշել են որպես «հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի», իսկ Արևիկ բնակավայրի դեպքում բնակիչների կողմից առավել հաճախ հնչել է «գրունտային» պատասխանը:

Ինչ վերաբերում է ներբնակավայրային երկրորդական փողոցներին, ապա բոլոր բնակավայրերի բնակիչների կողմից առավել հաճախ հնչել է «գրունտային» տարբերակը, բացառությամբ Ջրառատի, որտեղ բնակիչները երկրորդական փողոցները բնորոշել են որպես «հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով»:

Միջբնակավայրային ճանապարհների դեպքում Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կառնուտ, Հովիտ բնակավայրերի դեպքում առավել հաճախ հնչել է գրունտային պատասխանը: Ախուրյան գյուղի բնակիչներն իրենց բնակավայրի միջբնակավայրային ճանապարհները բնորոշել են որպես «հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով», Կամոյի բնակիչները՝ «հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի»: Միայն Ջրառատ գյուղի բնակիչների կողմից է իրենց բնակավայրը մյուս

բնակավայրերին միացնող ճանապարհները բնութագրվել որպես «հիմնականում ասֆալտապատ բարձր որակի»:

Բնակավայր	Ներբնակավայրային գլխավոր փողոցներ	Երկրորդական փողոցներ	Միջբնակավայրային ճանապարհներ
Ախուրյան	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Գրունտային ծածկույթ	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով
Այգաբաց	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Արևիկ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Բասեն	Հիմնականում ասֆալտապատ բարձր որակի	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Կամո	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի	Գրունտային ծածկույթ	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի
Կառնուտ	Գրունտային	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Հովիտ	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Ջրառատ	Հիմնականում ասֆալտապատ բարձր որակի	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Հիմնականում ասֆալտապատ բարձր որակի

Աղյուսակ 2.1.3. Համայնքային փողոցների և ճանապարհների ծածկույթների հիմնական տիպերն ըստ համայնքի բնակիչների շրջանում հարցման արդյունքների

Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ, որտեղ 1-ը նշանակում է, որ բնակիչները ծառայություններից «ընդհանրապես բավարարված չեն», 4-ը՝ «լիովին բավարարված են»: Աղյուսակ 2.1.4-ում և 2.1.5-ում ներկայացված են Ախուրյան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները՝ համապատասխանաբար գլխավոր և երկրորդական փողոցների համար³: Համաձայն գնահատման արդյունքների՝ գլխավոր փողոցների երկայնքով առավել ցածր են գնահատվել անձրևների դեպքում ջրահեռացման համակարգի աշխատանքը, փոշուց և կենցաղային աղբի փողոցների մաքրման աշխատանքները և ճանապարհների ընդհանուր բարեկարգվածությունը: Ներբնակավայրային գլխավոր փողոցների ծածկույթի վիճակից առավել դժգոհ են եղել Այգաբաց, Արևիկ, Կամո և Կառնուտ բնակավայրերի բնակիչները, իսկ համեմատաբար ավելի գոհ՝ Բասեն և Ջրառատ բնակավայրերի բնակիչները: Գլխավոր փողոցների երկայնքով փոսալցման աշխատանքների հաճախությունից և որակից դժգոհ են հատկապես Արևիկ և Կառնուտ բնակավայրերի բնակիչները, փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգի որակից՝ Այգաբաց, Արևիկ, Կամո, Կառնուտ բնակավայրերի բնակիչները: Այս ոլորտից գոհ են միայն Բասեն և Ջրառատ բնակավայրերի

³ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:

բնակիչները: Ձմեռային ամիսների ընթացքում ձյունից և սառույցից փողոցների մաքրման աշխատանքները հիմնականում զնահատվել են դրական, համեմատաբար դժգոհ են եղել Ախուրյան, Արևիկ և Կառնուտ գյուղերի բնակիչները: Փողոցների երկայնքով մայթերի բացակայությունից դժգոհ են եղել Կամո և Կառնուտ գյուղերի բնակիչները: Բոլոր բնակավայրերի դեպքում «ճանապարհների մաքրում փոշուց և կենցաղայի աղբից» ցուցանիշը զնահատվել է խիստ բացասական, բացառությամբ Ախուրյան գյուղի: Նույն պատկերն է նաև «ճանապարհների ընդհանուր բարեկարգվածություն» ցուցանիշի դեպքում, տարբերությամբ, որ այս ցուցանիշը համեմատաբար դրական է զնահատվել նաև Այգաբաց բնակավայրի բնակիչների կողմից:

Ինչ վերաբերում է ներբնակավայրային երկրորդական փողոցներին, ապա այստեղ գրեթե բոլոր բնակավայրերի դեպքում բոլոր ցուցանիշներով ստացվել են խիստ բացասական զնահատականներ: Միայն Հովիտում են ներհամայնքային ճանապարհների սպասարկման որոշ բաղադրիչների համար տրվել միջինին մոտ զնահատականներ, ինչպես նաև Կամոյում՝ ձմեռային ամիսներին ձյունմաքրման աշխատանքների հետ կապված:

Բնակավայր	Ներքնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսայցումներ	Անձրևների ժամանակ փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգ	Չմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներքնակավայրային փողոցների երկայնքով մայթերի առկայություն	Մայթերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Ախուրյան	2.82	2.55	2.02	2.42	2.68	2.69	2.49	2.27
Այգաբաց	1.58	2.17	1.67	3.50	3.42	3.00	1.67	2.42
Արևիկ	1.47	1.65	1.59	2.18	2.06	2.00	1.18	2.00
Բասեն	3.59	3.07	3.40	3.29	3.65	3.29	0.65	0.12
Կամո	1.19	2.07	0.06	3.19	1.19	2.13	0.60	0.25
Կառնուտ	2.05	1.89	0.47	2.42	1.68	1.53	0.26	0.32
Հովիտ	2.67	2.78	2.67	3.11	2.33	2.33	1.78	1.89
Ջրառատ	4.00	0.00	3.27	3.27	3.60	3.33	1.87	1.07
Միջինում	2.52	2.13	1.85	2.76	2.57	2.55	1.56	1.46

Աղյուսակ 2.1.4. Ներհամայնքային գլխավոր փողոցների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Բնակավայր	Ներքնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսայցումներ	Անձրևների ժամանակ փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգ	Չմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներքնակավայրային փողոցների երկայնքով մայթերի առկայություն	Մայթերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Ախուրյան	1.60	1.32	0.84	0.95	0.76	0.65	0.95	0.86
Այգաբաց	1.25	1.58	1.17	1.83	1.58	1.50	1.17	1.75
Արևիկ	1.06	1.24	1.24	1.53	1.41	1.35	1.00	1.47
Բասեն	0.80	0.65	0.13	0.47	0.06	0.00	0.12	0.00
Կամո	1.06	0.53	0.00	2.81	0.19	0.00	0.25	0.19
Կառնուտ	1.28	0.83	0.00	1.21	0.11	0.11	0.00	0.00
Հովիտ	2.67	2.44	1.89	2.33	2.67	2.56	1.67	1.33
Ջրառատ	1.80	0.80	0.00	2.00	0.13	0.40	0.40	0.60
Միջինում	1.43	1.14	0.64	1.42	0.73	0.68	0.70	0.74

Աղյուսակ 2.1.5. Ներհամայնքային երկրորդական փողոցների, նրբանցքների, փակուղիների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից


Աղյուսակ 2.1.6-ում ներկայացված է բնակիչների կողմից տրված միջին գնահատականները միջբնակավայրային ճանապարհների սպասարկման որակի հետ կապված: Այս դեպքում հիմնականում խիստ բացասական գնահատականներ են տրվել բոլոր ցուցանիշների առումով Այգաբաց, Արևիկ, Բասեն և Կառնուտ բնակավայրերի բնակիչների կողմից: Ցուցանիշները համեմատաբար դրական են եղել Ախուրյան, Հովիտ և Ջրառատ բնակավայրերի դեպքում: Միջբնակավայրային ճանապարհների ծածկույթի վիճակից միայն գոհ են եղել Ջրառատ բնակավայրի բնակիչները, իսկ ձմեռային ամիսների ընթացքում ձյունից, սառույցից ճանապարհների մաքրման աշխատանքներից՝ Կամո և Ջրառատ գյուղերի բնակիչները:

Բնակավայր	Միջբնակավայրային ճանապարհների ծածկույթի վիճակ	Ճանապարհների ժամանակին և պատշաճ փոսալցումներ	Անձրևների ժամանակ ճանապարհների երկայնքով ջրահեռացման համակարգի աշխատանք	Ձմեռային ամիսների ընթացքում ճանապարհների մաքրում ձյունից, սառույցից
Ախուրյան	2.42	2.28	1.91	2.26
Այգաբաց	1.08	1.25	1.17	1.50
Արևիկ	1.00	1.12	1.06	1.18
Բասեն	0.71	0.07	0.00	0.00
Կամո	1.06	2.00	0.06	3.19
Կառնուտ	1.47	1.00	0.47	1.21
Հովիտ	2.33	2.44	1.89	2.33
Ջրառատ	4.00	-	2.90	3.53
Միջինում	1.88	1.49	1.25	1.95

Աղյուսակ 2.1.6. Միջբնակավայրային ճանապարհների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Հարցին, թե արդյոք Ձեր բնակավայրում ներբնակավայրային ճանապարհների երկայնքով կան հատվածներ, որտեղ առկա են քարաթափումների ռիսկեր, սողանքներ կամ փլուզումներ, Կամո Կառնուտ Ջրառատ բնակավայրերից մեկական բնակիչ տվել են դրական պատասխան: Միայն Ջրառատ և Կառնուտ բնակավայրերի բնակիչների կողմից համայնքապետարանի աշխատանքն ուղղված քարաթափումների, սողանքների կամ փլուզումների խնդրի լուծմանը գնահատվել է դրական, Կամո գյուղի բնակիչների կողմից համայնքապետարանի աշխատանքն այս առումով ստացել է «լիովին անբավարար» գնահատականը:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Միջինից բարձր գնահատական է տրվել միայն Ջրառատ գյուղի բնակիչների կողմից՝ 6,07 միավոր, մնացած բոլոր դեպքերում գնահատականները եղել են միջինից ցածր: Գնահատականները հատկապես ցածր են եղել Այգաբաց, Ախուրյան և խիստ ցածր են եղել Կամո բնակավայրի դեպքում: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **4,46** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 7):



Պատկեր 7. Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի բարելավմանը: Առավել շատ առաջարկներ ստացվել են Բասեն և Կառնուտ բնակավայրերից, որտեղ բնակիչներն առաջարկել են բարեկարգել երկրորդական փողոցները, ասֆալտապատել համայնքի ճանապարհները, կառուցել մայթեր, բարեկարգել փողոցները: Կառնուտում հնչել է նաև առաջարկ վերանորոգել և ասֆալտապատել դեպի Սեպասար տանող կամուրջը: Երկրորդական փողոցների առաջարկով հանդես են եկել նաև Ախուրյան և Ջրառատ բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.1.7):

Առաջարկություններ	Ախուրյան	Այգաբաց	Արևիկ	Բասեն	Կամո	Կառնուտ	Հովիտ	Ջրառատ
Բարեկարգել գլխավոր փողոցները	0	0	0	0	1	0	0	0
Բարեկարգել և ասֆալտապատել երկրորդական փողոցները	4	0	0	9	0	0	0	2
Ասֆալտապատել համայնքի ճանապարհները	0	0	0	1	0	4	0	0
Ասֆալտապատել գլխավոր փողոցները	0	0	0	0	0	1	0	0
Կառուցել մայթեր	0	0	0	0	0	1	0	0
Բարեկարգել փողոցները	1	0	0	4	0	2	0	1
Գյուղն ամեն ինչ ունի, բայց չի օգտագործվում, թող օգտագործեն սարքեն	0	0	0	0	0	2	1	0
Ճանապարհների մաքրության հարցը լուծել	0	0	0	1	0	0	1	0
Ուշադրություն դարձնել գյուղի ներհամայնքային ճանապարհներին	0	0	0	0	0	3	1	0
Սեպասար տանող կամուրջի վերանորոգում և ասֆալտապատում	0	0	0	0	0	4	0	0

Աղյուսակ 2.1.7. Բնակիչների առաջարկներն ուղղված ներհամայնքային ճանապարհների սպասարկման որակի բարելավմանը

2.1.3 ԱՖՈՒԲՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ախուրյան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր թվով 59 փողոցում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցները և փակուղիները: Դիտարկված 59 փողոցներից 15-ը եղել են գլխավոր փողոցներ, 41-ը՝ երկրորդական, իսկ 3-ը՝ նրբանցք/փակուղի: Դիտարկման ենթարկված փողոցներից 24-ը տեղակայված են եղել բնակավայրերի կենտրոնական հատվածներում, իսկ 35-ը՝ ծայրամասերում (Աղյուսակ 2.1.8):

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Փողոցի տեղադիրքը բնակավայրում		Դիտարկված փողոցի տիպը		
		Կենտրոն	Ծայրամաս	Գլխավոր փողոց	Երկրորդական փողոց	Նրբանցք, փակուղի
Ախուրյան	11	4	7	3	7	1
Այգաբաց	6	3	3	2	4	0
Արևիկ	8	3	5	2	6	0
Բասեն	9	4	4	2	6	0
Կամո	7	2	5	2	3	2
Կառնուտ	6	3	3	2	4	0
Հովիտ	5	1	4	1	4	0
Ջրառատ	7	4	4	1	7	0
Ընդամենը	59	24	35	15	41	3

Աղյուսակ 2.1.8 Դիտարկման ենթարկված փողոցներն Ախուրյան համայնքում

Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 34,951 մետր: Դիտարկված փողոցների միջին լայնությունը կազմել է 7.07 մետր: Ընդհանուր առմամբ դիտարկված փողոցների մակերեսը կազմել է 288,605քառակուսի մետր (Աղյուսակ 2.1.9):

Բնակավայր	Դիտարկված փողոցների երկարություն (մետր)	Դիտարկված փողոցների միջին լայնություն (մետր)	Դիտարկված փողոցների մակերես (քառակուսի մետր)
Ախուրյան	6,549	9.45	62,673
Այգաբաց	4,930	8.17	47,182
Արևիկ	3,857	9.63	37,791
Բասեն	8,034	7.22	67,600
Կամո	3,050	3.64	12,810
Կառնուտ	5,022	9.33	48,064
Հովիտ	1,010	1.60	1,153
Ջրառատ	2,499	4.64	11,333
Ընդամենը	34,951	7.07	288,606


Աղյուսակ 2.1.9 Դիտարկված փողոցների երկարությունը և մակերեսը

Փողոցների երթևեկելի մասի ծածկույթ: Ախուրյան համայնքում դիտարկված 59 փողոցներից միայն 13-ում է փողոցի երթևեկելի մասը եղել ասֆալտապատ, մնացած դեպքերում փողոցները կա՛մ եղել են խճապատ, կա՛մ գրունտային: Հիմնականում ասֆալտապատ են եղել բնակավայրերի գլխավոր փողոցները, երկրորդական փողոցները և նրբանցքները եղել են կա՛մ խճապատ, կա՛մ գրունտային: Ըստ դիտարկված փողոցների ընդհանուր մակերեսի՝ 38%-ը եղել է ասֆալտապատ, 12%-ը՝ խճապատ, 51%-ը՝ գրունտային (Աղյուսակ 2.1.10):

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Ասֆալտաբետոնե ծածկի առկայություն		Դիտարկված փողոցի տիպը ըստ երթևեկելի մասի ծածկույթի տիպի (քառակուսի մետր)		
		Առկա է	Առկա չէ	Ասֆալտապատ	Խճապատ	Գրունտային
Ախուրյան	11	4	7	33,369	3,651	25,653
Այգաբաց	6	2	4	28,637	3,215	15,330
Արևիկ	8	1	7	745	8,507	28,539
Բասեն	9	1	8	18,897	0	48,703
Կամո	7	2	5	1,505	8,471	2,834
Կառնուտ	6	2	4	19,256	3,740	25,068
Հովիտ	5	1	4	53	534	566
Ջրառատ	7	1	6	5,820	5,513	0
Ընդամենը	59	13	46	108,282	33,631	146,692


Աղյուսակ 2.1.10 Դիտարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը

Ըստ բնակավայրերի դիտարկված փողոցների երթևեկելի մասերի մակերեսի ծածկույթի տիպերի հարաբերակցությունը ներկայացված է Գրաֆիկ 8-ում: Համաձայն արդյունքների՝ միայն Ջրառատում առկա չի եղել գրունտային ծածկույթ, մյուս բոլոր բնակավայրերի դեպքում առկա են գրունտային ծածկույթով փողոցներ: Այս ծածկույթն ունեցող փողոցներն առավել գերակշռող են Արևիկում, Բասենում և Կառնուտում: Կամոյում գերակշռում են խճապատ փողոցները, իսկ Ախուրյանում և Այգաբացում՝ ասֆալտապատ: Արևիկում և Հովիտում չնչին տոկոս են կազմել ասֆալտապատ փողոցները. առաջինում գերակշռում են գրունտային տիպի փողոցները, երկրորդում՝ գրունտային և խճապատ ծածկույթները զբաղեցնում են գրեթե հավասար մակերեսներ:



Գրաֆիկ 8. Դիտարկված փողոցների երթևեկելի մասերն ըստ ծածկույթի տիպի

Գրաֆիկ 9-ում ներկայացված է փողոցների ծածկույթների տիպերը միավորելով բոլոր բնակավայրերի արդյունքները: Համաձայն արդյունքների՝ գերակշռող են գրունտային անհարթ ծածկույթով փողոցները, որոնք կազմում են ընդհանուր դիտարկված փողոցների 56%-ը: Գրունտային հարթ ծածկույթով եղել են 4 փողոցներ: 7 փողոցներ եղել են խճապատ անհարթ: «Հիմնականում ասֆալտապատ բարձր որակի» գնահատվել են միայն 5 փողոցներ, նույնքան փողոցներ էլ գնահատվել են «հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով»:



Գրաֆիկ 9. Դիտարկման ենթարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը

Աղյուսակ 2.1.11-ում ներկայացված է թե որ բնակավայրերում են տեղակայված այս փողոցները: «Հիմնականում ասֆալտապատ՝ բարձր որակի» մեկական փողոցներ առկա են Ախուրյանում, Բասենում և Ջրառատում, իսկ Կառնուտում այսպիսի փողոցները երկուսն են: «Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով» մեկական փողոցներ առկա են Ախուրյանում, Հովհտում և Ջրառատում, իսկ Այգաբացում առկա են երկու այսպիսի փողոցներ: Մեկ հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի փողոց առկա է Ջրառատում, իսկ քայքայված ծածկույթով և խիճով փոսալցված մեկական փողոցներ Ախուրյանում և Արևիկում: Դիտարկված գրունտային և խճապատ փողոցները գերակշիռ դեպքերում եղել են անհարթ և առկա են եղել գրեթե բոլոր բնակավայրերում՝ կազմելով դիտարկված փողոցների գերակշիռ մասը (Աղյուսակ 2.1.11):

Բնակավայր	Ախուրյան	Այգաբաց	Արևիկ	Բասեն	Կամո	Կառնուտ	Հովիտ	Ջրատատ	Ընդամենը
Հիմնականում ասֆալտապատ՝ բարձր որակի	1	-	-	1	-	2	-	1	5
Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	1	2	-	-	-	-	1	1	5
Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի	-	-	-	-	-	-	-	1	1
Հիմնականում ասֆալտապատ, քայքայված հատվածներում փոսալցված խիճով	1	-	1	-	-	-	-	-	2
Խճապատ հարթ	-	-	-	-	-	-	-	1	1
Խճապատ անհարթ	-	-	1	-	2	-	1	3	7
Գրունտային հարթ	1	-	3	-	-	-	-	-	4
Գրունտային անհարթ	6	4	3	8	5	4	3	-	33
Մասմաբ ասֆալտապատ, խճապատ և գրունտային	1	-	-	-	-	-	-	-	1

Աղյուսակ 2.1.11. Դիտարկման ենթարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթն ըստ բնակավայրերի



Նկար 1 Երթևեկելի մասի քայքայված հատված Ախուրյանում

Մոնիթորները գնահատել են, թե դիտարկման ենթակա ասֆալտապատ փողոցների երթևեկելի մասի ծածկույթի որքան մասն է եղել քայքայված: Համաձայն գնահատման արդյունքների՝ Ախուրյանում ասֆալտապատ 4 փողոցներն ունեցել են ծածկույթի 5%, 15%, 30% և 70% քայքայվածություն: Այգաբաց և Կամո գյուղերում ասֆալտապատ են եղել երկուական փողոցներ: Այգաբացում փողոցներն ունեցել են 20% և 30% քայքայվածություն, իսկ Կամոյում՝ 70% և 80%: Հովիտում ասֆալտապատ է եղել մեկ փողոց, որը համաձայն գնահատականների, ունեցել է 30% քայքայվածություն: Ընդհանրապես քայքայված չեն եղել Բասենում, Կառնուտում և Ջրատատում դիտարկված մեկական ասֆալտապատ փողոցներ:

Կամոյում և Հովիտում դիտարկվել են մեկական փողոցներ, որոնք եղել են վերջին երկու տարիների ընթացքում վերանորոգված, իսկ Ախուրյանում այդպիսի փողոցները եղել են երկուսը: Համաձայն մոնիթորների գնահատականների Կամոյում վերջին երկու տարիների ընթացքում վերանորոգված փողոցի ծածկույթը պահպանված էր վատ, բավականին շատ հատվածներում առկա էին փոսեր և դեֆորմացված հատվածներ, Հովիտում ծածկույթը նույնպես լավ

պահպանված չի եղել՝ տեղ-տեղ առկա են եղել փոսեր և դեֆորմացված հատվածներ: Ախուրյանում դիտարկված 2 փողոցում ծածկույթը հիմնականում եղել է լավ պահպանված, սակայն տեղ-տեղ առկա են եղել ճաքեր:

Մայթեր և եզրաքարեր: Դիտարկված ընդհանուր երկարությամբ փողոցների միայն 30% հատվածում են առկա եղել մայթեր՝ ունենալով ընդհանուր առմամբ 10,451 մետր երկարություն: Դիտարկված մայթերի միջին լայնությունը կազմել է 1.87 մետր: Մայթերի ընդհանուր մակերեսը կազմել է 17,422 քառակուսի մետր (Աղյուսակ 2.1.12)

Դիտարկված 59 փողոցներում մայթեր առկա են եղել միայն 13-ի դեպքում: Փողոցի երկու կողմերում մայթեր առկա են եղել միայն 6 դեպքում, մնացած 7 դեպքերում մայթեր առկա են եղել միայն փողոցի մեկ կողմում (Աղյուսակ 2.1.13): 13 դեպքից 11-ում մայթերի վրա առկա է եղել ասֆալտաբետոնե ծածկ, 2 դեպքում՝ ոչ: 4 դեպքում քայքայված է եղել մայթերի ծածկույթի մոտ 10%-ը, որն արձանագրվել է Այգաբացում, Արևիկում, Կառնուտում և Ջրառատում, մնացած մեկական դեպքերում՝ 20%, 40%, 70%, 80% և անգամ ծածկույթի 95 տոկոսները: Միայն 4 դեպքում մայթերը ընդհանրապես չեն ունեցել ծածկույթի քայքայվածություն:

Բնակավայր	Դիտարկված փողոցների երկարություն (մետր)	Դիտարկված մայթերի երկարություն (մետր)	Դիտարկված մայթերի միջին լայնություն (մետր)	Դիտարկված մայթերի մակերես (քառակուսի մետր)
Ախուրյան	6,549	3,055	1.475	4,639
Այգաբաց	4,930	1,436	1.5	2,154
Արևիկ	3,857	190	2	380
Բասեն	8,034	2,333	1	2,333
Կամո	3,050	350	1	350
Կառնուտ	5,022	2,237	3	6,711
Հովիտ	1,010	250	1.5	375
Ջրառատ	2,499	600	0.8	480
Ընդամենը	34,951	10,451	1.87	17,422

Աղյուսակ 2.1.12. Դիտարկման ենթարկված փողոցների մայթերի երկարությունը և մակերեսը

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Մայթերի առկայություն		
		Առկա են	Առկա են, սակայն միայն մի կողմում	Առկա չեն
Ախուրյան	11	2	2	7
Այգաբաց	6	1	1	4
Արևիկ	8		2	6
Բասեն	9			9
Կամո	7	2		5
Կառնուտ	6		2	4
Հովիտ	5			5
Ջրառատ	7	1		6
Ընդամենը	59	6	7	46

Աղյուսակ 2.1.13 Մայթերի առկայությունը և եզրաքարերի վիճակը

Դիտարկվել են ընդհանուր 4773 մետր երկարությամբ մայթեզեր: Համաձայն արդյունքների՝ 1183 մետր հատվածում բացակայել են եզրաքարերը (երկարության 25%-ը): 1337 մետր հատվածում եզրաքարերը եղել են խարխլված (երկարության 28%-ը) և միայն 2252 մետր հատվածում են եզրաքարերը եղել բարեկարգ վիճակում (երկարության 47%-ը):

Երթևեկության անվտանգություն: Ինչ վերաբերում է երթևեկության անվտանգությանը՝ դիտարկված 59 փողոցների 52-ում չեն եղել ճանապարհային նշաններ, որը կազմում է ընդամենը դիտարկված փողոցների 88%-ը: 4 դեպքում փողոցն ամբողջ երկայնքով կահավորված է եղել ճանապարհային նշաններով, 3 դեպքում՝ մասամբ են կահավորված եղել (Աղյուսակ 2.1.14): Դիտարկված 7 դեպքերում, երբ առկա են եղել ճանապարհային նշաններ, մի դեպքում ճանապարհային նշանները եղել են դեֆորմացված, 2 դեպքում՝ գունաթափված և դժվար նկատելի, իսկ մնացած չորս դեպքերում նշանները եղել են պատշաճ վիճակում: Դիտարկված 59 փողոցների 54-ում չեն եղել ճանապարհային գծանշումներ: Առկա բոլոր գծանշումները եղել են գունաթափված և ոչ նկատելի: Հետիոտնային անցումներ առկա են եղել միայն Ախուրյան, Կամո և Ջրառատ գյուղերում. արձանագրվել են ընդհանուր թվով 4 հետիոտնային անցումներ՝ երկուսը Ախուրյանում, մեկական Կամոյում և Ջրառատում:

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Ճանապարհային նշանների առկայություն		
		Առկա են	Առկա են մասնակի	Առկա չեն
Ախուրյան	11	2	1	8
Այգաբաց	6		1	5
Արևիկ	8			8
Բասեն	9	1		8
Կամո	7			7
Կառնուտ	6		1	5
Հովիտ	5			5
Ջրառատ	7	1		6
Ընդամենը	59			52

Աղյուսակ 2.1.14 Դիտարկված ենթարկված փողոցների երկայնքով ճանապարհային նշանների առկայություն

Մոնիթորներն արձանագրել են 6 դեպք, երբ դիտարկված ճանապարհների երկայնքով առկա են եղել վտանգավոր հատվածներ, որոնց դեպքում առկա չեն եղել ազդանշանային սյուներ և/կամ արգելապատնեշներ և միայն մեկ դեպքում են այս կանխարգելիչ միջոցառումները առկա եղել: Այդպիսի հատվածներ արձանագրվել են Ախուրյանում, Բասենում, Կառնուտում և Ջրառատում: Համաձայն մոնիթորների գնահատականների բնակավայրերում առկա չեն եղել քարաթափման վտանգ ունեցող հատվածներ:

Ջրահեռացում և փողոցների բարեկարգվածություն: Դիտարկված 59 փողոցներից միայն 13-ի դեպքում է փողոցի երկայնքով առկա եղել ջրահեռացման վաքեր կամ առուներ, որը կազմում է ընդհանուր դիտարկված փողոցների 22%-ը: 46 դեպքերում ջրահեռացման համակարգը բացակայել է: Դիտարկված 13 ջրահեռացման վաքերից 9-ը գտնվում են խարխլված վիճակում և միայն 4 դեպքում են վաքերը եղել բարեկարգ վիճակում:

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	փողոցի մաքրությունը		Փողոցի երկայնքով ծառերի առկայություն		
		Փողոցը լիովին մաքուր էր	Փողոցի որոշ հատվածներում թափված էր կենցաղային աղբ	Այո, առկա են ամբողջ երկայնքով	Այո, առկա են մասնակի	Ոչ, առկա չեն
Ախուրյան	11	1	10		9	2
Այգաբաց	6		6		4	2
Արևիկ	8	1	7	1	7	
Բասեն	9	5	4	1	6	2
Կամո	7	2	5		4	3
Կառնուտ	6	4	2		6	
Հովիտ	5	1	4		5	
Ջրառատ	7		7		7	
Ընդամենը	59	14	45	2	48	9

Աղյուսակ 2.1.15 Փողոցների մաքրությունը և փողոցի երկայնքով ծառերի առկայությունը

Ինչ վերաբերում է փողոցների մաքրությանը, ապա 14 դեպքերում մոնիթորները փողոցների մաքրությունը գնահատել են դրական: Մնացած 45 դեպքում մոնիթորներն արձանագրել են, որ Փողոցի որոշ հատվածներում թափված էր կենցաղային աղբ: Հատկապես աղտոտված են եղել Ախուրյան, Այգաբաց, Արևիկ, Կամո, Հովիտ, Ջրառատ բնակավայրերի փողոցները:

Ամբողջ փողոցի երկայնքով ծառեր առկա են եղել Արևիկ և Բասեն բնակավայրերի մեկական փողոցներում: Մնացած 48 դեպքում ծառեր առկա են եղել մասնակի և միայն 9 դեպքում են ծառերը բացակայել (Աղյուսակ 2.1.15):

2.2 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԱՇՈՑՔ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

2.2.1 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում խոշորացված համայնքների տեխնիկական հնարավորությունների բացահայտման համար համայնքապետարաններին ուղարկվել է տեղեկատվության հարցում, որի համաձայն համայնքները տրամադրել են տեղեկատվություն համայնքում առկա տեխնիկական միջոցների վերաբերյալ: Աշոցք խոշորացված համայնքում, համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների, առկա է 2017թվականի արտադրության մեկ գրեյդեր կցորդներով և նույն թվականի արտադրության երկու XT3-150 տրակտոր: Ներհամայնքային ճանապարհների սպասարկման համար նախատեսված այլ տեխնիկական միջոցներ համայնքը չունի:

2.2.2 ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԻՑ

Աշոցքում իրականացվել են 137 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.2.1-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Աշոցք	2,888	40	29%
Բավրա	596	14	10%
Զույգաղբյուր	562	11	8%
Թավշուտ	372	9	7%
Կարմրավան	234	7	5%
Կրասար	527	6	4%
Ղազանչի	604	12	9%
Մեծ Սեպասար	933	17	13%
Մարագյուղ	233	6	4%
Սիգավետ	378	9	7%
Փոքր Սեպասար	241	6	4%
Ընդամենը	7,568	137	100%

Աղյուսակ 1.2.1. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակն Աշոցք համայնքում

Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ, որքանով է Ձեզ համար կարևոր ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 66%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 33%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Բնակչության միայն 2%-ի համար է այս հիմնախնդիրը իրենց ընտանիքի և համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ

գնահատվել նվազ կարևոր: Այս ոլորտն առավել կարևորել են Կարմրավան, Փոքր Սեպասար և Սիզավետ բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.2.2):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Աշոցք	85%	13%	3%	0%
Բավրա	36%	64%	0%	0%
Զույգաղբյուր	18%	82%	0%	0%
Թավշուտ	78%	22%	0%	0%
Կարմրավան	100%	0%	0%	0%
Կրասար	0%	100%	0%	0%
Ղազանչի	50%	50%	0%	0%
Մեծ Սեպասար	59%	41%	0%	0%
Սարագյուղ	67%	33%	0%	0%
Սիզավետ	89%	0%	0%	11%
Փոքր Սեպասար	100%	0%	0%	0%
Ընդամենը	66%	33%	1%	1%

Աղյուսակ 2.2.2 Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգ լինելու հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար

Հարցման ենթարկված բնակիչներին հարց է ուղղվել, թե հիմնականում ինչպիսի ծածկույթ ունեն իրենց բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհները, որոնց արդյունքները ամփոփված են Աղյուսակ 2.2.3-ում, որտեղ ներկայացված են այն տարբերակները, որոնք հարցման ենթարկված բնակիչների կողմից նշվել են ամենաշատը: Համաձայն արդյունքների՝ բնակավայրերում հիմնական ծածկույթի տիպը գրունտայինն է՝ ներբնակավայրային գլխավոր և երկորդական փողոցների համար: Որոշ դեպքերում ներբնակավայրային գլխավոր փողոցները նաև խճապատ են, ինչպես օրինակ Կարմրավանում, Կրասարում և Սարագյուղում: Աշոցքում և Զույգաղբյուրում ներբնակավայրային գլխավոր փողոցները հիմնականում ասֆալտապատ են՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով: Միջբնակավայրային ճանապարհները նույնպես կա՛մ հիմնականում ասֆալտապատ են, սակայն քայքայված և դժվարանցանելի ծածկույթով, կա՛մ խճապատ, կա՛մ գրունտային:

Բնակավայր	Ներբնակավայրային գլխավոր փողոցներ	Երկրորդական փողոցներ	Միջբնակավայրային ճանապարհներ
Աշոցք	Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Գրունտային ծածկույթ	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի
Բավրա	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Զույգաղբյուր	Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով/ գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի
Թավշուտ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Խճապատ
Կարմրավան	Խճապատ/ գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Խճապատ
Կրասար	Խճապատ	Գրունտային ծածկույթ	Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով
Ղազանչի	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի
Մեծ Սեպասար	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Սարագյուղ	Խճապատ	Խճապատ/ Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Միզավետ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Խճապատ/ Գրունտային ծածկույթ
Փոքր Սեպասար	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Խճապատ

Աղյուսակ 2.2.3 Համայնքային փողոցների և ճանապարհների ծածկույթների հիմնական տիպերն ըստ համայնքի բնակիչների շրջանում հարցման արդյունքների

Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ, որտեղ 1-ը նշանակում է, որ բնակիչները ծառայություններից «ընդհանրապես բավարարված չեն», 4-ը՝ «լիովին բավարարված են»: Աղյուսակ 2.2.4-ում և 2.2.5-ում ներկայացված են Ախուրյան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները՝ համապատասխանաբար գլխավոր և երկրորդական փողոցների համար⁴: Համաձայն գնահատման արդյունքների՝ ներբնակավայրային գլխավոր փողոցների սպասարկման որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ ստացել են խիստ բացասական գնահատականներ: Հիմնական ցուցանիշը, որը ստացել է քիչ թե շատ դրական գնահատական եղել է ձմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրման ցուցանիշը, որը բացասական է գնահատվել միայն Ղազանչի և Մեծ Սեպասար բնակավայրերի բնակիչների կողմից:

⁴ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:

Փոսալցման աշխատանքներից համեմատաբար գոհ են եղել Կրասար և Աշոցք բնակավայրի բնակիչները: Մյուս բոլոր ցուցանիշները եղել են բացասական:

Ինչ վերաբերում է ներբնակավայրային երկրորդական փողոցներին, ապա այստեղ նույնպես գերակշռում են խիստ բացասական գնահատականները բոլոր ցուցանիշներով: Համեմատաբար դրական գնահատական են ստացել Կրասարում՝ փոսալցման աշխատանքները, Աշոցքում, Թավշուտում, Կրասարում և Սարագյուղում ձմեռային ամիսներին ձյունաքրման աշխատանքները, Աշոցքում՝ մայթերի առկայությունը:

Բնակավայր	Ներբնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսւլցումներ	Անձրների ժամանակ փողոցների կայնքով ջրահեռացման համակարգ	Չմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներբնակավայրային փողոցների կայնքով մայթերի առկայություն	Մայթերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Աշոցք	2.40	2.79	1.83	3.03	2.72	2.50	2.28	2.21
Բավրա	1.00	1.00	0.00	3.86	0.00	0.00	0.00	0.00
Զույգաղբյուր	2.27	2.36	2.90	2.64	1.73	2.00	2.00	1.45
Թավշուտ	1.44	2.78	2.33	3.78	0.44	0.00	0.33	0.33
Կարմրավան	1.43	2.00	0.00	3.43	0.00	0.00	0.00	0.00
Կրասար	2.75	3.00	0.00	3.75	0.00	0.00	0.50	0.00
Ղազանչի	2.00	1.67	1.67	2.00	1.42	1.33	1.42	1.25
Մեծ Մեպասար	1.35	1.53	0.76	1.88	0.41	0.12	0.12	0.12
Սարագյուղ	1.83	1.33	0.83	3.33	0.00	0.00	0.00	0.17
Միզավետ	1.56	2.56	0.44	3.44	0.44	0.00	0.00	0.00
Փոքր Մեպասար	1.00	1.50	0.50	2.67	0.00	0.00	0.50	0.00
Միջինում	1.83	2.13	1.25	2.96	1.18	1.04	1.03	0.92

Աղյուսակ 2.2.4. Ներհամայնքային գլխավոր փողոցների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Բնակավայր	Ներբնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսւլցումներ	Անձրևների ժամանակ փողոցների կայնքով ջրահեռացման համակարգ	Չմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներբնակավայրային փողոցների կայնքով մայրերի առկայություն	Մայրերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Աշոցք	1.93	2.55	1.85	2.88	2.93	1.85	2.38	2.00
Բավրա	0.93	0.93	0.00	2.57	0.00	0.00	0.00	0.00
Զույգաղբյուր	2.00	2.45	2.70	2.82	1.64	1.82	2.09	1.55
Թավշուտ	1.89	2.78	0.33	3.78	0.00	0.00	0.44	0.44
Կարմրավան	1.43	1.71	0.14	1.86	0.00	0.00	0.00	0.29
Կրասար	2.50	3.00	0.00	3.75	0.00	0.00	0.50	0.00
Ղազանչի	1.50	1.25	0.58	0.58	0.50	0.50	0.25	0.50
Մեծ Մեպասար	1.00	0.41	0.12	0.18	0.06	0.13	0.00	0.00
Սարագյուղ	1.83	1.17	0.83	3.33	0.00	0.00	0.00	0.00
Միզավետ	1.33	2.00	0.11	2.00	0.56	0.11	0.11	0.11
Փոքր Մեպասար	1.00	0.83	0.00	2.33	0.00	0.00	0.00	0.17
Միջինում	1.57	1.80	0.90	2.27	1.09	0.76	0.95	0.82

Աղյուսակ 2.2.5. Ներհամայնքային երկրորդական փողոցների, նրբանցքների, փակուղիների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից


Աղյուսակ 2.2.6-ում ներկայացված է բնակիչների կողմից տրված միջին գնահատականները միջբնակավայրային ճանապարհների սպասարկման որակի հետ կապված: Այս ճանապարհների դեպքում նույնպես միայն միջինից բարձր գնահատականներ են տրվել ձմեռային ամիսների ընթացքում ճանապարհների ձնաքրման աշխատանքների ցուցանիշի համար, որը սակայն բացասական է եղել Զույգաղբյուր, Ղազանչի, Մեծ Սեպասար բնակավայրերի համար: Մնացած բոլոր ցուցանիշների համար գնահատականները բոլոր բնակավայրերի համար եղել են միջինից ցածր:

Բնակավայր	Միջբնակավայրային ճանապարհների ծածկույթի վիճակ	Ճանապարհների ժամանակին և պատշաճ փոսալցումներ	Անձրևների ժամանակ ճանապարհների երկայնքով ջրահեռացման համակարգ	Ձմեռային ամիսների ընթացքում ճանապարհների մաքրում ձյունից, սառույցից
Աշոցք	2.32	2.49	2.18	2.8
Բավրա	1.21	1.00	0.00	4.00
Զույգաղբյուր	2.20	2.50	2.50	2.50
Թավշուտ	1.89	3.00	0.13	3.78
Կարմրավան	2.33	2.33	0.33	3.33
Կրասար	2.00	2.50	0.00	3.50
Ղազանչի	1.58	2.08	1.75	1.58
Մեծ Սեպասար	1.41	1.06	1.12	1.06
Սարազյուղ	1.17	1.83	0.00	4.00
Սիզավետ	1.89	2.89	0.11	3.56
Փոքր Սեպասար	2.00	2.50	0.00	3.50
Միջինում	1.87	2.14	1.18	2.86

Աղյուսակ 2.2.6. Միջբնակավայրային ճանապարհների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Հարցին, թե արդյոք Ձեր բնակավայրում ներբնակավայրային ճանապարհների երկայնքով կան հատվածներ, որտեղ առկա են քարաթափումների ռիսկեր, սողանքներ կամ փլուզումներ, Կարմրավան բնակավայրից մեկ բնակիչ, իսկ Ղազանչիից երկու բնակիչ տվել են դրական պատասխան: Այս երկու բնակավայրերի բնակիչների կողմից էլ համայնքապետարանի աշխատանքն ուղղված քարաթափումների, սողանքների կամ փլուզումների խնդրի լուծմանը գնահատվել է անբավարար:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Միջինից բարձր գնահատական է տրվել միայն Աշոցք և Զույգաղբյուր բնակավայրերի բնակիչների կողմից: Աշոցք բնակավայրի դեպքում գնահատականը բավականին բարձր է՝ կազմելով 7.93 միավոր: Մյուս բոլոր բնակավայրերի դեպքում գնահատականները եղել են միջինից ցածր: Հատկապես խիստ բացասական են եղել Բավրա, Մեծ Սեպասար և Փոքր Սեպասար բնակավայրերի բնակիչների կողմից տրված գնահատականները: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **4,98** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 10):



Գրաֆիկ 10. Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի բարելավմանը: Առավել շատ առաջարկներ ստացվել են Բավրա, Թավշուտ, Ղազանչի և Սիզավետ բնակավայրերից, որտեղ բնակիչներն առաջարկել են հնարավորության դեպքում գոնե խճապատել փողոցները, ասֆալտապատել և բարեկարգել համայնքի փողոցները: Սիզավետում և Կարմրավանում առաջարկել են նաև կառուցել մայրեր (Աղյուսակ 2.2.7):

Առաջարկություններ	Աշոցք	Բավրա	Զույգաղբյուր	Թավշուտ	Կարմրավան	Կրասար	Ղազանչի	Մեծ Մեպասար	Սարագյուղ	Սիզավետ	Փոքր Մեպասար
Եթե ասֆալտապատելու հնարավորություն չկա գոնե խճապատել փողոցները	0	7	0	1	1	0	5	0	0	4	4
Ասֆալտապատել համայնքի փողոցները	0	4	0	3	0	1	0	0	1	2	0
Գոնե գլխավոր փողոցների ասֆալտապատում	0	1	0	1	1	0	0	0	0	0	0
Մայրերի կառուցում	0	0	0	0	1	0	0	0	0	2	0
Փողոցների լայնացում	0	1	0	0	0	0	0	0	0	0	0
Ճանապարհների արդեն քայքայված հատվածների վերականգում	1	0	1	0	0	1	0	0	0	0	0
Բարեկարգել գյուղամիջյան ճանապարհները	0	2	0	1	0	1	3	1	1	1	0
Երկրորդական ճանապարհների վերանորոգում	0	0	0	1	0	0	0	0	0	0	0
Դպրոցի ճանապարհի կառուցում	0	0	1	0	0	0	0	0	0	0	0
Ծայրամասային ճանապարհների ասֆալտապատում	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ծառատնկումներ փողոցների երկայնքով	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
Կիրառել արհեստական խոչընդոտներ, որ մեքենաները դանդաղ վարեն	0	0	0	1	0	0	0	0	0	0	0
Ջրատարներին ուշադրություն դարձնել	1	0	0	0	0	0	0	0	0	0	0

Աղյուսակ 2.2.7: Բնակիչների առաջարկներն ուղղված ներհամայնքային ճանապարհների սպասարկման որակի բարելավմանը

2.2.3 ԱՇՈՑՔ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐՁՑՈՒՆՔՆԵՐ

Աշոցք խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 57 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցները և փակուղիները: Ընդհանուր առմամբ դիտարկված 57 փողոցներից 18-ը եղել են գլխավոր փողոցներ, 38-ը՝ երկրորդական, իսկ 1-ը՝ միջբնակավայրային: Դիտարկման ենթարկված փողոցներից 26-ը տեղակայված են եղել բնակավայրերի կենտրոնական հատվածներում, իսկ 31-ը՝ ծայրամասերում (Աղյուսակ 2.2.8):

Բնակավայր	Դիտարկված փողոցների քանակ	Փողոցի տեղադիրքը բնակավայրում		Դիտարկված փողոցի տիպը		
		Կենտրոն	Ծայրամաս	Գլխավոր փողոց	Երկրորդական փողոց	Միջբնակ.
Աշոցք	9	4	5	2	6	1
Բավրա	6	3	3	2	4	
Զույգաղբյուր	6	3	3	2	4	
Թավշուտ	6	2	4	2	4	
Կարմրավան	2	2	0	1	1	
Կրասար	6	2	4	2	4	
Ղազանչի	6	2	4	2	4	
Մեծ						
Սեպասար	6	2	4	1	5	
Սարագյուղ	3	2	1	1	2	
Սիգավետ	4	2	2	2	2	
Փոքր						
Սեպասար	3	2	1	1	2	
Ընդամենը	57	26	31	18	38	1

Աղյուսակ 2.2.8 Դիտարկման ենթարկված փողոցներն Աշոցք համայնքում

Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 27096 մետր: Դիտարկված փողոցների միջին լայնությունը կազմել է 6.6 մետր: Ընդհանուր առմամբ դիտարկված փողոցների մակերեսը կազմել է 203,043 քառակուսի մետր (Աղյուսակ 2.2.9):

Բնակավայր	Դիտարկված փողոցների երկարություն (մետր)	Դիտարկված փողոցների միջին լայնություն (մետր)	Դիտարկված փողոցների մակերես (քառակուսի մետր)
Աշոցք	6,505	12.3	77,175
Բավրա	3,080	8.5	28,960
Զույգաղբյուր	3,510	5.0	17,550
Թավշուտ	1,936	4.0	8,398
Կարմրավան	1,060	5.0	5,300
Կրասար	2,130	9.0	21,550
Ղազանչի	2,470	3.7	9,550
Մեծ Սեպասար	2,285	4.3	11,255
Սարագյուղ	1,860	7.5	14,175
Սիգավետ	1,250	4.0	5,230
Փոքր Սեպասար	1,010	3.3	3,900
Ընդամենը	27,096	6.6	203,043


Աղյուսակ 2.2.9 Դիտարկված փողոցների երկարությունը և մակերեսը

Փողոցների երթևեկելի մասի ծածկույթ: Աշոցք համայնքում դիտարկված 57 փողոցներից միայն 11-ում է փողոցի երթևեկելի մասը եղել ասֆալտապատ, մնացած դեպքերում փողոցները կա՛մ եղել են խճապատ, կա՛մ գրունտային: Ընդ որում, որոշ բնակավայրերում ասֆալտապատ չեն եղել անգամ գլխավոր փողոցները, ինչպես օրինակ Թավշուտում, Կրասարում, Մեծ Սեպասարում, Սարագյուղում, Սիզավետում և Փոքր Սեպասարում: Մնացած բնակավայրերի դեպքում հիմնականում ասֆալտապատ են եղել բնակավայրերի գլխավոր փողոցները, երկրորդական փողոցները և նրբանցքները եղել են կա՛մ խճապատ, կա՛մ գրունտային: Ըստ դիտարկված փողոցների ընդհանուր մակերեսի՝ ընդամենը ընդհանուր ծածկույթի 28%-ն է եղել ասֆալտապատ, 21%-ը՝ խճապատ, իսկ ահա 51%-ը՝ գրունտային (Աղյուսակ 2.2.10):

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Ասֆալտաբետոնե ծածկի առկայություն		Դիտարկված փողոցի տիպը ըստ երթևեկելի մասի ծածկույթի տիպի (քառակուսի մետր)		
		Առկա է	Առկա չէ	Ասֆալտապատ	Խճապատ	Գրունտային
Աշոցք	9	5	4	41,589	24,252	11,335
Բավրա	6	1	5	10,800	2,104	16,056
Զույգաղբյուր	6	2	4	2,865	6,295	8,390
Թավշուտ	6		6	0	736	7,662
Կարմրավան	2	1	1	158	688	4,455
Կրասար	6		6	0	5,924	15,626
Ղազանչի	6	2	4	2,675	1,309	5,566
Մեծ Սեպասար	6		6	84	0	11,171
Սարագյուղ	3		3	0	1,173	13,003
Սիզավետ	4		4	0	523	4,707
Փոքր Սեպասար	3		3	170	500	3,230
Ընդամենը	57	11	46	58,340	43,503	101,200

Աղյուսակ 2.2.10 Դիտարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը

Ըստ բնակավայրերի դիտարկված փողոցների երթևեկելի մասերի մակերեսի ծածկույթի տիպերի հարաբերակցությունը ներկայացված է Գրաֆիկ 11-ում: Համաձայն արդյունքների՝ բոլոր բնակավայրերի դեպքում առկա են գրունտային ծածկույթով փողոցներ, որոնք որոշ բնակավայրերի դեպքում կազմում են գերակշիռ մաս: Թավշուտ, Մեծ Սեպասար, Սարագյուղ և Սիզավետ բնակավայրերի դեպքում դիտարկված երթևեկելի մասի ծածկույթի 90%-ից ավելին եղել է գրունտային ծածկույթ: Այս ցուցանիշը բարձր է նաև Կարմրավանում, Կրասարում և Փոքր Սեպասարում: Որոշ չափով խճապատ են Աշոցք և Զույգաղբյուր բնակավայրերի փողոցները: Փողոցների մի մասը ասֆալտապատ են եղել Բավրայում, Ղազանչիում և Զույգաղբյուրում, իսկ ահա համայնքի կենտրոնում՝ Աշոցքում ասֆալտապատ է եղել փողոցների երևելի մասի մակերեսի 54%-ը, մնացած մասը եղել է խճապատ կամ գրունտային:




Գրաֆիկ 11. Դիտարկված փողոցների երթևեկելի մասերն ըստ ծածկույթի տիպի



Նկար 2 Գրունտային ծածկույթով ճանապարհի Աշոցքում

Գրաֆիկ 12-ում ներկայացված է փողոցների ծածկույթների տիպերը միավորելով բոլոր բնակավայրերի արդյունքները: Համաձայն արդյունքների՝ գերակշռող են գրունտային անհարթ ծածկույթով փողոցները, որոնք կազմում են ընդհանուր դիտարկված փողոցների 65%-ը: Գրունտային հարթ ծածկույթով եղել են 7 փողոցներ: 3-ական փողոցներ եղել են «խճապատ անհարթ», «հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով» և «հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի»: «Հիմնականում ասֆալտապատ բարձր որակի» ծածկույթով եղել է միայն մեկ փողոց: Երկու փողոց եղել են հիմնականում ասֆալտապատ, քայքայված հատվածներում փոսալցված խիճով, իսկ մեկ փողոց խճապատ հարթ ծածկույթով:



Գրաֆիկ 12. Դիտարկման ենթարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը

Աղյուսակ 2.1.11-ում ներկայացված է թե որ բնակավայրերում են տեղակայված այս փողոցները: «Հիմնականում ասֆալտապատ՝ բարձր որակի» մեկ փողոցն Աշոցք գյուղում է: «Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով» մեկական փողոցներ առկա են Աշոցքում, Բավրայում և Զույգաղբյուրում: Դիտարկված գրունտային և խճապատ փողոցները գերակշիռ դեպքերում եղել են անհարթ և առկա են եղել գրեթե բոլոր բնակավայրերում՝ կազմելով դիտարկված փողոցների գերակշիռ մասը (Աղյուսակ 2.2.11):

Բնակավայր	Աշոցք	Բավրա	Զույգաղբյուր	Թավշուտ	Կարմրավան	Կրասար	Ղազանջի	Մեծ Սեպասար	Սարսցյուղ	Սիզավետ	Փոքր Սեպասար	Ընդամենը
Հիմնականում ասֆալտապատ՝ բարձր որակի	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	1	1	1	-	-	-	-	-	-	-	-	3
Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի	1	-	-	-	-	-	2	-	-	-	-	3
Հիմնականում ասֆալտապատ, քայքայված հատվածներում փոսայցված խիճով	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	2
Խճապատ հարթ	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Խճապատ անհարթ	2	-	-	-	-	1	-	-	-	-	-	3
Գրունտային հարթ	-	1	2	-	-	1	-	3	-	-	-	7
Գրունտային անհարթ	1	4	3	6	2	4	4	3	3	4	3	37


Աղյուսակ 2.2.11. Դիտարկման ենթարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթն ըստ բնակավայրերի

Մոնիթորները գնահատել են, թե դիտարկման ենթակա ասֆալտապատ փողոցների երթևեկելի մասի ծածկույթի որքան մասն է եղել քայքայված: Համաձայն գնահատման արդյունքների՝ Աշոցքում ասֆալտապատ 5 փողոցներն ունեցել են մի դեպքում ծածկույթի 10%, իսկ մնացած երկու դեպքերում ծածկույթի 80% և 90% քայքայվածություն: Բավրայում համաձայն մոնիթորների գնահատականների քայքայված է եղել դիտարկված մեկ ասֆալտապատ փողոցի 5%-ը, Զույգաղբյուրում դիտարկված երկուական փողոցների 40%-ը, իսկ Ղազանչիում դիտարկված երկու փողոցների 50%-ը:

Աշոցքում առկա են եղել երկու փողոցներ, որոնք եղել են վերջին երկու տարիների ընթացքում վերանորոգված, իսկ Զույգաղբյուրում և Կարմրավանում դիտարկվել են այսպիսի մեկական փողոցներ: Համաձայն գնահատման արդյունքների՝ Աշոցքի փողոցներից մեկի երթևեկելի մասի ծածկույթը հիմնականում եղել է լավ պահպանված, սակայն տեղ-տեղ առկա էին ճաքեր, մյուս դեպքում՝ ծածկույթը պահպանված էր ոչ լավ, տեղ-տեղ առկա էին փոսեր և դեֆորմացված հատվածներ: Զույգաղբյուրում և Կարմրավանում վերջին երկու տարիների ընթացքում վերանորոգված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը հիմնականում եղել է վատ պահպանված՝ տեղ-տեղ առկա են եղել փոսեր և դեֆորմացված հատվածներ:

Մայթեր և եզրաքարեր: Դիտարկված բոլոր բնակավայրերի 57 փողոցների երկայնքով մայթեր առկա են եղել միայն Աշոցք գյուղի 5 փողոցներում՝ ընդհանուր 1,666 մետր երկարությամբ, որը կազմում է Աշոցքում դիտարկված փողոցների ընդամենը 26%-ը, իսկ ընդամենը դիտարկված բոլոր փողոցների երկարության 6%-ը: Դիտարկված մայթերի առկայության 5 դեպքերից 3-ի պարագայում մայթեր առկա են եղել փողոցի միայն մեկ կողմում: Դիտարկված մայթերի միջին լայնությունը կազմել է 1.8 մետր: Մայթերի ընդհանուր մակերեսը կազմել է 3,093 քառակուսի մետր: Մյուս բնակավայրերի փողոցների երկայնքով մայթեր առկա չեն եղել: 5 դեպքից 2-ում մայթերի վրա առկա է եղել ասֆալտաբետոնե ծածկ, 3 դեպքում՝ ոչ: 3 դեպքում քայքայված է եղել մայթերի ծածկույթի մոտ 90%-ը, մնացած դեպքերում՝ 20% և 30%-ը:

Դիտարկվել են ընդհանուր 1,666 մետր երկարությամբ մայթեզեր: Համաձայն արդյունքների՝ 187 մետր հատվածում եզրաքարերը եղել են խարխլված (երկարության 11%-ը), իսկ ահա 1478 մետր հատվածում եզրաքարերը եղել են բարեկարգ վիճակում (երկարության 89%-ը):



Նկար 3 Կարմրասկի փուլովոր հատված Աշոցքում

Երթևեկության անվտանգություն: Ինչ վերաբերում է երթևեկության անվտանգությանը՝ դիտարկված 57 փողոցներից 53-ում չեն եղել ճանապարհային նշաններ, որը կազմում է ընդամենը դիտարկված փողոցների 93%-ը: 2 դեպքում փողոցն ամբողջ երկայնքով կահավորված է եղել ճանապարհային նշաններով, որն արձանագրվել է Աշոցքում, 2 դեպքում՝ մասամբ են կահավորված եղել, որոնցից մեկը եղել է Աշոցքում, մյուսը՝ Բավրայում: Դիտարկված 4 դեպքերում, երբ առկա են եղել ճանապարհային նշաններ, մի դեպքում ճանապարհային նշանները եղել են դեֆորմացված, մնացած դեպքերում նշանները եղել են պատշաճ

վիճակում: Դիտարկված 57 փողոցների 53-ում չեն եղել ճանապարհային գծանշումներ: Երկու փողոցներում գծանշումները եղել են թարմ և տեսանելի, մյուս դեպքերում գծանշումները եղել են գունաթափված և ոչ նկատելի:

Զույգադրյուրում, Կրասարում և Փոքր Սեպասարում մոնիթորներն արձանագրել են դեպքեր, երբ դիտարկված ճանապարհների երկայնքով առկա են եղել վտանգավոր հատվածներ, որոնց դեպքում առկա չեն եղել ազդանշանային սյուներ և/կամ արգելապատնեշներ: Համաձայն մոնիթորների գնահատականների Փոքր Սիզավետում առկա է եղել նաև քարաթափման վտանգ ունեցող հատված, որը պատշպանված չի եղել հենապատերով:

Ջրահեռացում և փողոցների բարեկարգվածություն: Դիտարկված 57 փողոցներից ոչ մեկում առկա չեն եղել ջրահեռացման վաքեր կամ առուներ: Ինչ վերաբերում է փողոցների մաքրությանը, ապա 29 դեպքերում մոնիթորները փողոցների մաքրությունը գնահատել են դրական: Մնացած 28 դեպքում մոնիթորներն արձանագրել են, որ Փողոցի որոշ հատվածներում թափված էր կենցաղային աղբ: Հատկապես աղտոտված են եղել Աշոցք, Բավրա, Զույգադրյուր, Կարմրավան, Կրասար և Սարագյուղ բնակավայրերի փողոցները: Ամբողջ փողոցի երկայնքով ծառեր առկա են եղել Աշոցք գյուղի մեկ փողոցում: Մնացած 11 դեպքում ծառեր առկա են եղել մասնակի, իսկ մնացած 45 դեպքում ծառերը բացակայել են (Աղյուսակ 2.2.15):

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	փողոցի մաքրությունը		Փողոցի երկայնքով ծառերի առկայություն		
		Փողոցը լիովին մաքուր էր	Փողոցի որոշ հատվածներում թափված էր կենցաղային աղբ	Այո, առկա են ամբողջ երկայնքով	Այո, առկա են մասնակի	Ոչ, առկա չեն
Աշոցք	9	3	6	1	3	5
Բավրա	6		6			6
Զույգադրյուր	6	1	5		4	2
Թավշուտ	6	6				6
Կարմրավան	2		2		1	1
Կրասար	6		6			6
Ղազանչի	6	6				6
Մեծ						
Սեպասար	6	6				6
Սարագյուղ	3		3		3	
Սիզավետ	4	4				4
Փոքր						
Սեպասար	3	3				3
Ընդամենը	57	29	28	1	11	45

Աղյուսակ 2.2.15 Փողոցների մաքրությունը և փողոցի երկայնքով ծառերի առկայությունը

2.3 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

2.3.1 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում խոշորացված համայնքների տեխնիկական հնարավորությունների բացահայտման համար համայնքապետարաններին ուղարկվել է տեղեկատվության հարցում, որի համաձայն համայնքները տրամադրել են տեղեկատվություն համայնքում առկա տեխնիկական միջոցների վերաբերյալ: Թումանյան խոշորացված համայնքում, համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների, առկա է 2017 թվականի արտադրության մեկ բազմաֆունկցիոնալ էքսակավատոր JCB 3CX և ինքնաթափ մեքենա «Կամազ» 65115-026: Ներհամայնքային ճանապարհների սպասարկման համար նախատեսված այլ տեխնիկական միջոցներ համայնքը չունի:

2.3.2 ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԻՑ

Թումանյան համայնքում իրականացվել են 134 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.3.1-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Թումանյան	1866	46	34%
Աթան	202	9	7%
Ահնիձոր	182	8	6%
Լորուտ	1012	30	22%
Շամուտ	230	16	12%
Քարինջ	634	9	7%
Մարց	495	16	12%
Ընդամենը	4621	134	100%

Աղյուսակ 2.3.1. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Թումանյան համայնքում

Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ, որքանով է Ձեզ համար կարևոր ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 91%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 6%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Բնակչության միայն 3%-ի համար է այս հիմնախնդիրը իրենց ընտանիքի և համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ գնահատվել նվազ կարևոր: Այս ոլորտն առավել կարևորել են Ահնիձոր, Լորուտ, Շամուտ բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.3.2):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Թումանյան	86%	11%	0%	2%
Աթան	89%	11%	0%	0%
Ահնիձոր	100%	0%	0%	0%
Լորուտ	100%	0%	0%	0%
Շամուտ	100%	0%	0%	0%
Քարինջ	75%	13%	13%	0%
Մարց	88%	6%	0%	6%
Ընդամենը	91%	6%	1%	2%

Աղյուսակ 2.3.2 Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգ լինելու հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար

Հարցման ենթարկված բնակիչներին հարց է ուղղվել, թե հիմնականում ինչպիսի ծածկույթ ունեն իրենց բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհները, որոնց արդյունքները ամփոփված են Աղյուսակ 2.3.3-ում, որտեղ ներկայացված են այն տարբերակները, որոնք հարցման ենթարկված բնակիչների կողմից նշվել են ամենաշատը: Համաձայն արդյունքների՝ փողոցների երթևեկելի մասի հիմնական ծածկույթը գրունտային է: Թումանյանում գլխավոր փողոցները և միջբնակավայրային ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով, երկրորդականները՝ հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի կամ գրունտային: Քարինջում ներբնակավայրային գլխավոր փողոցները հիմնականում ասֆալտապատ՝ բարձր որակի են կամ գրունտային, Մարցում ներբնակավայրային գլխավոր և երկրորդական փողոցները հիմնականում կա՛մ խճապատ են, կա՛մ գրունտային: Մնացած բոլոր դեպքերում փողոցները և ճանապարհները գրունտային են:

Բնակավայր	Ներբնակավայրային գլխավոր փողոցներ	Երկրորդական փողոցներ	Միջբնակավայրային ճանապարհներ
Թումանյան	Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի/ Գրունտային ծածկույթ	Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով
Աթան	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Ահնիձոր	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Լորուտ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Շամուտ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Քարինջ	Հիմնականում ասֆալտապատ՝ բարձր որակի/Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Մարց	Խճապատ/ Գրունտային ծածկույթ	Խճապատ/ Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ

Աղյուսակ 2.3.3. Համայնքային փողոցների և ճանապարհների ծածկույթների հիմնական տիպերն ըստ համայնքի բնակիչների շրջանում հարցման արդյունքների

Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի հետ կապված մի շարք

բնութագրիչներ, որտեղ 1-ը նշանակում է, որ բնակիչները ծառայություններից «ընդհանրապես բավարարված չեն», 4-ը՝ «լիովին բավարարված են»: Աղյուսակ 2.3.4-ում և 2.3.5-ում ներկայացված են Ախուրյան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները՝ համապատասխանաբար գլխավոր և երկրորդական փողոցների համար⁵:

Համաձայն գնահատման արդյունքների՝ ներբնակավայրային գլխավոր փողոցների սպասարկման որակի հետ կապված գրեթե բոլոր բնութագրիչները ստացել են խիստ բացասական գնահատականներ բոլոր բնակավայրերի դեպքում: Քիչ թե շատ դրական գնահատականներ են հնչել Թումանյան քաղաքում գլխավոր փողոցների փոսալցման աշխատանքների, փողոցների՝ կենցաղային աղբից և փոշուց մաքրման ցուցանիշները: Մնացած բոլոր ցուցանիշների դեպքում գնահատականները եղել են միջինից ցածր՝ առավել հաճախ տրվել է հենց «0» գնահատականը: Գրեթե նույն պատկերն է ստացվել նաև ներբնակավայրային երկրորդական փողոցների համար:

⁵ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:

Բնակավայր	Ներբնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսալցումներ	Անձրևների ժամանակ փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգ	Ձմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներբնակավայրային փողոցների երկայնքով մայրերի առկայություն	Մայրերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Թումանյան	2.30	2.68	0.73	2.31	1.26	1.35	2.83	1.63
Աթան	1.00	0.56	0.00	0.33	0.00	0.00	0.00	0.00
Ահնիձոր	1.13	1.00	0.00	0.75	0.00	0.00	0.00	0.00
Լորուտ	1.00	0.67	0.00	0.27	0.07	0.03	0.17	0.00
Շամուտ	1.00	0.50	0.00	0.50	0.00	0.00	0.00	0.00
Քարինջ	1.22	2.00	0.00	1.11	0.56	0.67	1.00	0.56
Մարց	1.31	1.56	0.19	1.06	0.00	0.00	0.44	0.00
Միջինում	1.49	1.53	0.27	1.17	0.49	0.51	1.13	0.60

Աղյուսակ 2.3.4. Ներհամայնքային գլխավոր փողոցների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Բնակավայր	Ներբնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսալցումներ	Անձրևների ժամանակ փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգ	Ձմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներբնակավայրային փողոցների երկայնքով մայրերի առկայություն	Մայրերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Թումանյան	1.79	2.43	0.43	1.98	0.78	0.86	2.61	1.02
Աթան	1.00	0.11	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Ահնիձոր	1.13	0.75	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Լորուտ	1.00	0.27	0.07	0.10	0.00	0.00	0.10	0.00
Շամուտ	1.00	0.06	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Քարինջ	1.00	2.33	0.00	0.78	0.11	0.13	1.00	0.56
Մարց	1.25	1.13	0.00	0.67	0.00	0.00	0.38	0.00
Միջինում	1.30	1.21	0.16	0.81	0.27	0.29	1.01	0.38

Աղյուսակ 2.3.5. Ներհամայնքային երկրորդական փողոցների, նրբանցքների, փակուղիների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Աղյուսակ 2.3.6-ում ներկայացված է բնակիչների կողմից տրված միջին գնահատականները միջբնակավայրային ճանապարհների սպասարկման որակի հետ կապված: Այստեղ նույնպես գնահատականները իսիստ բացասական են: Քիչ թե շատ դրական են գնահատվել Թումանյան քաղաքում միջբնակավայրային ճանապարհների ծածկույթի վիճակից, այս ճանապարհների երկայնքով փոսայցման աշխատանքներից և ձմաքրման աշխատանքներից բնակչության բավարարվածությունը:

Բնակավայր	Միջբնակավայրային ճանապարհների ծածկույթի վիճակ	Ճանապարհների ժամանակին և պատշաճ փոսայցումներ	Անձրևների ժամանակ ճանապարհների երկայնքով ջրահեռացման համակարգ	Ձմեռային ամիսների ընթացքում ճանապարհների մաքրում ձյունից, սառույցից
Թումանյան	2.73	2.73	0.62	2.44
Աթան	1.00	0.33	0.00	0.00
Ահնիձոր	1.13	1.13	0.25	1.00
Լորուտ	1.07	0.67	0.10	0.30
Շամուտ	1.07	0.88	0.00	1.06
Քարինջ	1.22	2.00	0.00	1.11
Մարց	1.56	1.33	0.56	1.13
Միջինում	1.70	1.53	0.31	1.24

Աղյուսակ 2.3.6. Միջբնակավայրային ճանապարհների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից


Հարցին, թե արդյոք Ձեր բնակավայրում ներբնակավայրային ճանապարհների երկայնքով կան հատվածներ, որտեղ առկա են քարաթափումների ռիսկեր, սողանքներ կամ փլուզումներ, բոլոր բնակավայրերի բնակիչների մի մասի կողմից տրվել է դրական պատասխան, բացի Աթան բնակավայրից: Թումանյան, Ահնիձոր, Քարինջ բնակավայրերի բնակիչների կողմից քարաթափումների, սողանքների կամ փլուզումների խնդրի լուծմանն ուղղված համայնքապետարանի աշխատանքը գնահատվել է բավարար, իսկ Լորուտում, Շամուտում և Մարցում՝ անբավարար (Աղյուսակ 2.3.7):

Բնակավայր	Լիովին անբավարար	Ավելի շուտ անբավարար	Ավելի շուտ բավարար	Լիովին բավարար
Թումանյան	11%	16%	53%	21%
Ահնիձոր	33%	0%	67%	0%
Լորուտ	33%	33%	33%	0%
Շամուտ	40%	40%	10%	10%
Քարինջ	0%	0%	100%	0%
Մարց	55%	36%	9%	0%
Ընդամենը	29%	24%	37%	10%

Աղյուսակ 2.3.7. Համայնքապետարանի աշխատանքի գնահատականն ուղղված քարաթափումների, սողանքների կամ փլուզումների խնդրի լուծմանը

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Միջինին մոտ գնահատական տրվել է միայն Թումանյան բնակավայրի բնակիչների կողմից՝ 5.39 միավոր: Մյուս բոլոր բնակավայրի դեպքում տրվել են իսիստ ցածր

գնահատականներ: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **2,96** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 13):



Գրաֆիկ 13. Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի բարելավմանը: Բնակիչներն իրենց դժգոհությունն են հայտնել կապված ներհամայնքային ճանապարհների որակի հետ, մասնավորապես Շամուտ բնակավայրում բնակիչները նշել են, որ ճանապարհները անանցանելի են, ինչի պատճառով տուժում են տրանսպորտային միջոցները: Թումանյան քաղաքի բնակիչները նշել են, որ իրենց առաջարկները հաշվի չեն առնվում համայնքապետարանի կողմից: Թումանյան և Մարց բնակավայրերի բնակիչների կողմից հնչել է առաջարկ ստեղծել աշխատանքային խումբ, որը կգրադվի ճանապարհների հիմնախնդրով: Մյուս բոլոր բնակավայրերի բնակիչների կողմից հնչել են առաջարկություններ հիմնանորոգել ներբնակավայրային ճանապարհները, հնարավորության դեպքում գոնե խճապատել, իսկ Թումանյան քաղաքի բնակիչների կողմից առաջարկվել է նաև ասֆալտապատել և բարեկարգել բակային տարածքները (Աղյուսակ 2.3.8):

Առաջարկություններ	Թումանյան	Աթան	Անիկձոր	Լորուտ	Շամուտ	Քարինջ	Մարց
Մտեղծել աշխատանքային խումբ, որը կգրադվի ճանապարհների հիմնախնդրով	3	0	0	0	0	0	2
Ասֆալտապատել համայնքի ճանապարհները	9	1	5	3	3	4	6
Ասֆալտապատել գոնե հիմնական փողոցները	0	0	0	0	0	0	2
Ասֆալտապատել երկրորդական փողոցները	6	0	0	0	0	0	0
Եթե հնարավորություն չկա ասֆալտապատելու գոնե փոսայցումներ իրականացնեն	0	4	1	2	5	0	5
Արագ վերջացնեն վերանորոգումը	1	0	0	0	0	0	0
Բակերը բարեկարգվեն	1	0	0	0	0	0	0
Գյուղական ճանապարհների բարեկարգվեն	9	4	1	22	4	3	1
Եռակի ասֆալտապատել ճանապարհները	0	0	0	1	0	0	0
Կառավարությունը աջակցի	2	0	0	0	0	0	0
Կատարեն իրենց աշխատանքը լիարժեք	2	0	0	0	0	0	0
Ճանապարհները թող մանր խճով պատեն, որ մարդկանց և մեքենաների համար դժվար չլինի	0	0	0	0	0	0	1
Նոր համայնքապետի անհրաժեշտություն, ով անաչառ և սրտացավ աշխատանք կտանի	1	0	0	0	0	0	0
Շենքերի բակերը ասֆալտապատեն	2	0	0	0	0	0	0
Դպրոց տանող ճանապարհը վերանորոգեն	1	0	0	0	0	0	0
Վերահսկողություն տարվի կատարած աշխատանքների նկատմամբ	2	0	0	0	0	0	0
Հիմնանորոգեն միջհամայնքային ճանապարհները	2	0	1	2	2	0	1
Ջրահեռացման համակարգ կառուցեն	1	0	0	0	1	0	0

Աղյուսակ 2.3.8. Բնակիչների առաջարկներն ուղղված ներհամայնքային ճանապարհների սպասարկման որակի բարելավմանը

2.3.3 ԹՈՒՄԱՆՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Թումանյան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 35 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցքները և փակուղիները: Դիտարկված 35 փողոցներից 13-ը եղել են գլխավոր, իսկ 19-ը՝ երկրորդական, 3-ը՝ նրբանցքներ և փակուղիներ: Դիտարկման ենթարկված փողոցներից 17-ը տեղակայված են եղել բնակավայրերի կենտրոնական հատվածներում, իսկ 18-ը՝ ծայրամասերում (Աղյուսակ 2.3.9):

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Փողոցի տեղադիրքը բնակավայրում		Դիտարկված փողոցի տիպը		
		Կենտրոն	Ծայրամաս	Գլխավոր փողոց	Երկրորդական փողոց	Նրբանցք, փակուղի
Թումանյան	9	6	3	3	6	
Աթան	4	1	3	1	3	
Ահնիձոր	2	1	1	1	1	
Լորուտ	7	3	4	3	3	1
Շամուտ	2	1	1	1		1
Քարինջ	6	3	3	2	4	
Մարց	5	2	3	2	2	1
Ընդամենը	35	17	18	13	19	3

Աղյուսակ 2.3.9 Դիտարկման ենթարկված փողոցները Թումանյան համայնքում

Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 15,258 մետր: Դիտարկված փողոցների միջին լայնությունը կազմել է 4.98մետր: Ընդհանուր առմամբ դիտարկված փողոցների մակերեսը կազմել է 81,720 քառակուսի մետր (Աղյուսակ 2.3.10):

Բնակավայր	Դիտարկված փողոցների երկարություն (մետր)	Դիտարկված փողոցների միջին լայնություն (մետր)	Դիտարկված փողոցների մակերես (քառակուսի մետր)
Թումանյան	4,483	7.2	36,215
Աթան	1,150	3.5	4,100
Ահնիձոր	650	3.5	2,300
Լորուտ	5,180	3.3	17,590
Շամուտ	600	3.5	2,300
Քարինջ	1,845	6.7	14,015
Մարց	1,350	3.6	5,200
Ընդամենը	15,258	4.98	81,720


Աղյուսակ 2.3.10 Դիտարկված փողոցների երկարությունը և մակերեսը

Փողոցների երթևեկելի մասի ծածկույթ: Թումանյան համայնքում դիտարկված 59 փողոցներից միայն 13-ում է փողոցի երթևեկելի մասը եղել ասֆալտապատ, մնացած դեպքերում փողոցները կա՛մ եղել են խճապատ, կա՛մ գրունտային: Ըստ դիտարկված փողոցների ընդհանուր մակերեսի՝ 19%-ը եղել է ասֆալտապատ, 18%-ը՝ խճապատ, 62%-ը՝ գրունտային:

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Ասֆալտաբետոնե ճածկի առկայություն		Դիտարկված փողոցի տիպը ըստ երթևեկելի մասի ծածկույթի տիպի (քառակուսի մետր)		
		Առկա է	Առկա չէ	Ասֆալտապատ	Խճապատ	Գրունտային
Թումանյան	9	4	5	14824.5	5176.7	16213.8
Աթան	4		4	0	0	4100
Ահնիձոր	2		2	0	280	2020
Լորուտ	7		7	0	0	17590
Շամուտ	2		2	0	860	1440
Քարինջ	6	1	5	1080	6897.5	6037.5
Մարց	5		5	0	1684	3516
Ընդամենը	35	5	30	15904.5	14898.2	50917.3


Աղյուսակ 2.1.10 Դիտարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը

Ըստ բնակավայրերի դիտարկված փողոցների երթևեկելի մասերի մակերեսի ծածկույթի տիպերի հարաբերակցությունը ներկայացված է Գրաֆիկ 14-ում: Համաձայն արդյունքների՝ բացի Թումանյանից և Քարինջից, մնացած բոլոր բնակավայրերի դեպքում ծածկույթի հիմնական մասը եղել է գրունտային: Թումանյանում դիտարկված փողոցների 41%-ը եղել է ասֆալտապատ, 45%-ը՝ գրունտային:



Գրաֆիկ 14. Դիտարկված փողոցների երթևեկելի մասերն ըստ ծածկույթի տիպի

Գրաֆիկ 15-ում ներկայացված է փողոցների ծածկույթների տիպերը միավորելով բոլոր բնակավայրերի տիպերը: Համաձայն արդյունքների՝ գերակշռող են գրունտային անհարթ ծածկույթով փողոցները, որոնք կազմում են ընդհանուր դիտարկված փողոցների 82%-ը: Գրունտային հարթ ծածկույթով եղել են 3 փողոցներ: Մեկական փողոցներ եղել են «հիմնականում ասֆալտապատ, քայքայված հատվածներում փոսալցված խիճով», «հիմնականում ասֆալտապատ, ծածկույթի հիմնական մասը կարկատան արված» և «խճապատ անհարթ»:



Գրաֆիկ 15. Դիտարկման ենթարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը

Աղյուսակ 2.1.11-ում ներկայացված է թե որ բնակավայրերում են տեղակայված այս փողոցները: Թումանյանում երկու փողոցներ եղել են «հիմնականում ասֆալտապատ՝ քայքայված հատվածներում փոսալցված խիճով» և «Հիմնականում ասֆալտապատ, ծածկույթի հիմնական մասը կարկատան արված», Քարինջում մեկ փողոց եղել է իճապատ, մնացած բոլոր դեպքերում փողոցները եղել են գրունտային: Դիտարկված գրունտային և իճապատ փողոցները գերակշիռ դեպքերում եղել են անհարթ և առկա են եղել գրեթե բոլոր բնակավայրերում՝ կազմելով դիտարկված փողոցների գերակշիռ մասը:

Բնակավայր	Թումանյան	Աթան	Ահիժձոր	Լորուտ	Շանուտ	Քարինջ	Մարց	Ընդամենը
Հիմնականում ասֆալտապատ, քայքայված հատվածներում փոսալցված խիճով	1							1
Հիմնականում ասֆալտապատ, ծածկույթի հիմնական մասը կարկատան արված	1							1
Իճապատ անհարթ						1		1
Գրունտային հարթ	3							3
Գրունտային անհարթ	4	4	2	7	2	5	5	29

Աղյուսակ 2.3.11. Դիտարկման ենթարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթն ըստ բնակավայրերի

Մոնիթորները գնահատել են, թե դիտարկման ենթակա ասֆալտապատ փողոցների երթևեկելի մասի ծածկույթի որքան մասն է եղել քայքայված: Համաձայն գնահատման արդյունքների՝ Թումանյան քաղաքում ասֆալտապատ փողոցներն ունեցել են ծածկույթի 40%-ից 60% քայքայվածություն: Քարինջում ասֆալտապատ փողոցի ծածկույթն ունեցել է մոտ 80% քայքայվածություն:



Նկար 4 Դպրոց տանող ճանապարհը Թումանյան քաղաքում

Թումանյան քաղաքում առկա են եղել չորս փողոցներ, որոնք վերանորոգված են եղել վերջին 2 տարիների ընթացքում, իսկ Մարցում եղել է այդպիսի մեկ փողոց: Համաձայն մոնիթորինգի գնահատականների վերջին երկու տարիների ընթացքում վերանորոգված բոլոր փողոցների ծածկույթները պահպանված են եղել ոչ լավ, տեղ-տեղ առկա են եղել փոսեր և դեֆորմացված հատվածներ:

Մայթեր և եզրաքարեր: Դիտարկված ոչ մի փողոցում մայթեր առկա չեն եղել:

Երթևեկության անվտանգություն: Ինչ վերաբերում է երթևեկության անվտանգությանը՝ դիտարկված 35 փողոցների 34-ում չեն եղել ճանապարհային նշաններ և միայն Թումանյան քաղաքի մեկ փողոցն է մասամբ կահավորված եղել ճանապարհային նշաններով, որոնք եղել են պատշաճ վիճակում: Դիտարկված ոչ մի փողոցում չեն եղել ճանապարհային գծանշումներ: Առկա բոլոր գծանշումները եղել են գունաթափված և ոչ նկատելի: Ոչ մի փողոցում առկա չեն եղել

հետիոտնային անցումներ

Բոլոր բնակավայրերում, բացի Ահնիձորից, համաձայն մոնիթորինգի գնահատականների, դիտարկված փողոցների երկայնքով առկա են եղել վտանգավոր հատվածներ և քարաթափման վտանգ ունեցող հատվածներ, որոնց դեպքում առկա չեն եղել ազդանշանային սյուներ և/կամ արգելապատնեշներ և քարաթափման դեմ հետապատեր:

Ջրահեռացում և փողոցների բարեկարգվածություն: Դիտարկված 35 փողոցներից ոչ մեկում առկա չեն եղել ջրահեռացման վաքեր կամ առուներ:

Ինչ վերաբերում է փողոցների մաքրությանը, ապա 22 դեպքերում մոնիթորինգը փողոցների մաքրությունը գնահատել են դրական: Մնացած 13 դեպքում մոնիթորինգն արձանագրել են, որ Փողոցի որոշ հատվածներում թափված էր կենցաղային աղբ: Հատկապես աղտոտված են եղել Աթան, Լորուտ և Քարինջ բնակավայրերի փողոցները:

Ամբողջ փողոցի երկայնքով ծառեր առկա են եղել Թումանյան քաղաքի դիտարկված 7 փողոցների և Քարինջի մեկ փողոցի դեպքում: Մնացած 16 դեպքում ծառեր առկա են եղել մասնակի, իսկ 11 դեպքում ծառերը բացակայել են (Աղյուսակ 2.3.15):

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	փողոցի մաքրությունը		Փողոցի երկայնքով ծառերի առկայություն		
		Փողոցը լիովին մաքուր էր	Փողոցի որոշ հատվածներում թափված էր կենցաղային աղբ	Այո , առկա են ամբողջ երկայնքով	Այո, առկա են մասնակի	Ոչ, առկա չեն
Թումանյան	9	8	1	7	2	
Աթան	4		4		4	
Ահնիձոր	2	2				2
Լորուտ	7	2	5		5	2
Շամուտ	2	2				2
Քարինջ	6	3	3	1	5	
Մարց	5	5				5
Ընդամենը	35	22	13	8	16	11

Աղյուսակ 2.3.15 Փողոցների մաքրությունը և փողոցի երկայնքով ծառերի առկայությունը

2.4 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԻՌՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

2.4.1 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՆԻՒԿԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում խոշորացված համայնքների տեխնիկական հնարավորությունների բացահայտման համար համայնքապետարաններին ուղարկվել է տեղեկատվության հարցում, որի համաձայն համայնքները տրամադրել են տեղեկատվություն համայնքում առկա տեխնիկական միջոցների վերաբերյալ: Ստեփանավան խոշորացված համայնքում, համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների, առկա է 1991թ. արտադրության ունիվերսալ քաղաքային փոշեհան/փոշեկուլ, ավլոդ-ջրոդ մեքենա, 2006թ. արտադրության սառցակալման դեմ պայքարի ավագաաղային խառնուրդ ցրոդ մեքենա և 1990թ. արտադրության ձյուն մաքրող մեկ մեքենա: Ներհամայնքային ճանապարհների սպասարկման համար նախատեսված այլ տեխնիկական միջոցներ համայնքը չունի:

2.4.2 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԻՑ

Լուսավորության համակարգից բնակչության բավարարվածության ուսումնասիրության համար Ստեփանավան համայնքում իրականացվել են թվով 156 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ, որից 117-ը Ստեփանավան բնակավայրում, 17-ը՝ Ուրասարում և 22-ը՝ Կաթնաղբյուրում (Աղյուսակ 2.4.1-ում):

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Ստեփանավան	19141	117	75%
Ուրասար	399	17	11%
Կաթնաղբյուր	987	22	14%
Ընդամենը	20527	156	100%

Աղյուսակ 23.4.1 Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Ստեփանավան համայնքում

Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ, որքանով է Ձեզ համար կարևոր ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 69%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 31%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Բնակիչներից ոչ մեկը չի նշել, որ այս հիմնախնդիրը իրենց ընտանիքի և համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ նվազ կարևոր է: Այս ոլորտն առավել կարևորել են Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.4.2):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Ստեփանավան	60%	40%	0%	0%
Ուրասար	100%	0%	0%	0%
Կաթնաղբյուր	95%	5%	0%	0%
Ընդամենը	69%	31%	0%	0%

Աղյուսակ 2.4.2 Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգ լինելու հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար

Հարցման ենթարկված բնակիչներին հարց է ուղղվել, թե հիմնականում ինչպիսի ծածկույթ ունեն իրենց բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհները, որոնց արդյունքները ամփոփված են Աղյուսակ 2.4.3-ում, որտեղ ներկայացված են այն տարբերակները, որոնք հարցման ենթարկված բնակիչների կողմից նշվել են ամենաշատը: Համաձայն արդյունքների՝ ասֆալտապատ են միայն Ստեփանավան քաղաքի ներբնակավայրային գլխավոր և երկրորդական փողոցները և միջբնակավայրային ճանապարհները. ներբնակավայրային գլխավոր փողոցների դեպքում երթևեկելի մասի ծածկույթը տեղ-տեղ քայքայված է, ներբնակավայրային երկրորդական փողոցների և միջբնակավայրային ճանապարհների դեպքում՝ ծածկույթը հիմնականում քայքայված է և դժվարանցանելի: Ուրասարում և Կաթնաղբյուրում ներբնակավայրային գլխավոր փողոցները խճապատ են, երկրորդական փողոցները՝ գրունտային, իսկ միջբնակավայրային ճանապարհները Ուրասարի դեպքում՝ խճապատ, Կաթնաղբյուրի դեպքում՝ գրունտային:

Բնակավայր	Ներբնակավայրային գլխավոր փողոցներ	Երկրորդական փողոցներ	Միջբնակավայրային ճանապարհներ
Ստեփանավան	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով՝ դժվարանցանելի
Ուրասար	Խճապատ	Գրունտային	Խճապատ
Կաթնաղբյուր	Խճապատ	Գրունտային	Գրունտային

Աղյուսակ 2.1.3. Համայնքային փողոցների և ճանապարհների ծածկույթների հիմնական տիպերն ըստ համայնքի բնակիչների շրջանում հարցման արդյունքների

Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ, որտեղ 1-ը նշանակում է, որ բնակիչները ծառայություններից «ընդհանրապես բավարարված չեն», 4-ը՝ «լիովին բավարարված են»: Աղյուսակ 2.4.4-ում և 2.4.5-ում ներկայացված են Ախուրյան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները՝ համապատասխանաբար գլխավոր և երկրորդական փողոցների համար⁶: Համաձայն գնահատման արդյունքների՝ ներբնակավայրային գլխավոր և երկրորդական փողոցների սպասարկման հետ կապված բոլոր ցուցանիշները Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի դեպքում ստացել են խիստ բացասական գնահատականներ: Ստեփանավան քաղաքի դեպքում բնակչության բավարարվածությունն ըստ այս ցուցանիշների գնահատվել է միջինին մոտ, առավել բարձր են գնահատվել գլխավոր փողոցների մաքրման, ընդհանուր բարեկարգվածության և մայրերի

⁶Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:

առկայության վերաբերյալ ցուցանիշները: Երկրորդական փոդոցների դեպքում գնահատականները եղել են միջինին մոտ և ցածր:

Բնակավայր	Ներբնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսալցումներ	Անձրևների ժամանակ փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգ	Ձմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներբնակավայրային փողոցների երկայնքով մայթերի առկայություն	Մայթերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Ստեփանավան	2.37	2.35	2.12	2.75	2.81	2.69	2.85	3.41
Ուրասար	1.18	1.18	0.00	0.47	0.00	-	0.00	0.00
Կաթնաղբյուր	1.00	0.95	0.05	0.20	0.00	-	0.05	0.00
Միջինում	2.05	2.02	1.57	2.17	2.12	2.69	2.15	2.60

Աղյուսակ 2.4.4. Ներհամայնքային գլխավոր փողոցների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Բնակավայր	Ներբնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսալցումներ	Անձրևների ժամանակ փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգ	Ձմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներբնակավայրային փողոցների երկայնքով մայթերի առկայություն	Մայթերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Ստեփանավան	1.76	1.63	1.24	2.14	1.62	1.77	1.95	2.43
Ուրասար	1.00	1.06	0.00	0.35	0.00	-	0.00	0.00
Կաթնաղբյուր	1.00	1.00	0.05	0.19	0.00	-	0.05	0.00
Միջինում	1.56	1.48	0.91	1.67	1.21	1.77	1.45	1.84

Աղյուսակ 2.4.5. Ներհամայնքային երկրորդական փողոցների, նրբանցքների, փակուղիների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից


Աղյուսակ 2.4.6-ում ներկայացված է բնակիչների կողմից տրված միջին գնահատականները միջբնակավայրային ճանապարհների սպասարկման որակի հետ կապված: Միջբնակավայրային ճանապարհների սպասարկման հետ կապված բոլոր ցուցանիշները ստացել են բացասական գնահատականներ, ընդ որում Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի դեպքում այս ցուցանիշները խիստ բացասական են, Ստեփանավանի դեպքում «ավելի շուտ բացասական»:

Բնակավայր	Միջբնակավայրային ճանապարհների ծածկույթի վիճակ	Ճանապարհների ժամանակին և պատշաճ փոսալցումներ	Անձրների ժամանակ ճանապարհների երկայնքով ջրահեռացման համակարգ	Չմեռային ամիսների ընթացքում ճանապարհների մաքրում ձյունից, սառույցից
Ստեփանավան	1.94	1.57	1.07	1.70
Ուրասար	1.00	0.94	0.00	0.19
Կաթնաղբյուր	1.00	0.90	0.05	0.23
Միջինում	1.69	1.40	0.77	1.31

Աղյուսակ 2.4.6. Միջբնակավայրային ճանապարհների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Հարցին, թե արդյոք Ձեր բնակավայրում ներբնակավայրային ճանապարհների երկայնքով կան հատվածներ, որտեղ առկա են քարաթափումների ռիսկեր, սողանքներ կամ փլուզումներ, Ստեփանավան և Ուրասար բնակավայրերից համապատասխանաբար 5 և 3 բնակիչների կողմից տվել են դրական պատասխան: Հարցին թե որքանով բավարար են համայնքապետարանի աշխատանքն ուղղված քարաթափումների, սողանքների կամ փլուզումների խնդրի լուծմանը բնակիչների կողմից տրվել են և դրական գնահատականներ, և բացասական հավասար բաշխմամբ:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Համեմատաբար բարձր գնահատական է տրվել Ստեփանավան քաղաքի բնակիչների կողմից՝ 4.48 միավոր: Ուրասարի բնակիչների կողմից տրված միջին գնահատականը եղել 1.18, իսկ Կաթնաղբյուրի դեպքում տրվել է նվազագույն ցածր 1 միավոր: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **3,89** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 16):



Գրաֆիկ 16. Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի բարելավմանը: Ստեփանավան քաղաքի բնակիչներն առաջարկել են ասֆալտապատել համայնքի ճանապարհները, բարեկարգել ծայրամասային և երկրորդական փողոցները, կատարվեն փոսալցուման աշխատանքներ, լայնացնել մայթերը, բարձրացնել ասֆալտապատման որակը և այլն: Ուրասար և Կաթնաղբյուր գյուղերի բնակիչներն առաջարկել են ասֆալտապատել իրենց բնակավայրերի ճանապարհները՝ այդ թվում ծայրամասային և երկրորդական փողոցները, կատարեն փոսալցուման աշխատանքներ և այլն (Աղյուսակ 2.4.7):

Առաջարկություններ	Ստեփանավան	Ուրասար	Կաթնաղբյուր
Ամեն սեզոնին վերանորոգման աշխատանքներ կատարել	2	0	0
Ասֆալտապատել համայնքի ճանապարհները	11	7	8
Ասֆալտապատել նաև երկրորդական փողոցները	4	0	0
Ասֆալտապատել շենքերի բակերը, որպեսզի երեխաները կարողանան խաղալ	1	0	0
Ասֆալտապատման որակի բարձրացում	3	0	0
Ավելի շատ գումար նախատեսել վերանորոգման համար	3	0	0
Ծայրամասային և երկրորդական փողոցների բարեկարգում	19	8	8
Կատարեն փոսալցուման աշխատանքներ	3	2	4
Հնարավորության դեպքում հանդիպում վարչապետի հետ և իրավիճակի ներկայացում	0	0	1
Օպտիմալ տնօրինել բյուջեն, բարեկարգելու համար	1	0	0
Ասֆալտապատեն գլխավոր փողոցները	0	1	0
Զմռան ամիսներին ճանապարհների մաքրում	0	0	1
Մայթեր վերանորոգման աշխատանքներ իրականացնեն	1	1	0
Մայթերը լայնացնել	2	0	0
Մաքրեն փողոց, կեղտից	1	0	0
Մաքրեն խոտածածկից	1	0	0

Աղյուսակ 2.4.7: Բնակիչների առաջարկներն ուղղված ներհամայնքային ճանապարհների սպասարկման որակի բարելավմանը

2.3.3 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ստեփանավան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր թվով 30 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցները և փակուղիները: Դիտարկված 30 փողոցներից 13-ը եղել են գլխավոր փողոցներ, 17-ը՝ երկրորդական: Դիտարկման ենթարկված փողոցներից 18-ը տեղակայված են եղել բնակավայրերի կենտրոնական հատվածներում, իսկ 12-ը՝ ծայրամասերում (Աղյուսակ 2.3.8):

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Փողոցի տեղադիրքը բնակավայրում		Դիտարկված փողոցի տիպը	
		Կենտրոն	Ծայրամաս	Գլխավոր փողոց	Երկրորդական փողոց
Ստեփանավան	17	11	6	9	8
Ուրասար	6	3	3	2	4
Կաթնաղբյուր	7	4	3	2	5
Ընդամենը	30	18	12	13	17

Աղյուսակ 2.3.8 Դիտարկման ենթարկված փողոցներն Ստեփանավան համայնքում

Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 27,295մետր: Դիտարկված փողոցների միջին լայնությունը կազմել է 6.33մետր: Ընդհանուր առմամբ դիտարկված փողոցների մակերեսը կազմել է 187,000 քառակուսի մետր (Աղյուսակ 2.3.9):

Բնակավայր	Դիտարկված փողոցների երկարություն (մետր)	Դիտարկված փողոցների միջին լայնություն (մետր)	Դիտարկված փողոցների մակերես (քառակուսի մետր)
Ստեփանավան	16,895	6.94	123,950
Ուրասար	3,300	5.08	18,450
Կաթնաղբյուր	7,100	5.93	44,600
Ընդամենը	27,295	6.33	187,000


Աղյուսակ 2.3.9 Դիտարկված փողոցների երկարությունը և մակերեսը

Փողոցների երթևեկելի մասի ծածկույթ: Ստեփանավան խոշորացված համայնքում դիտարկված 30 փողոցներից միայն 10-ում է փողոցի երթևեկելի մասը եղել ասֆալտապատ, մնացած դեպքերում փողոցները կա՛մ եղել են խճապատ, կա՛մ գրունտային (Աղյուսակ 2.3.10): Ուրասարում և Կաթնաղբյուրում ասֆալտապատ փողոցներ չեն եղել: Ըստ դիտարկված փողոցների ընդհանուր մակերեսի՝ 25%-ը եղել է ասֆալտապատ, 36%-ը՝ խճապատ, 39%-ը՝ գրունտային:

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Ասֆալտաբետոնե ծածկի առկայություն		Դիտարկված փողոցի տիպը ըստ երթևեկելի մասի ծածկույթի տիպի (քառակուսի մետր)		
		Առկա է	Առկա չէ	Ասֆալտապատ	Խճապատ	Գրունտային
Ստեփանավան	17	10	7	6,796	6,965	3,134
Ուրասար	6		6	0	770	2,530
Կաթնաղբյուր	7		7	0	1,990	5,110
Ընդամենը	30	10	20	6,796	9,725	10,774


Աղյուսակ 2.3.10 Դիտարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը

Ըստ բնակավայրերի դիտարկված փողոցների երթևեկելի մասերի մակերեսի ծածկույթի տիպերի հարաբերակցությունը ներկայացված է Գրաֆիկ 17-ում: Համաձայն արդյունքների՝ Ստեփանավան քաղաքում ասֆալտապատ են եղել դիտարկված փողոցների մակերեսի 40%-ը, 41%-ը՝ եղել են խճապատ, իսկ 19%-ը՝ գրունտային: Ուրասարում և Կաթնաղբյուրում գրունտային են եղել փողոցների մակերեսի համապատասխանաբար 77%-ը և 72%-ը, փողոցների ծածկույթի մնացած մասերը եղել են խճապատ:



Գրաֆիկ 17. Դիտարկված փողոցների երթևեկելի մասերն ըստ ծածկույթի տիպի

Գրաֆիկ 18-ում ներկայացված է փողոցների ծածկույթների տիպերը միավորելով բոլոր բնակավայրերի տիպերը: Համաձայն արդյունքների՝ գերակշռող են գրունտային ծածկույթով փողոցները, որոնք կազմում են ընդհանուր դիտարկված փողոցների 47%-ը: 6 փողոցներ եղել են խճապատ: «Հիմնականում ասֆալտապատ բարձր որակի» գնահատվել են միայն 4 փողոցներ, 3 փողոց էլ գնահատվել է «հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով»:



Գրաֆիկ 18. Դիտարկման ենթարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը

Աղյուսակ 2.3.11-ում ներկայացված է թե որ բնակավայրերում են տեղակայված այս փողոցները: Ստեփանավան քաղաքում տեղակայված են եղել «հիմնականում ասֆալտապատ՝ բարձր որակի» չորս փողոցներ, «հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով» երեք փողոցներ, «հիմնականում ասֆալտապատ, քայքայված հատվածներում փոսալցված խիճով» երկու փողոցներ, «հիմնականում ասֆալտապատ, ծածկույթի հիմնական մասը կարկատան արված» մեկ փողոց և գրունտային և խճապատ փողոցներ: Եղել են: Դիտարկված գրունտային փողոցների գերակշիռ մասը տեղակայված են եղել Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերում (Աղյուսակ 2.3.11):

Բնակավայր	Ստեփանավան	Ուրասար	Վրահնադրյուր	Ընդամենը
Հիմնականում ասֆալտապատ՝ բարձր որակի	4			4
Հիմնականում ասֆալտապատ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	3			3
Հիմնականում ասֆալտապատ, քայքայված հատվածներում փոսալցված խիճով	2			2
Հիմնականում ասֆալտապատ, ծածկույթի հիմնական մասը կարկատան արված	1			1
Խճապատ հար	1			1
Խճապատ անհարթ	3		2	5
Գրունտային (հողային ծածկույթ) հարթ	2	2	3	7
Գրունտային (հողային ծածկույթ) անհարթ	1	4	2	7

Աղյուսակ 2.3.11. Դիտարկման ենթարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթն ըստ բնակավայրերի

Մոնիթորները գնահատել են, թե դիտարկման ենթակա ասֆալտապատ փողոցների երթևեկելի մասի ծածկույթի որքան մասն է եղել քայքայված: Համաձայն գնահատման արդյունքների՝ Ստեփանավան քաղաքում ասֆալտապատ 10 փողոցներն ունեցել են ծածկույթի 15%-ից մինչև 70% քայքայվածություն: Միջին գնահատականներով քայքայված են եղել փողոցների երթևեկելի մասի ծածկույթի 40%-ը: Որոշ փողոցներում մոնիթորինգի իրականացման ժամանակ ընթացել են փողոցների բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ:

Ստեփանավանում դիտարկված 8 փողոցներ եղել են վերջին երկու տարիների ընթացքում վերանորոգված: Համաձայն մոնիթորների գնահատականների վերջին երկու տարիների ընթացքում վերանորոգված փողոցի ծածկույթը 3 դեպքում պահպանված է եղել ոչ լավ, տեղ-տեղ առկա են փոսեր և դեֆորմացված հատվածներ, 2 դեպքում՝ պահպանված են եղել լավ, սակայն տեղ-տեղ առկա են եղել ճաքեր և միայն 3 դեպքում է երթևեկելի մասի ծածկույթը պահպանված եղել առանց թերությունների:

Մայթեր և եզրաքարեր: Դիտարկված ընդհանուր երկարությամբ փողոցների միայն 39% հատվածում են առկա եղել մայթեր՝ ունենալով ընդհանուր առմամբ 10,550 մետր երկարություն, որոնք առկա են եղել միայն Ստեփանավան քաղաքում: Դիտարկված մայթերի միջին լայնությունը կազմել է 1.98 մետր: Մայթերի ընդհանուր մակերեսը կազմել է 21,865 քառակուսի մետր (Աղյուսակ 2.1.12)



Նկար 5 Երիտասարդական փողոցը Ստեփանավան քաղաքում

Դիտարկված 30 փողոցներում մայթեր առկա են եղել միայն 12-ի դեպքում, որոնցից մեկի դեպքում մայթ եղել է միայն փողոցի մեկ կողմում: 12 դեպքից 10-ում մայթերի վրա առկա է եղել ասֆալտբետոնե ծածկ, 2 դեպքում՝ ոչ: Միջին գնահատականներով քայքայված է եղել մայթերի ծածկույթի մոտ 40%-ը:

Դիտարկվել են ընդհանուր 4773 մետր երկարությամբ մայթեզրեր: Համաձայն արդյունքների՝ 320 մետր հատվածում բացակայել են եզրաքարերը (երկարության 3%-ը): 5849 մետր հատվածում եզրաքարերը եղել են խարխիլված (երկարության 55%-ը): 4380 մետր հատվածում են եզրաքարերը եղել բարեկարգ վիճակում (երկարության 42%-ը):

Երթևեկության անվտանգություն: Ինչ վերաբերում է երթևեկության անվտանգությանը՝ դիտարկված 30 փողոցների 29-ում չեն եղել ճանապարհային նշաններ և միայն Ստեփանավան քաղաքի մեկ փողոցն է մասամբ կահավորված

եղել ճանապարհային նշաններով, որոնք եղել են պատշաճ վիճակում: Դիտարկված 30 փողոցներից 23-ում չեն եղել ճանապարհային գծանշումներ: Առկա բոլոր գծանշումները

եղել են գունաթափված և ոչ նկատելի: Հետիոտնային անցումներ առկա են եղել միայն Ստեփանավան քաղաքում. արձանագրվել են ընդհանուր թվով 2 հետիոտնային անցումներ:

Բոլոր բնակավայրերում, համաձայն մոնիթորների գնահատականների, դիտարկված փողոցների երկայնքով առկա են եղել վտանգավոր հատվածներ, որոնց դեպքում փողոցը կահավորված չի եղել ազդանշանային սյուներով և/կամ արգելապատնեշներով և քարաթափման դեմ հետապատերով: Ուրասարում և Կաթնաղբյուրում մոնիթորները նշել են նաև քարաթափման վտանգ ունեցող հատվածներ, որոնք պաշտպանված չեն եղել հենապատերով:

Ջրահեռացում և փողոցների բարեկարգվածություն: Դիտարկված 30 փողոցներից միայն մեկում է փողոցի երկայնքով առկա եղել ջրահեռացման վաք, որը գտնվել է բարեկարգ վիճակում:

Ինչ վերաբերում է փողոցների մաքրությանը, ապա 12 դեպքերում մոնիթորները փողոցների մաքրությունը գնահատել են դրական: 7 դեպքում մոնիթորներն արձանագրել են, որ փողոցի որոշ հատվածներում թափված էր կենցաղային աղբ, իսկ 11 դեպքում կենցաղային աղբ թափված է եղել փողոցի ամբողջ երկայնքով: Հատկապես աղտոտված են եղել Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի փողոցները: Ամբողջ փողոցի երկայնքով ծառեր առկա են եղել Ստեփանավանի 8 փողոցներում, իսկ 22 դեպքում ծառեր առկա են եղել մասնակի (Աղյուսակ 2.3.15):

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Փողոցի մաքրությունը			Փողոցի երկայնքով ծառերի առկայություն	
		Փողոցը լիովին մաքուր էր	Փողոցի որոշ հատվածներում թափված էր կենցաղային աղբ	Փողոցի ամբողջ երկայնքով թափված էր կենցաղային աղբ	Այո , առկա են ամբողջ երկայնքով	Այո, առկա են մասնակի
Ստեփանավան	17	12	5		8	9
Ուրասար	6		2	4		6
Կաթնաղբյուր	7			7		7
Ընդամենը	30	12	7	11	8	22

Աղյուսակ 2.3.15 Փողոցների մաքրությունը և փողոցի երկայնքով ծառերի առկայությունը

2.5 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԴԻԼԻՉԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

2.5.1 ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԻԼԻՉԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՆԵԻԿԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում խոշորացված համայնքների տեխնիկական հնարավորությունների բացահայտման համար համայնքապետարաններին ուղարկվել է տեղեկատվության հարցում, որի համաձայն համայնքները տրամադրել են տեղեկատվություն համայնքում առկա տեխնիկական միջոցների վերաբերյալ: Դիլիջան խոշորացված համայնքում, համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների, առկա է 2017 թվականի արտադրության մեկ գրեյդեր կցորդով, նույն թվականի արտադրության ունիվերսալ քաղաքային փոշեհան/փոշեկուլ, ավտո-ջրող մեքենա, 3 «Մազ» ինքնաթափ (MAZ) և 2 «Terex» էքսկավատոր: Ներհամայնքային ճանապարհների սպասարկման համար նախատեսված այլ տեխնիկական միջոցներ համայնքը չունի:

2.5.2 ԴԻԼԻՉԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԻՑ

Տնային տնտեսությունների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների շրջանակներում Դիլիջան համայնքում իրականացվել է թվով 160 հարցումներ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Առավել մեծ թվով հարցումներ իրականացվել են Դիլիջան քաղաքում (համայնքում արված հարցումների 49%-ը) և Հաղարծին գյուղում (համայնքում արված հարցումների 19%-ը): Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.5.1-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Դիլիջան	18667	79	49%
Հաղարծին	4085	31	19%
Թեղուտ	1572	8	5%
Գոշ	1129	11	7%
Հովք	430	11	7%
Աղավնավանք	336	11	7%
Խաչարձան	372	9	6%
Ընդամենը	26591	160	100%

Աղյուսակ 2.5.1 Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակի բաշխումը Դիլիջան համայնքի բնակավայրերում

Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ, որքանով է Ձեզ համար կարևոր ներբնակավայրային բարեկարգ ճանապարհներ ունենալը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 83%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 17%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Հարցման ենթարկված

բնակիչներից ոչ մեկը չի նշել, որ այս հիմնախնդիրն իրենց համար կարևոր չէ: Այս ոլորտն առավել կարևորել են Թեղուտ, Հովք, Աղավնավանք, Խաչարձան բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.5.2):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Դիլիջան	80%	20%	0%	0%
Հաղարծին	88%	12%	0%	0%
Թեղուտ	100%	0%	0%	0%
Գոշ	47%	53%	0%	0%
Հովք	100%	0%	0%	0%
Աղավնավանք	100%	0%	0%	0%
Խաչարձան	100%	0%	0%	0%
Ընդամենը	83%	17%	0%	0%

Աղյուսակ 2.5.2 Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգ լինելու հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար

Հարցման ենթարկված բնակիչներին հարց է ուղղվել, թե հիմնականում ինչպիսի ծածկույթ ունեն իրենց բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհները, որոնց արդյունքները ամփոփված են Աղյուսակ 2.5.3-ում, որտեղ ներկայացված են այն տարբերակները, որոնք հարցման ենթարկված բնակիչների կողմից նշվել են ամենաշատը: Համաձայն արդյունքների՝ Հաղարծինում, Հովքում, Աղավնավանքում, Խաչարձանում բոլոր տիպի փողոցները առավել հաճախ նշվել են որպես գրունտային: Դիլիջանում փողոցները հիմնականում ասֆալտապատ են՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով: Գոշում նույնպես առկա են հիմնականում ասֆալտապատ փողոցներ՝ տեղ-տեղ քայքայված ծածկույթով, իսկ Թեղուտում առկա են խճապատ փողոցներ:

Բնակավայր	Ներբնակավայրային գլխավոր փողոցներ	Երկրորդական փողոցներ	Միջբնակավայրային ճանապարհներ
Դիլիջան	Հիմնականում ասֆալտապատ, քայքայված ծածկույթով դժվարանցանելի	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով
Հաղարծին	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Թեղուտ	Գրունտային ծածկույթ	Խճապատ	Խճապատ
Գոշ	Գրունտային ծածկույթ	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով	Հիմնականում ասֆալտապատ տեղ-տեղ քայքայված ծածկույթով
Հովք	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Աղավնավանք	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ
Խաչարձան	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ	Գրունտային ծածկույթ

Աղյուսակ 2.5.3. Համայնքային փողոցների և ճանապարհների ծածկույթների հիմնական տիպերն ըստ համայնքի բնակիչների շրջանում հարցման արդյունքների

Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ, որտեղ 1-ը նշանակում է, որ բնակիչները ծառայություններից «ընդհանրապես բավարարված չեն», 4-ը՝ «լիովին բավարարված են»: Աղյուսակ 2.5.4-ում և 2.5.5-ում ներկայացված են Ախուրյան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները՝ համապատասխանաբար գլխավոր և երկրորդական փողոցների համար⁷: Համաձայն գնահատման արդյունքների՝ բոլոր ցուցանիշների մասով և՛ ներբնակավայրային գլխավոր, և՛ երկրորդական փողոցների համար ստացվել են բացասական գնահատականներ բոլոր բնակավայրերի համար: Առավել բացասական են գնահատվել ներբնակավայրային երկրորդական փողոցների սպասարկմանը վերաբերող ցուցանիշները: Համեմատաբար առավել բարձր են գնահատվել ներբնակավայրային գլխավոր փողոցների ծածկույթի վիճակից Թեղուտ և Խաչարձան բնակավայրերի բնակիչների բավարարվածությունը, իսկ Թեղուտում բնակիչների բավարարվածությունը փոսալցման աշխատանքներից:

⁷ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:

Բնակավայր	Ներքնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսայցումներ	Անձրևների ժամանակ փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգ	Ձմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներքնակավայրային փողոցների երկայնքով մայթերի առկայություն	Մայթերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Դիլիջան	2.24	1.70	1.19	1.70	1.84	1.66	1.38	1.06
Հաղարծին	2.48	2.13	0.32	2.13	2.06	2.10	1.29	0.10
Թեղուտ	2.88	2.63	0.38	1.38	0.25	0.25	0.00	0.00
Գոշ	2.27	2.09	1.64	2.18	2.18	1.91	1.64	0.73
Հովք	1.00	0.73	0.36	0.00	0.45	0.27	0.27	0.00
Աղավնավանք	1.27	1.18	0.45	0.82	0.27	0.27	0.00	0.00
Խաչարձան	2.89	1.22	1.89	0.33	0.22	0.56	0.56	0.00
Միջինում	2.21	1.72	0.94	1.54	1.53	1.44	1.09	0.59

Աղյուսակ 2.5.4. Ներհամայնքային գլխավոր փողոցների սպասարկման որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը բնակիչների կողմից

Բնակավայր	Ներքնակավայրային փողոցների ծածկույթի վիճակ	Փողոցների ժամանակին և պատշաճ փոսայցումներ	Անձրևների ժամանակ փողոցների երկայնքով ջրահեռացման համակարգ	Ձմեռային ամիսների ընթացքում փողոցների մաքրում ձյունից, սառույցից	Ներքնակավայրային փողոցների երկայնքով մայթերի առկայություն	Մայթերի բավարար լայնություն և անցանելիություն	Փողոցների մաքրում փոշուց և կենցաղային աղբից	Փողոցների ընդհանուր բարեկարգվածություն
Դիլիջան	1.25	0.78	0.59	0.62	0.56	0.58	0.56	0.39
Հաղարծին	1.24	0.54	0.11	0.36	0.00	0.00	0.11	0.14
Թեղուտ	1.63	1.50	0.25	0.38	0.00	0.00	0.00	0.00
5.1 ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԵՎ ԱՇՈՑՔ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2014-2018 ԹԹ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԿԵՐԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ


Ֆինանսական վերլուծության համար անհրաժեշտ տվյալները ձեռքբերելու նպատակով հարցումներ են ուղարկվել ընտրված բոլոր 6 խոշորացված համայնքների համայնքապետարաններ: Բոլոր համայնքապետարաններին ուղարկվել են միևնույն բովանդակությամբ հարցումներ, սակայն ոչ բոլորից են ստացվել անհրաժեշտ տվյալներ: Մասնավորապես՝ գնումների պայմանագրերի, կատարված աշխատանքների բնույթի, բյուջեների հաշվետվությունների, որտեղ արտացոլված պետք է լինի «Տրանսպորտ» գործառնական հոդվածների ներքո կատարված տնտեսագիտական ծախսերը, տեղեկատվություն չի տրամադրվել: Ստացված տվյալները համադրվել են Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքում տեղադրված տվյալների հետ: Մարզպետարանների կայքերից ուսումնասիրվել են նաև համայնքների տարեկան աշխատանքային պլանները: Անհամապատասխանություններ են նկատվել համայնքապետարաններից ստացված տվյալների և Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքում տեղադրված բյուջեներում: Նման դեպքերում հիմք են ընդունվել նախարարության կայքում արտացոլված տվյալները: Համայնքապետարանի կողմից ներկայացված տվյալները ներկայացված են հավելվածներում: Ուսումնասիրության համար դիտարկվել են 2014-2018թթ-ը՝ մինչ խոշորացումը և խոշորացումից հետո առկա իրավիճակները վերլուծելու համար: Թումանյան և Դիլիջան համայնքները խոշորացվել են 2015 թ-ին, Աշոցք և Նոյեմբերյան համայնքները՝ 2016թ-ին, իսկ Ախուրյան և Ստեփանավան համայնքները՝ 2017 թ-ին: Միավորման ազդեցությունը ոլորտային խնդիրների լուծման հարցում գնահատելու համար դիտարկվել են նաև 2018 թ-ի տվյալները: 2014-2017թթ համար վերցվել են բյուջեների տարեկան կատարողական ցուցանիշները, իսկ 2018 թ-ի համար վերցվել է պլանային ցուցանիշը՝ իննամսյա ճշգրտումով: Ֆինանսական ուսումնասիրության արդյունքները համադրվել են նաև սույն ծրագրի շրջանակներում իրականացված սոցիալառնային արդյունքների հետ՝ հասկանալու ծախսեր-բնակչության բավարարվածություն կապը:

Ախուրյան համայնք

Ախուրյան համայնքի վարչատարածքային սահմանների փոփոխությունը եղել է 2017 թ-ի նոյեմբերին՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՀ ՀՕ – 93 - Ն օրենքով⁹: Նոր կազմավորված համայնքն իր մեջ ներառել է նախկին Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Ջրառատ և Ախուրյան համայնքները: Նոր կազմավորված համայնքի կենտրոնը համարվում է Ախուրյան համայնքը: Նշենք, որ համայնքների բյուջեներն ըստ մեր դիտարկված ժամանակաշրջանի՝ 2014-2018թթ ունեցել են հետևյալ մեծությունը՝

⁹ <http://shirak.mtad.am/about-communities/582/>

Գծապատկեր 1. Ախուրյան խոշորացված համայնքի և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների փաստացի բյուջեները 2014-2017թթ-ի և 2018թ պլանային ցուցանիշները/հազ դրամ¹⁰




Ինչպես երևում է գծապատկերից մինչև խոշորանալը Ախուրյան համայնքի բյուջեն ավելի մեծ է եղել, քան մյուս բոլոր յոթ համայնքներինը միասին՝ համապատասխանաբար 2014-2016թթ՝ 83,8%, 96%, 79%: Հարկ է նշել, որ մինչ խոշորացումը բոլոր համայնքների բյուջեների աճի դինամիկան եղել է դրական, բացառություն է կազմում 2015 թ-ը և 2018թ-ի պլանային ցուցանիշը: Նշենք նաև, որ 2017թ-ի Ախուրյան խոշորացված համայնքի պլանավորված բյուջեն ևս մեծ է եղել, սակայն կատարվել է 82%-ով: Այստեղից կարող ենք ենթադրել, որ 2018 թ-ի պլանավորումը էապես շեղվում է համայնքում առկա կարիքների համար անհրաժեշտ միջոցներից՝ ուռճացված է և պարունակում է ռիսկեր:

Դիտարկենք համայնքներին պետական բյուջեից հատկացված դոտացիաների դինամիկան՝ հասկանալու բյուջեի աճի աղբյուրները:

¹⁰ 2018թ-ի համար վերցված են տվյալ տարվա համար պլանավորված ցուցանիշների 2018թ հոկտեմբերի 1-ի դրությամբ ճշտված ցուցանիշները:
Ցուցանիշները վերցված են ՀՀՇՄ պաշտոնական կայք էջում տեղադրված բյուջեներից <http://shirak.mtd.am/community-budgetary-expenditure/>

Գծապատկեր 2. Ախուրյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետությունից տրամադրվող դոտացիաները 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դրամ¹¹




Ինչպես երևում է գծապատկերից, 2016-18թթ-ին նախորդ տարիների համեմատ աճել են համայնքներին տրվող դոտացիաները՝ 2014 և 2015թթ-ին այն կազմել է համապատասխանաբար 26 և 28 մլն ՀՀ դրամ, 2016-2018թթ այ կազմել է 29 մլն ՀՀ դրամ: Աճը դինամիկ բնույթ է կրում: Հատկանշական է, որ 2016-18թթ-ին դոտացիայի գումարը չի աճել, ինչը նշանակում է, որ համայնքների միավորումը պետության կողմից լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություն չունի, մնչդեռ, միավորման հիմնադրամներից մեկը հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարաորությունն է: Ելնելով հետազոտության խնդիրներից՝ անդրադառնանք ծախսերին և ավելի մանրամասն դիտարկենք ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտին հատկացված ֆինանսական միջոցների բաշխվածությունը մինչ խոշորացումը և խոշորացումից հետո:

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտին հատկացված ծախսերի դինամիկան ներկայացված է գծապատկեր 8-ում

¹¹ 2018թ-ի համար վերցված են տվյալ տարվա համար պլանավորված ցուցանիշների 2018թ հոկտեմբերի 1-ի դրությամբ ճշտված ցուցանիշները:
Ցուցանիշները վերցված են ՀՀՇՄ պաշտոնական կայք էջում տեղադրված բյուջեներից <http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/>

Գծապատկեր 8. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը 2014-2018թթ /հազ դ¹²



Ամենամյա ճանապարհաշինական աշխատանքներ իրականացվել են Ախուրյան, Ջրառատ, Կառնուտ, Բասեն, 2015-16թթ Կամո , իսկ 2016թ-ին նաև Հովիտ համայնքներում: Նշենք, որ Հովիտում իրականացվել են կապիտալ բնույթի ծախսեր, Բասենում և Ջրառատում 2015-2016թթ-ին միայն վարչական բնույթի ծախսեր են իրականացվել: Կառնուտում, Կամոյում իրականացվել են կապիտալ բնույթի ծախսեր, իսկ նախկին Ախուրյան համայնքում իրականացված ճանապարհաշինական աշխատանքների մեծ մասը եղել են կապիտալ բնույթի: Խոշորացումից հետո նկատում ենք, որ ոլորտային ծախսերը մեծացել են:

¹² Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Աղյուսակ 4 Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը ըստ ֆոնդային և վարչական մասերի 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ.¹³


		Ախուրյան	Ջրատատ	Հովիտ	Կառնուտ	Կամո	Բասեն	Արևիկ	Այգաբաց
2014	Վարչ. %	0	100	0	78	0	100	0	0
	Ֆոնդ. %	100	0	0	22	0	0	0	0
	Ընդ/հազ դ	29295	714	0	3173,5	0	216,4	0	0
2015	Վարչ. %	1,4	100	0	50	7,7	100	0	0
	Ֆոնդ. %	98,6	0	0	50	92,3	0	0	0
	Ընդ/հազ դ	31503,4	742,5	0	1990,4	1091,1	389	0	0
2016	Վարչ. %	8,2	100	0	48,8	23	100	0	0
	Ֆոնդ. %	91,8	0	100	51,2	77	0	0	0
	Ընդ/հազ դ	30142,6	1120	850	6261,3	1274,4	1285,3	0	0
2017	Վարչ. %	34,5	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	65,5	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	44954,7	-	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	24	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	76	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	46000	-	-	-	-	-	-	-

Ախուրյան համայնքում դինամիկայում աճել է ընթացիկ բնույթի ծախսերին հատկացվող գումարները, իսկ ֆոնդայինը նվազել է: Կառնուտ և Կամո համայնքներում դիտարկվում է հակառակ միտումը, իսկ մյուս համայնքներում իրավիճակ չի փոխվել:

Համայնքների միավորման ազդեցությունն առավել պատկերավոր հասկանալու համար դիտարկենք մեկ բնակչի հաշվով ճանապարհաշինական ծախսերը դինամիկայում ինչպիսի փոփոխության են ենթարկել:

¹³ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Գծապատկեր 9. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դ.¹⁴



Գծապատկեր 9-ից արդեն իսկ երևում է, որ մեկ բնակչի հաշվով ճանապարհաշինական ծախսը նվազել է չնայած որ ընդհանուր ճանապարհաշինական ոլորտի ծախսերը ավելացել էր: Սա խոսում է մեկ համայնքի ֆինանսական միջոցների տեղաբաշխման մասին: Համաձայն Ախուրյանի ՏԱՊ 2018-ի փոսալցման և սպասարկման աշխատանքներ են իրականացվելու Ախուրյան համայնքի բոլոր բնակավայրերում: Համաձայն համայնքապետարանից ստացված տվյալների 2017թ-ին ոլորտային ծախսն ըստ բնակավայրերի ունեցել է հետևյալ բաշխվածությունը՝ Ախուրյան՝ 75,2%, Արևիկ՝ 2,3%, Կառնուտ՝ 15,8%, Զրառատ՝ 5,3%, Կամո՝ 1,4%: Բնակչության բաշխվածությունն ըստ համայնքների հետևյալն է՝ Ախուրյան՝ 53%, Արևիկ՝ 9,8%, Այգաբաց՝ 4,5%, Կառնուտ՝ 6,5%, Հովիտ՝ 2,8%, Բասեն՝ 9,3%, Զրառատ՝ 6,4%, Կամո՝ 7,7%: Այս ոլորտում ևս համաչափություն չի նկատվում: Ախուրյան համայնքում ոլորտային ծախսերի տեսակարար կշիռն ավելի մեծ է եղել քան բնակչության տեսակարար կշիռն է:

Հատկանշական է որ միավորված համայնքում մեկ բնակչին ընկնող ճանապարհաշինարարական ծախսը ավելի քիչ է քան մինչև միավորումը Կառնուտ համայնքում, որը փաստում է այն մասին, որ միավորումը նվազեցնում է մեկ կամ մի քանի համայնքներում մատուցված ծառայությունների որակը կամ քանակը՝ հանուն մյուս համայնքների:


Աշոցք համայնք

Աշոցք համայնքը կազմավորվել է 2016 թվականի հոկտեմբերին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և

¹⁴ Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՀՕ – 100 - Ն օրենքով: ¹⁵ Աշոցք համայնքն իր մեջ ներառում է նախկին Աշոցք, Կարմրավան, Կրասար, Մեծ Մեպասար, Փոքր Մեպասար, Ղազանչի, Սիգավետ, Թավշուտ, Բավրա, Սարազյուղ, Զույգաղբյուր համայնքները: Նոր կազմավորված համայնքի մեջ մտնող նախկին համայնքները ըստ տարբեր տարիների ունեցել են հետևյալ բյուջեները.


Գծապատկեր 10. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող համայնքների 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված բյուջեները/հազ դ¹⁶



2014-2018թթ դինամիկայում ընդհանուր համայնքային բյուջեն աճել է, աճել են նաև նախկին համայնքների բյուջեները: Աճի պատճառները հասկանալու համար նախ դիտարկենք պետբյուջեից տրամադրվող դոտացիաների շարժը ըստ համայնքների՝


Գծապատկեր 11. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող համայնքներին 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված դոտացիաների փոփոխությունը. / հազ դ¹⁷

¹⁵ ՀՀ Շիրակի մարզպետարան <http://shirak.mtad.am/about-communities/590/>
¹⁶ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>
¹⁷ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>



Գծապատկեր 11-ից երևում է որ դոտացիաների հատկացման չափը դինամիկ աճել է մինչ 2016թ-ը, ինչով էլ հենց պայմանավորված է նույն ժամանակաշրջանում ընդհանուր բյուջեի աճը: 2016 թ-ի նոյեմբեր ամսին դոտացիաների հաշվարկում մեթոդաբանության փոփոխություն է եղել, որով էլ կարելի է պայմանավորել հաջորդիվ դինամիկայի փոփոխությունը: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ 2017 և 2018 թթ աճել են սեփական եկամուտները՝ համայնքների միավորումը նպաստել է եկամուտների հավթագրելիությանը:

Գծապատկեր 16. Աշոցք խոշորացված և նրա վարչական կազմում մտնող նախկին համայնքներում ճանապարհաշինության աշխատանքների համար 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը/հազ դ.¹⁸



Ճանապարհաշինության ծախսերը ևս էական աճ են գրանցել խոշորացումից հետո՝ 2017թ-ին 667%, 2018թ-ին՝ 21% նվազել է, սակայն 2014-2016թթ համեմատ բարձր ցուցանիշը պահպանվել է: Համայնքային բյուջեներում ոլորտային ծախսերն ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝

Աղյուսակ 5 Աշոցք խոշորացված և նրա վարչական կազմում մտնող նախկին համայնքներում ճանապարհաշինության աշխատանքների համար 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի տեսակարար կշիռները համայնքային բյուջեում.¹⁹

	Աշոցք	Կրասար	Մեծ Սեպասար	Ղազանչի	Սիզավետ	Թավշուտ	Սարազյուղ	Չույզաղբյուր
2014	0,9%	0	0	2,3%	0,9%	1,2%	1,3%	0
2015	0,3%	3,7%	8%	2%	7,7%	0	0	3,7%
2016	1%	-	-	-	-	-	-	-
2017	7,5%	-	-	-	-	-	-	-
2018	5,3%	-	-	-	-	-	-	-

Ինչպես տեսնում ենք Աշոցք համայնքում խոշորացումից ոլորտին հատկացվող ծախսերի տեսակարար կշիռը աճել է՝ բացառությամբ 2018 թ-ի: Սակայն Մեծ Սեպասար և Սիզավետ համայնքների հետ համեմատած ցուցանիշը նվազել է: Համայնքների միավորումից հետո ոլորտային ծախսերի բացարձակ

¹⁸ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

¹⁹ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

ցուցանիշները դրական աճ են գրանցել, ընդհանուր առմամբ աճել է նաև համայնքային բյուջեում ոլորտի ունեցած տեսակարար կշիռը: Սակայն աճը բոլոր բնակավայրերի համար միանշանակ չէ: Աշոցքի 2018թ ՏԱՊ-ում նշված են նախկին Կարմրավան, Մեծ Մեպասար, Փոքր Մեպասար բնակավայրերի միջբնակավայրային ճանապարհների վերանորոգումներ: Դիտարկենք ոլորտի կապիտալ/ֆոնդային բյուջե/ և ընթացիկ/վարչական բյուջե/ ծախսերի համամասնությունը և դինամիկան:

Աղյուսակ 6. Աշոցք խոշորացված և նրա վարչական կազմում մտնող նախկին համայնքներում ճանապարհաշինության աշխատանքների համար 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի²⁰

		Աշոցք	Կարմրավան	Կրասար	Մեծ Մեպասար	Փոքր Մեպասար	Ղազա նչի	Միգավետ	Թավշուտ	Բավրա	Սարագյուղ	Զույգ աղբյուր
2014	Վարչ. %	100	0	100	0	0	100	100	100	0	100	0
	Ֆոնդ. %	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	Ընդ/հազ դ	600	0	300	0	0	200	59,1	100	0	560,2	0
2015	Վարչ. %	100	0	0	0	0	100	100	0	0	100	0
	Ֆոնդ. %	0	0	0	100	0	0	0	0	0	0	100
	Ընդ/հազ դ	200	0	0	1480	0	300	704,4	0	0	466,7	300
2016	Վարչ. %	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	0	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	1894	-	-	-	-	-	-	-	-	-	-
2017	Վարչ. %	24,7	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	75,3	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	14575	-	-	-	-	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	76	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	24	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	11496	-	-	-	-	-	-	-	-	-	-


Աղյուսակից երևում է, որ մինչ խոշորանալը համայնքներում ճանապարհաշինարարական աշխատանքների համար հատկացված միջոցները հիմնականում վարչական բնույթի ծախսեր են եղել: Բացառություն է կազմում 2017 թ-ը, երբ ոլորտային ծախսերի 75,3%-ը հատկացվել է կապիտալ ճանապարհաշինարարության համար: Դիտարկելով Աշոցք համայնքի պաշտոնական կայքում արտացոլված 2017 թ-ի տվյալները²¹ տեսնում ենք, որ ֆոնդային բյուջեն նախատեսված է եղել «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով: Հետաքրքիր է, որ 2018 թ-ի համար ճանապարհաշինություն հոդվածի ֆոնդային մասով նախատեսված ծախսը ևս սարքավորումների ձեռքբերման նպատակով է եղել: Սա նշանակում է որ չնայած արված կապիտալ ծախսերին համայնքում փողոցների կապիտալ նորոգում չի եղել: Ձեռք բերված մեքենաներով արվում են ժամանակավոր հարթեցումներ:

Խոշորացումից հետո մեկ բնակչի հաշվով ճանապարհաշինարարական ծախսերը աճել են՝

²⁰ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

²¹ <http://ashotsq.am/Pages/NewBudget/Out/result.aspx>

Գծապատկեր 17. Մեկ բնակչի հաշվով ճանապարհաշինական աշխատանքների ծախսը՝ Աշոցք խոշորացված և վերջինիս վարչական տարածքների մեջ մտնող նախկին համայնքներում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներով/հազ դ.²²



Միավորումից հետո մեկ բնակչի հաշվով ծախսերի նվազում նկատվում է Սարագյուղ համայնքում, և Զույգաղբյուրում՝ 2015թ-ի համեմատ: Չնայած բյուջեի մեծացմանը, ոլորտային ծախսերի ավելացմանն ու ֆոնդային բնույթի ծախսերի իրականացմանը այս ոլորտում ևս չի նկատվում աշխատանքների որակի բարելավում:

5.2 ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՉԱՆ ԵՎ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2014-2018 ԹԹ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Դիլիջան համայնք


Դիլիջան համայնքը վերաձևավորվել է 2015 թ-ի դեկտեմբերի 15-ին՝ «ՀՀ վարչատարածքային բաժանումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների պահանջով: Նոր խոշորացված համայնքում ընդգրկվել են նախկին Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան համայնքները: Նոր խոշորացված համայնքն ունի 18,667 մարդ:²³

²² Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

²³ <http://tavush.mtad.am/about-communities/697/>

Դիտարկենք Դիլիջան խոշորացված համայնքի բյուջեն՝ մինչ խոշորանալը ըստ առանձին համայնքների ու խոշորանալուց հետո՝

Գծապատկեր 18. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների բյուջեների 2014-2017թթ-ի կատարված և 2018 թ-ի պլանային ցուցանիշներ/հազ դ.²⁴




Ինչպես դիտարկված մյուս համայնքներում Դիլիջանում ևս համայնքների միավորումից հետո նկատվում է միասնական բյուջեի աճ: Աճը կտրուկ նկատվում է 2018թ-ին. 2014-2018թթ դինամիկայում համապատասխանաբար՝ 7,7%, 8,6%, 5% և 37%: Աճի պատճառները հասկանալու համար դիտարենք պետական դոտացիաների չափերն ըստ տարիների.

Գծապատկեր 19. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին 2014-2017թթ տրամադրված և 2018թ պլանավորված դոտացիաները /հազ դ²⁵

²⁴ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>


²⁵ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>



Ինչպես տեսնում ենք պետությունից տրամադրվող դոտացիաները դինամիկ աճել են՝ բացառությամբ 2018թ-ի: 2014-2018 թթ դինամիկայում՝ 12%, 5,7%, 4% և 2018թ-ին նվազել է 1,4%-ով: Ինչպես տեսնում ենք 2015-2016 թթ բյուջեի աճը մեծամասամբ պայմանավորված է դոտացիաների աճով: Հարկ է նշել, որ Դիլիջան համայնքում պետությունից բացի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից դիտարկված ժամանակահատվածում տրամադրվել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ: 2014-2017թթ Դիլիջան համայնքին տրված սուբվենցիաներն ունեցել են հետևյալ դինամիկան՝ 5մլն, 4մլն, 14 մլն, 12 մլն և 10,5 մլն: 2014 թ-ին Դիլիջան համայնքից բացի սուբվենցիաներ ստացել են նաև Հաղարծինը՝ 6,7 մլն, Թեղուտը՝ 28 մլն, Աղավնավանքը՝ 4,8 հազ, Հովքը՝ 4,8 հազ դրամ» Իսկ 2015թ-ին Հաղարծինը՝ 8,8 մլն, Խաչարձան՝ 9 մլն, Աղավնավանքը՝ 5 մլն, Հովքը՝ 1,5 մլն, Գոշ՝ 16 մլն դրամ:

2015թ և 2016թ-ին համայնքները ստացել են նաև այլ դոտացիաներ: դոտացիաներ: 2015 թ-ին՝ Դիլիջանում 33 մլն, Հաղարծինում 2,8 մլն, Աղավնավանքում 298 հազ, Գոշում 387 հազ ՀՀ դրամ: Նկատում ենք, որ համեմատ դիտարկվող ժամանակաշրջանի 2015 թ-ին սուբվենցիաներ և այլ դոտացիաներ են տրամադրվել: Այստեղից եզրակացնում ենք, որ չնայած 2016-2018 թթ վերոնշյալ հոդվածներով եկամուտները կտրուկ նվազել են, սակայն համայնքային բյուջեն չի նվազել: Սա խոսում է համայնքների միավորումից հետո սեփական եկամուտների հավաքագրելիության աստիճանի մեծացման մասին:

Գծապատկեր 19. Դիվիզան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին 2014-2017թթ տրամադրված և 2018թ պլանավորված դոտացիաները /հազ դ²⁶




Ինչպես տեսնում ենք պետությունից տրամադրվող դոտացիաները դինամիկ աճել են՝ բացառությամբ 2018թ-ի: 2014-2018 թթ դինամիկայում՝ 12%, 5,7%, 4% և 2018թ-ին նվազել է 1,4%-ով: Ինչպես տեսնում ենք 2015-2016 թթ բյուջեի աճը մեծամասամբ պայմանավորված է դոտացիաների աճով: Հարկ է նշել, որ Դիվիզան համայնքում պետությունից բացի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից դիտարկված ժամանակահատվածում տրամադրվել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ: 2014-2017թթ Դիվիզան համայնքին տրված սուբվենցիաներն ունեցել են հետևյալ դինամիկան՝ 5մլն, 4մլն, 14 մլն, 12 մլն և 10,5 մլն: 2014 թ-ին Դիվիզան համայնքից բացի սուբվենցիաներ ստացել են նաև Հաղարծինը՝ 6,7 մլն, Թեղուտը՝ 28 մլն, Աղվնավանքը՝ 4,8 հազ, Հովքը՝ 4,8 հազ դրամ» Իսկ 2015թ-ին Հաղարծինը՝ 8,8 մլն, Խաչարձան՝ 9 մլն, Աղվնավանքը՝ 5 մլն, Հովքը՝ 1,5 մլն, Գոշ՝ 16 մլն դրամ:

2015թ և 2016թ-ին համայնքները ստացել են նաև այլ դոտացիաներ: դոտացիաներ: 2015 թ-ին՝ Դիվիզանում 33 մլն, Հաղարծինում 2,8 մլն, Աղվնավանքում 298 հազ, Գոշում 387 հազ ՀՀ դրամ: Նկատում ենք, որ համեմատ դիտարկվող ժամանակաշրջանի 2015 թ-ին սուբվենցիաներ և այլ դոտացիաներ են տրամադրվել: Այստեղից եզրակացնում ենք, որ չնայած 2016-2018 թթ վերոնշյալ հոդվածներով եկամուտները կտրուկ նվազել են, սակայն համայնքային բյուջեն չի նվազել: Սա խոսում է համայնքների միավորումից հետո սեփական եկամուտների հավաքագրելիության աստիճանի մեծացման մասին:

Դիվիզան համայնքում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը միավորումից հետո նվազել են՝ հակառակ այն բանի որ ընդհանուր բյուջեն աճել է (գծապատկեր 25):

²⁶ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Գծապատկեր 25. Դիվիզան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը/հազ դ ²⁷



Դիտարկված ժամանակաշրջանում կատարված ծախսերի մեծ մասը եղել են կապիտալ բնույթի ծախսեր, սակայն մեր կողմից դիտարկված 10 փողոցներից միայն մեկն է եղել բարձր որակի ասֆալտապատված:²⁸ Համաձայն մեր կողմից իրականացված հարցումների հարցմանը մասնակցած բնակչության կշռող մեծամասնության՝ 83%-ի կարծիքով ճանապարհների բարեկարգ լինելու հարցը չափազանց կարևոր է:²⁹ Ոլորտին հատկացվող ծախսերը 2014-2018 թթ համայնքային բյուջեում ունեցել է հետևյալ տեսակարար կշիռը՝ Դիվիզանում 35,9%, 18,7%, 6%, 6,7% և 7,7%, Գոշում՝ 3,4% և 3,6%, Թեղուտում 9,9% և 6,8% իսկ Հաղարծինում 1,2% և 1,3%: Խնդրի արդիականությանը համապատասխան ուշադրության չի արժանանում համայնքային իշխանությունների կողմից:

²⁷ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

²⁸ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, «Ներհամայնքային ճանապարհների սպասարկում» զեկույց, Գրաֆիկ 20

²⁹ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, «Ներհամայնքային ճանապարհների սպասարկում» զեկույց, Աղյուսակ 2.5.2


Աղյուսակ 9.Դիվիզան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ վարչական և ֆոնդային մասերի³⁰

		Դիվիզան	Աղավնա	Գոշ	Հովիտ	Թեղուտ	Խաչարձա	Հաղարծի
		վանք					ն	ն
2014	Վարչ. %	0	0	0	0	100	0	0
	Ֆոնդ. %	100	0	100	0	0	0	100
	Ընդ/հազ դ	150170	0	779	0	2930	0	900
2015	Վարչ. %	0	0	0	0	100	0	0
	Ֆոնդ. %	100	0	100	0	0	0	100
	Ընդ/հազ դ	87218	0	900	0	1190	0	900
2016	Վարչ. %	2	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	98	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	39515	-	-	-	-	-	-
2017	Վարչ. %	2,3	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	97,7	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	46969	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	5	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	95	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	73508	-	-	-	-	-	-

Համայնքների միավորումից հետո աճել է ֆոնդային բնույթի ծախսերը: Միավորումը նպաստել է երկարաժամկետ լուծումներ գտնելուն: Ընդհանուր ստացվում է, որ համայնքապետարանի կողմից իրականացվում են ճանապարհաշինական աշխատանքներ, սակայն խնդրի կարևորությունը չի նվազում, և զուգահեռաբար համայնքապետարանն է սկսում նվազեցնել ոլորտին հատկացվող ֆնանսական մջոցները:

³⁰ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Գծապատկեր 26. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ բնակչի հաշվով/հազ դ³¹




Միավորումից հետո մեկ բնակչի հաշվով ծախսերը կտրուկ նվազել են Դիլիջան համայնքի բնակիչների համար՝ 2016 թ-ին 2015թ-ի համեմատ 70%: Միավորումից հետո դինամիկ աճ է նկատվում, սակայն ավելի փոքր աճի ցուցանիշով քան մինչ խոշորացումն էր՝ 2017թ-ին 20%, 2018թ-ին 55%:

Նոյեմբերյան համայնք

Նոյեմբերյան համայնքը վերաձևավորվել է 17.06.2016թ. ՀՕ-100-Ն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի պահանջով: Տավուշի մարզի խոշորացված Նոյեմբերյան համայնքում ընդգրկվել են Նոյեմբերյան, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեպար, Ոսկեվան և Ջուջևան համայնքները: Մինչ ուսումնասիրվող ոլորտներին անդրադառնալը դիտարկենք ընդհանուր բյուջեն, պետբյուջեից հատկացվող դոտացիոն հատկացումները՝ հասկանալու միավորման հավանական ազդեցությունը բյուջեի ծավալների փոփոխման հարցում:

³¹ Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից


Գծապատկեր 27. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ-ի կատարված և 2018թ պլանավորված բյուջեները/հազ դ.³²



Համայնքների միավորումից հետո համայնքների միասնական բյուջեն 2016թ-ին նվազել է 15,4%-ով՝ 73,8 մլն ՀՀ դրամով, այնուհետև 2018 թ-ին պլանավորվել է 21% աճ, ինչը գերազանցում է մինչ խոշորացումը եղած բյուջեի ցուցանիշը: Դիտարկենք նաև պետբյուջեից հատկացվող դոտացիաների դինամիկան:

³² Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Գծապատկեր 28. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների պետբյուջեից 2014-2017թթ-ի հատկացված և 2018թ պլանավորված դոտացիաները/հազ դ³³



Ինչպես տեսնում ենք համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները չեն նվազել՝ անգամ ավելացել են: Սակայն եկամուտների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այս համայնքներում ստացել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ, որոնք ևս անհրաժեշտ է դիտարկել:


Նոյեմբերյան համայնքում ևս սուբվենցիոն հատկացումներ են եղել: 2014-2018 թթ դինամիկայում Նոյեմբերյան համայնքում սուբվենցիաները համապատասխանաբար եղել են հետևյալ ծավալների՝ 4մլն, 4,9մլն, 8,8մլն, 10,6 մլն և 7,7մլն: 2014 թ-ին Բարեկամավանում՝ 1 մլն, Բերդավանում 3 մլն, Կոթիում 153 հազ, Ոսկեպարում 23 հազ, Ոսկևանում 100 հազ և Ջուջևանում 28 հազ դրամ: 2015 թ-ին Բարեկամավանում 10 մլն, Բաղանիսում 9 մլն, Բերդավանում 7 մլն, Դովեղում 1,3 մլն, Կոթիում 9,7 մլն, Ոսկեպարում 6 մլն, Ոսկևանում 8 մլն և Ջուջևանում 7,6 մն դրամ: Նկատում ենք, որ 2015 թ-ին բոլոր համայնքներին տրամադրված սուբվենցիոն հատկացումները կտրուկ մեծ է եղել՝ 2014 թ-ի համեմատ աճել է 13,5%, իսկ 2016 թ-ին նվազել է մոտ 87%-ով՝ 55,8 մլն ՀՀ դրամով, ընդհանուր տարբեր տարիների համեմատ մոտ 7 անգամ ավել է եղել: Այն կազմել է 2015 թ-ի բյուջեի 13,5%-ը, իսկ 2016 թ-ի 2,1%-ը: Սրանով էլ կարելի է պայմանավորել 2015 թ-ի բյուջեի մեծությունը: Ուշագրավ է նաև այն, որ 2015 և 2016 թթ համայնքը ստացել է այլ դոտացիաներ, որոնք կազմել են բյուջեի համապատասխանաբար 7,5% և 7,8%-ը: 2015 թ-ին այլ դոտացիաներ ստացել են Նոյեմբերյանը 24,7 մլն, Դովեղը 3 մլն, Բերդավանը 1,9 մլն, Բարեկամավանը՝ 1,8 մլն, Ոսկևանը 1,5 մլն, Ոսկեպարը 1 մլն, Բաղանիսը՝ 560 հազ և Ջուջևանը՝ 400 հազ դրամ: 2016 թ-ին Նոյեմբերյանը ստացել է 31,5 մլն ՀՀ դրամի այլ դոտացիա: Այլ դոտացիաները 2017 թ-ից այլ դոտացիաներ չեն տրամադրվել, սակայն

³³ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

համայնքի բյուջեն աճել է, ինչը նշանակում է, որ 2017 թ-ից աճել է համայնքի սեփական եկամուտների հավաքագրելիությունը:

Ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ծախսերն ունեցել են հետևյալ դինամիկան՝

Գծապատկեր 33. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը/հազ դ³⁴



Համայնքների միավորումից հետո ոլորտին հատկացվող ծախսերը բացարձակ ցուցանիշով մեծացել են, բայց կանոնավոր կերպով աճ չեն գրանցել:

Ընդհանուր համայնքային բյուջեում ունեցած տեսակարար կշիռը ևս աճել է, բացառությամբ 2017 թ-ի՝

³⁴ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Աղյուսակ 15 Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին 2014-2017թթ հատկացված և 2018թ պլանավորված ծախսերի տեսակարար կշիռը համայնքի բյուջեի մեջ.³⁵

	Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2014	0,68%	0	0	0	0,2%	1,3%	0	0	0
2015	0,56%	0	0	0	0	0,76%	0	0	0
2016	2,2%	-	-	-	-	-	-	-	-
2017	0,48%	-	-	-	-	-	-	-	-
2018	7%	-	-	-	-	-	-	-	-

Կատարված աշխատանքների բնույթը հասկանալու նպատակով դիտարկենք ընթացիկ և կապիտալ ծախսերի բաշխվածությունը և դինամիկան:

Աղյուսակ 16. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի 2014-2018թթ-ին³⁶

		Նոյեմբերյան	Բաղանիս	Բարեկամավան	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2014	Վարչ. %	100	0	0	0	100	100	0	0	0
	Ֆոնդ. %	0	0	0	0	0	0	0	0	0
	Ընդ/հազ դ	948,3	0	0	0	123	600	0	0	0
2015	Վարչ. %	40	0	0	0	0	0	0	0	0
	Ֆոնդ. %	60	0	0	0	0	100	0	0	0
	Ընդ/հազ դ	949,3	0	0	0	0	435	0	0	0
2016	Վարչ. %	7	-	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	93	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	9028,7	-	-	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	0	-	-	-	-	-	-	-	-

³⁵ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից


³⁶ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

	Ֆոնդ. %	100	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	2000	-	-	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	0	-	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	100	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	35300	-	-	-	-	-	-	-	-

Խոշորացումից հետո ծախսերը կապիտալ ուղղվածություն են ունեցել: 2016թ-ին ծախսերի 5,8%-ը կատրվել են Նոյեմբերյան համայնքում, 18%-ը Բերդավան, իսկ 76%-ը Կոթիում, ընդ որում կապիտալ ծախսերն իրականացվել են Կոթի և Բերդավան համայնքներում: 2018 թ-ի ՏԱՊ-ով նախատեսվում է Նոյեմբերյան քաղաքի փողոցների, Բերդավան, Կոթի, Ոսկեվան և Ոսկեպար գյուղերի ներբնակավայրային ճանապարհների և հենապատերի նորոգում: Նշենք, որ մեր կողմից իրականացված հարցումների ժամանակ Նոյեմբերյան համայնքում հարցվածների 91%-ի կարծիքով չափազանց կարևոր է ճանապարհաշինության հարցը, իսկ Բարեկամավան, Բերդավան և Ոսկևան համայնքներում՝ 100%:³⁷

Մեկ բնակչի հաշվով ծախսի դինամիկան հետևյալն`

Գծապատկեր 34. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ-ին/հազ դրամ³⁸



³⁷ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»
 Ճանապարհաշինության Ձեկույց, էջ 83, Աղյուսակ 2.6.2

³⁸ Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից


Բացառությամբ 2017թ-ի մեկ բնակչի հաշվով ծախսը ևս աճել է խոշորացումից հետո: Համայնքների միավորումից հետո ճանապարհաշինական աշխատանքներ իրականացվել են միայն Նոյեմբերյան համայնքում: Հետևաբար կարող ենք փաստել, որ մեկ բնակչի հաշվով ծախսի ավելացման արդյունքում միավորված մյուս համայնքներում ճանապարհաշինության ոլորտում բարելավումներ չեն եղել:

5.3 ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2014-2018 ԹԹ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱԴԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ստեփանավան համայնք

Ստեփանավան համայնքը վերակազմավորվել է 2017 թ-ի հունիս ամսին՝ «ՏԻՄ օրենք»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումով:³⁹ Նոր ձևավորված համայնքն իր մեջ ներառում է նախկին Ստեփանավան, Ուրասար և Կաթնաղբյուր համայնքները: Նոր ձևավորված համայնքում բյուջեն շարունակել է փոքր աճ գրանցել՝ 2014-2018թթ-ին համապատասխանաբար 6,5%, 2%, 9,8% և 8%:

Գծապատկեր 35. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ փաստացի և 2018թ-ի պլանավորված բյուջեները /հազ դ⁴⁰




³⁹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5834&lang=arm>

⁴⁰ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Աճի ուղղությունը և պետական հոգաձույթյան միտումները հասկանալու համար դիտարկենք դոտացիաների դինամիկան ընտրված ժամանակաշրջանում:

Գծապատկեր 36. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից 2014-2017թթ տրամադրված և 2018 թ-ին պլանավորված դոտացիաները/ հազ դ ⁴¹




2015 թ-ին 2%-ով աճել է դոտացիաների չափը, 2016 թ-ին 0,2%-ով նվազել է, 2017 թ-ին 0,9%-ով աճել է, իսկ 2018 թ-ին 0,09% պակաս է պլանավորվել: Այս փոփոխությունները կարող են պայմանավորված լինել պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաների ընդհանուր բազայի տարբերությունով, և 2017 թ-ից կիրառվող նոր մեթոդաբանության հաշվարկով: Ստեփանավան համայնքում պետբյուջեից տրամադրվել են նաև նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ: Սուբվենցիաները տրամադրվել են միայն Ստեփանավան համայնքին, որը 2014-2018թթ դինամիկայում ունեցել է հետևյալ շարժը՝ 9,6մլն, 11,7 մլն, 11,7 մլն, 35,9 մլն և 10 մլն ՀՀ դրամ: Ցուցանիշը 2015թին 22% աճել է, 2016 թ-ին չի փոխվել, 2017 թ-ին 206% աճ է գրանցել և 2018 թ-ին անկում՝ 71%-ով: Հաշվի առնելով այս փոփոխությունները կարող ենք ասել, որ սեփական եկամուտները դինամիկ աճ են գրանցել:

Ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ծախսերը Ստեփանավան համայնքի բյուջեում ունեցել են հետևյալ դինամիկան՝ 1,2%, 1%, 0%, 3%, 7,6%: Միավորումից հետո ոլորտին հատկացվող ծախսերն աճել են:

⁴¹ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Գծապատկեր 41. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին 2014-2017 թթ հատկացված և 2018 թ-ին պլանավորված ծախսերը /հազ դ⁴²



Հետաքրքիր պատկեր է ստացել ճանապարհաշինության ոլորտում կատարվող ծախսերի դինամիկան: Բացի նախկին Ստեփանավան համայնքից ճանապարհաշինության ոլորտում ծախսեր՝ աշխատանքներ իրականացվել են Կաթնաղբյուր համայնքում միայն 2014թ-ին: 2016 թ-ին ընդհանրապես աշխատանքներ չեն իրականացվել: Կատարված աշխատանքների բնույթը հասկանալու համար դիտարկենք նաև ըստ վարչական և ֆոնդային մասերի տարանջատման՝

Աղյուսակ 19. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ-ի պլանավորված ծախսերը⁴³

		Ստեփանավան	Կաթնաղբյուր	Ուրասար
2014	Վարչ. %	0	0	100
	Ֆոնդ. %	100	0	0
	Ընդ/հազ դ	4046,5	0	457
2015	Վարչ. %	100	0	0
	Ֆոնդ. %	0	0	0
	Ընդ/հազ դ	3954,4	0	0
2016	Վարչ. %	0	0	0


⁴² Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

⁴³ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

	Ֆոնդ. %	0	0	0
	Ընդ/հազ դ	0	0	0
2017	Վարչ. %	7	-	-
	Ֆոնդ. %	93	-	-
	Ընդ/հազ դ	12871,7	-	-
2018	Վարչ. %	0	-	-
	Ֆոնդ. %	100	-	-
	Ընդ/հազ դ	34574,8	-	-

2014թ-ին կապիտալ աշխատանքներ են իրականացվել համայնքում, 2015թ-ին գրեթե նույն չափով ընթացիկ բնույթի ծախսեր՝ աշխատանքներ: 2016 թ-ին ընդհանրապես աշխատանքներ չեն իրականացվել այս ոլորտում, իսկ ահա 2017 և 2018 թթ-ին հիմնականում կապիտալ բնույթի աշխատանքներ են: Մյուս բնակավայրերից միայն Կաթնաղբյուրում է ճանապարհաշինության համար գումար հատկացվել: Համայնքի 2018թ ՏԱՊ-ում ճանապարհաշինության ոլորտի աշխատանքների ֆինանսավորման մասով ևս անհամապատասխանություն կա: Ծրագրում նախատեսվում է համայնքային բյուջեից հատկացնել 334 մլն ՀՀ դրամ⁴⁴, իսկ համայնքի բյուջեով նախատեսվել է 34,5 մլն ՀՀ դրամ:

Գծապատկեր 42. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ բնակչի հաշվով/ հազ դ⁴⁵



Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսը դինամիկայում աճել է՝ բացառությամբ 2015 թ-ի:

Թումանյան համանք


Թումանյան համայնքը վերաձևավորվել է 2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն իր մեջ ներառելով նախկին Թումանյան, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Շամուտ, Քարինջ համայնքները:

⁴⁴ <http://lori.mtdad.am/files/docs/32982.pdf> էջ 27

⁴⁵ Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Միավորվելուց հետո ընդհանուր բնակչությունը կազմել է 4621 մարդ, իսկ տարածքը 30,8 քառ կմ:⁴⁶ Նոր ձևավորված համայնքում ընդհանուր բյուջեն սկսել է դինամիկ աճել: Գծապատկեր 49-ում ներկայացված է միավորված համայնքների բյուջեները մինչ խոշորացվելը և խոշորացվելուց հետո:

Գծապատկեր 43. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ կատարված և 2018թ-ին պլանավորված բյուջեները/հազ դ/⁴⁷




Ինչպես տեսնում ենք մինչ միավորվելը համայնքների բյուջեների գումարային ցուցանիշն ավելի մեծ է եղել քան միավորվելուց հետո: 2016 թ-ին կտրուկ անկում է նկատվում միասնական բյուջեում՝ մոտ 19%, և միայն 2018 թ-ի պլանային ցուցանիշով նոր աճ է նկատվում: Քանի որ 2016 թ-ին տեղի է ունեցել դոտացիաների տրամադրման հաշվարկի մեթոդաբանության փոփոխություն դիտարկենք նաև դոտացիաների դինամիկան նշված ժամանակահատվածում:

⁴⁶ <http://lori.mtad.am/about-communities/466/>

⁴⁷ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Գծապատկեր 42. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների պետբյուջեից տրամադրվող դոտացիաները 2014-2018թթ/հազ դ⁴⁸




Գծապատկերից երևում է, որ դոտացիաների մասով նվազում եղել է 2016 թ-ին՝ 5,4%, և 2017 թ-ին այն կրկին աճել է: Ստացվում է, որ նվազումը պայմանավորված է եղել դոտացիաներով: Մեփական եկամուտների հավաքագրելիության աճը նկատվում է 2017 և 2018թթ: Անդրադառնալով հետազոտության խնդիրներին դիտարկենք ուսումնասիրվող ոլորտներին հատկացվող ֆինանսական միջոցներին և կատարվող աշխատանքներին:

Նշենք, որ համայնքապետարանից ստացված՝ աղբահանության ոլորտին վերաբերող ցուցանիշները այս դեպքում ևս չէին համապատասխանում Լոռու մարզպետարանում և Տարածքային կառավարման նախարարության կայքում տեղադրված տվյալներին, ուստի որպես հիմք վերցրել ենք Տարածքային կառավարման նախարարության կայքէջում տեղադրված տվյալները:

⁴⁸ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Գծապատկեր 47. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները 2014-2018թթ/հազ դ⁴⁹



Ոլորտին հատկացվող ծախսերը խիստ տատանվող են եղել՝ 2017 թ-ին ընհանրապես ծախս չի եղել, իսկ 2018-ին պլանավորվել է նախորդ տարիներից 4-6 անգամ շատ ծախս կատարել: Դիտարկելով ըստ վարչական և ֆոնդային մասերի նկատում ենք, որ բացի Թումանյան բնակավայրից մյուս համայնքներում կատարված ծախսերը եղել են ընթացիկ բնույթի ծախսեր: Թումանյան բնակավայրում 2014 թ-ին իրականացվել են միայն կապիտալ բնույթի ծախսեր, 2015 թ-ին միայն վարչական, 2016 և 2018 թթ և՛ վարկան և ֆոնդային (համամասնությունները տես Աղյուսակ 21-ում)

Աղյուսակ 21. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի 2014-2018թթ⁵⁰

		Թումանյան	Աթան	Ահնիձոր	Լորուտ	Շամուտ	Մարց	Քարինջ
2014	Վարչ. %	0	100	0	100	0	100	0
	Ֆոնդ. %	100	0	0	0	0	0	0
	Ընդ/հազ դ	649,6	320	0	198	0	355,8	0
2015	Վարչ. %	0	100	0	100	100	100	100
	Ֆոնդ. %	100	0	0	0	0	0	0
	Ընդ/հազ դ	564	150	0	200	156,7	300	600
2016	Վարչ. %	10	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	90	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	2433,1	-	-	-	-	-	-


⁴⁹ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

⁵⁰ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

2017	Վարչ. %	0	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	0	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	0	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	62	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	38	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	12900	-	-	-	-	-	-

Թումանյան համայնքի 2018թ ՏԱՊ-ից երևում է, որ նախատեսվում է միջբնակավայրային ճանապարհ կառուցել՝ Ահնիձոր-Աթան բնակավայրերի համար, որն արժենալու է 500 հազ դրամ:⁵¹ Սակայն ներբնակավայրային ճանապարհների մասով նախատեսված է միայն Թումանյան համայնքում իրականացնել վերանորոգման աշխատանքներ՝ 70 քառ մ՝ 1,3 մլն ՀՀ դրամ:⁵² Ստացվում է, որ մյուս բնակավայրերը կրկին անտեսված են մնում: Այս դեպքում ևս մեկ բնակչի հաշվով ծախսերը ոչ ստույգ ինֆորմացիա են տալիս՝

Գծապատկեր 48. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին 2014-2017 թթ հատկացված և 2018թ պլանավորված ֆինանսական միջոցները մեկ բնակչի հաշվով/հազ դ⁵³



Այնուամենայնիվ, նկատում ենք, որ 2018 թ-ին ճանապարհաշինության ոլորտում կտրուկ աճել է մեկ բնակչի հաշվով ծախսը՝ անգամ այն դեպքում, երբ որպես բնակչության թիվ վերցվել են բոլոր բնակավայրերի բնակիչների ամբողջական թիվը, այլ ոչ այն բնակավայրերի որտեղ իրականացվել են ճանապարհաշինական աշխատանքներ: Նշենք նաև, որ ըստ մեր կողմից իրականացված հարցումների բոլոր բնակավայրերում

⁵¹ <http://lori.mtad.am/files/docs/32978.pdf> Էջ 7
⁵² <http://lori.mtad.am/files/docs/32978.pdf> Էջ 16
⁵³ Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Ճանապարհների բարեկարգ լինելու հարցը բնակիչները գնահատել են 75% և ավել, իսկ Ահնիձոր, Լորուտ և Շամուտ բնակավայրերում խնդրի կարևորությունը 100% է գնահատվել:

ԳԼՈՒԽ 6 ԿԼՈՐ-ՍԵՂԱՆ (ԱՌԱՆՑ ՀՂՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ) ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

29 հունվարի 2019թ, ժամը 14:00-16:00,

Բեռլին Արտ հյուրանոց, ք. Գյումրի, Հաղթանակի պողոտա 25

Մասնակցում էին՝

Կլոր-սեղան քննարկման մասնակիցների գրանցման թերթիկը կցվում է:

Ներկայացումներ.

Հայկարամ Դրմեյանը ներկայացրեց «Մասնակցային մոնիտորինգ հանուն ինտելեկտի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի «Ճանապարհների սպասարկում» զեկույցը, «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի նախագահ **Խաչիկ Սահակյանը՝** Ախուրյան և Աշոցք համայնքներում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում առկա խնդիրները և բարելավման ուղիները:

Քննարկումներ և առաջարկություններ.

Բացահայտված խնդիրների շուրջ ծավալված քննարկումների արդյունքում հնչեցին մի շարք առաջարկներ.

- Համայնքային խնդիրներն, այդ թվում՝ ճանապարհների պահպանումն ու շահագործումն առավել արդյունավետ իրականացնելու համար տեղական իշխանություններին օժտել համապատասխան լիազորություններով և դրամահայթայթման նոր գործիքներով և մեխանիզմներով, մասնավորապես,
- զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից ֆինանսական շուկայի գործիքների ընձեռած հնարավորություններից օգտվելու կարգավորիչ դաշտը, օժանդակել այդ գործիքների հնարավորություններից ՏԻՄ-երի արդյունավետ օգտվելու պրակտիկայի ձևավորմանը, դրանով հնարավորություն տալ համայնքներին, օրինակ՝ ներգրավելու երկարաժամկետ փողեր առավել ընդգրկուն և արդյունավետ ծրագրեր իրականացնելու համար,
- միջհամայնքային, ինչպես նաև համայնքի տարածքով անցնող հանրապետական ճանապարհների պահպանումն ու շահագործումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով դիտարկել ՏԻՄ-երին համապատասխան պատվիրակված կամ սեփական լիազորություններով օժտելու հնարավորությունը, այդ լիազորություններն իրականացնելու համար ՏԻՄ-ի բյուջեն ապահովել լիազորությունն իրականացնելու համապատասխան ֆինանսական միջոցներով և աղբյուրներով: Հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ խոշորացման արդյունքում փոփոխվել են մի շարք միջհամայնքային ճանապարհների կարգավիճակները, որոնց պահպանման և սպասարկման համար ՏԻՄ բյուջեն չի օժտվել համապատասխան ֆինանսական միջոցներով, չեն սահմանվել համապատասխան նոր աղբյուրներ:
- Խնդիր է ճանապարհների պահպանման և շահագործման ոլորտում կառավարչական տարբեր մարմինների կողմից ընդունվող որոշումների դրույթների համաձայնեցումը և միասնական ստանդարտներին դրանց համահունչ դարձնելն ու համապատասխանության ապահովումը: Անհրաժեշտ է օժանդակել այդ հարցերի շուրջ ՏԻՄ կարողությունների զարգացմանը:

- Օժանդակել ՏԻՄ-երին սեփական գործիքներով (նորմերի սահմանում, կարգերի ընդունում, վճարների, տուրքերի և այլ գործիքներ) ճանապարհների պահպանման և շահագործման նկատմամբ արդյունավետ հսկողություն իրականացնելու պրակտիկայի զարգացման գործում:
